



ԶԵԿՈՒՅՑ

Զինվորական հանցագործությունների վերաբերյալ դատական գործերի
դիտարկման արդյունքներ

Հեղինակային խումբ՝ Միրանուշ Սահակյան,
Արաքս Մելքոնյան,
Ավետիք Մեջլումյան

Զեկույց. Ջինվորական հանցագործությունների վերաբերյալ դատական գործերի դիտարկման արդյունքներ / Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ. – Եր.: Վան Արյան, 2012. - էջ:

Զեկույցն ամփոփում է 2009-2010թթ. զինվորական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի դատական մոնիթորինգի արդյունքները: Զեկույցում ներկայացված է զինվորական հանցագործություններով դատական գործերի՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափանիշներին համապատասխանության խնդիրը, բացահայտված են ռազմաքրեաիրավական ոլորտում հայտնված զինծառայողի իրավունքների խախտման ռիսկերն ու դատական քննության ընթացքում հանդիպող առավել տարածված հիմնախնդիրները, առաջարկված են դրանց հաղթահարման իրատեսական մոտեցումներ՝ ուղղված ՀՀ արդարադատության համակարգի՝ միջազգային նորմերին ու չափորոշիչներին համապատասխանեցմանը:

Բերված առաջարկությունները կարող են օգտակար գտնվել իրավունքի ոլորտի մասնագետների, ինչպես նաև՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ խթանելու համար:

Բովանդակություն

Ներածություն.....	4
Հապավումների ցանկ	5
Ծրագրի նկարագրությունը և մեթոդաբանությունը	6
Ընդհանուր տեղեկություններ 2010 թվականին ՀՀ դատարանների կողմից քննված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների և ծրագրի շրջանակներում դիտարկված գործերի վերաբերյալ.....	10
Իրավախախտում կատարած անձանց սոցիալական բնութագրիչներն ու դրանցով պայմանավորված օրինաչափությունները.....	16
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը.....	21
Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահպանումը կարգապահական և քրեական պատասխանատվության համատեքստում	30
Հրապարակային դատաքննության իրավունքը	38
Պաշտպանության իրավունքը.....	44
Կողմերի հավասարության, մրցակցության սկզբունքի պահպանումը և ex parte շփումների բացառումը...	50
Ճնշումներից և ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը	57
Ամբաստանյալի անմեղության կանխավարկածի ապահովումը	62
Վկաների և տուժողների պաշտպանվածությունը.....	66
Դատական քննության արագացված կարգի կիրառման պրակտիկան զինվորական հանցագործություններով	73
Պատժի քաղաքականությունը զինվորական գործերով	78
Փորձագիտական հարցազրույցների արդյունքում վերհանված հիմնախնդիրները	96
Ինքնագրաքննության հիմնախնդիրը դատարանների, դատախազության և քննչական մարմինների աշխատանքում	96
Մեղադրյալի իրավունքների պաշտպանվածությունը մինչդատական վարույթի ընթացքում	96
Ճնշումներից և ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքի խախտումները.....	98
Քննչական մարմինների գործունեության հետ կապված հիմնախնդիրներ	100
Փորձագիտական կառույցների գործունեության հիմնախնդիրները	102
Հիմնախնդիրներ՝ կապված հետախուզական գործողությունների անարդյունավետության հետ	102
Դատավորի անձը և գործի քննությունը	103
Դատախազների և պաշտպանների կարիքները.....	103
Պատժի քաղաքականություն.....	105
Ամփոփում.....	106
Առաջարկություններ.....	113
Ա. Փորձագետների կողմից ներկայացված առաջարկությունները	113
Բ. Կազմակերպության առաջարկությունները.....	114
Հավելված	120

Ներածություն

Զինվորական անձնակազմի՝ Մահմանադրության և միջազգային պայմանագրերով նախատեսված իրավունքների հարգումը և դրանց երաշխավորումն ունեն հույժ կարևորություն: Զինված ուժերում մարդու իրավունքների հարգումը նպաստում է հասարակության մեջ զինվորականների ինտեգրմանը, բանակում չարաշահումների նվազմանը, բարձրաստիճան պաշտոնյաների և հրամանատարների կողմից ճնշումների և հարկադրանքի գործադրման դեպքերի նվազմանն ու բացառմանը:

ՀՀ-ում իրականացվող ռազմական բարեփոխումների պայմաններում կարևոր է հատկապես զինված ուժերում մարդու իրավունքների խախտման ռիսկերի, զինված ուժերում հանցագործություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրությունը, քրեաիրավական ոլորտում հայտնված զինճառայողի պաշտպանվածությունը: Առանց բանակում հանցավորության մակարդակի նվազեցման և մեղադրյալ/ամբաստանյալ զինճառայողների իրավունքների լիարժեք երաշխավորման հնարավոր չէ հասնել բանակի մարտունակության բարձրացմանը: Զինվորական հանցագործությունների բացահայտման ընթացքում թույլ տրվող խախտումները, իրավունքների անհարկի սահմանափակումները, պատժելիության սկզբունքի ոչ հետևողական իրականացումը, պատժի քաղաքականության ոչ միասնականությունը, ճնշումները վնասում են հենց զինվորական ծառայության շահերին, բացասական բարոյահոգեբանական ազդեցություն թողնում զինճառայողների և վերջիններիս մարտունակության վրա՝ վնասելով ռազմական անվտանգությունը, հետևաբար նաև՝ պետության պաշտպանունակությունը:

Ռազմաքրեաիրավական ոլորտում հայտնված զինճառայողի իրավունքների պաշտպանվածության հարցի ուսումնասիրության նպատակով 2010 թվականին «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի» ֆինանսավորմամբ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունն իրականացրել է դատական գործերի մոնիթորինգ:

Զեկույցի պատրաստման համար առաջնային աղբյուր են հանդիսացել դատական գործերի վերաբերյալ դիտորդների ներկայացրած ընթացիկ և վերջնական զեկույցները: Զեկույցներում ամփոփված տեղեկատվությունը մուտքագրվել և մշակման է ենթարկվել HURIDOCs կազմակերպության կողմից ստեղծված տվյալների առցանց բազայի միջոցով: Տվյալների բազան թույլ է տվել հավաքված տեղեկատվությունը քանակական և որակական մշակման ենթարկել, այդ թվում՝ ստանալ անհրաժեշտ վիճակագրական տվյալներ:

Դիտարկված դատաքննությունների վերլուծությունն իրականացվել է զլխավորապես այդ վարույթների՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված, ինչպես նաև՝ արդար դատաքննության ներպետական չափանիշներին համապատասխանության հարցը որոշելու միջոցով:

Զեկույցում բերված առաջարկությունները կարող են օգտակար գտնվել իրավունքի ոլորտի մասնագետների, ինչպես նաև՝ կարևոր օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ խթանելու համար:

Հապավումների ցանկ

ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիա
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՌՌ	Ռազմական ոստիկանություն
ՔԴՕ	ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր
ՔՕ	ՀՀ քրեական օրենսգիրք

Ծրագրի նկարագրությունը և մեթոդաբանությունը

Մոնիթորինգն իրականացվել է 2010թ. ապրիլից մինչև դեկտեմբեր, ներառել է ՀՀ ողջ տարածքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների վարույթում գտնվող գործերը: Այն դեպքերում, երբ իրականացվել են արտագնա նիստեր գորամասերում կամ ԼՂՀ տարածքում, այդ գործերը ևս ներառվել են մոնիթորինգի ենթակա գործերի ցանկում:

Դիտարկման ենթակա զինվորական հանցագործությունների շրջանակում ներառվել են զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև գորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունները:

Ծրագրի իրականացման շրջանակներում դրվել են հետևյալ խնդիրները.

✓ համակարգված կերպով տեղեկություններ հավաքել զինվորական հանցագործություններով դատական գործերի՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ,

✓ բացահայտել ռազմաքրեաիրավական ոլորտում հայտնված զինծառայողի իրավունքների խախտման ռիսկերը և ՀՀ զինված ուժերում հանցավորություն ծնող պատճառներն ու իրավախախտմանը նպաստող գործոնները, որքանով դրանք պարզվել են դատական քննության ընթացքում,

✓ ուսումնասիրել իրավակիրառական պրակտիկան,

✓ ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված քրեական արդարադատության իրականացման բարելավմանը:

Մոնիթորինգն իրականացվել է 3 փուլով.

1. նախապատրաստական, որի ընթացքում ուսումնասիրվել է ոլորտին վերաբերող օրենսդրությունը, մշակվել են հարցաշարերը, ծրագրի նյութական հենքը կազմող այլ փաստաթղթերը, դիտորդի վարքագծի կանոններն ու ուղեցույցը, կատարվել է դիտորդների ընտրությունն ու ուսուցումը, ինչպես նաև՝ իրականացվել են այլ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ,

2. տեղեկատվության հավաքման, որի ընթացքում ստացվել են վերլուծության համար անհրաժեշտ տվյալներն ու տեղեկությունները,

3. Մոնիթորինգի արդյունքների ամփոփման և հրապարակման փուլ, որի ընթացքում իրականացվել է հավաքված տվյալների մշակումը, վերլուծությունը, ամփոփումն ու հաշվետվության պատրաստումը:

Մոնիթորինգի գործիք-հարցաշարը բաղկացած էր միմյանցից հարաբերականորեն անկախ բաժիններից¹, որոնց ցուցանիշերի համադրության արդյունքում նախատեսվում էր ստանալ

¹ Հարցաշարը բաղկացած էր հետևյալ բաժիններից և ենթաբաժիններից.

Ընդհանուր տեղեկություններ, որտեղ ամփոփվել են ամբաստանյալի անձնական տվյալները, վերագրվող հանցագործության մանրամասները, առաջադրված մեղադրանքը,

Խափանման միջոցների բաժին, որտեղ ներկայացված էր ամբաստանյալի նկատմամբ վարույթի ընթացքում ընտրված խափանման միջոցը, ընթացակարգը, ամսաթիվը,

Ինքնաբացարկի և բացարկի միջնորդությունների բաժին, որտեղ ներկայացվել են դատական քննության ընթացքում ներկայացված ինքնաբացարկի և բացարկի միջնորդությունները, դրանց հիմնավորումները, որոշումները,

Դատական նիստի նախապատրաստական մասում տեղ են գտել դատական քննության համանուն փուլում իրականացվող գործողությունների վերաբերյալ հարցադրումներ,

դիտարկվող երևույթի քանակական և որակական նկարագիրը, անել համապատասխան առաջարկություններ համակարգի արդյունավետության բարձրացման և թերությունների չեզոքացման համար:

Մոնիթորինգը չի սահմանափակվել դատական լսումների ժամանակ ձեռք բերված տեղեկատվությամբ: Այն ընդգրկել է նաև այն բոլոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել դատարանի շենքում և նրա շրջակայքում:

Մոնիթորինգի արդյունքում ստեղծված տվյալների բազան իրենից ներկայացնում է միասնական տեղեկատվական դաշտ՝ տեղեկատվության երեք մակարդակներով.

✓ գործին վերաբերող օբյեկտիվ փաստագրական տվյալներ (օրինակ՝ դատական նիստերի քանակ, ամբաստանյալի արարքի որակումն ըստ ՔՕ հոդվածների, պատժատեսակ, պատժաչափ և այլն),

✓ տվյալներ դատական գործի ընթացքի վերաբերյալ, որոնք ձեռք են բերվել մոնիթորինգն իրականացնողների կողմից անմիջական դիտարկումների միջոցով: Այս տվյալները հիմնականում նկարագրում են դատավարական գործողությունները, դատական նիստերի ընթացքում տեղ գտած տարատեսակ գործընթացներն ու ընթացակարգերը,

✓ մոնիթորինգ իրականացնողների գնահատականները, մեկնաբանություններն ու լրացուցիչ դիտարկումները վերը նշված դատավարական գործողությունների վերաբերյալ: Օրինակ՝ դատական քննության արագացված կարգի պարագայում, բացի դատավորի կողմից ամբաստանյալին ուղղված հարցերի և դրանց պատասխանների վերարտադրությունից, դիտորդները ներկայացրել են նաև իրենց դիտարկումներն այն մասին, թե արդյոք ամբաստանյալն ինքնուրույն էր պատասխանում հարցերին թե պաշտպանի (կամ այլ անձի)

Ապացույցների հետազոտում բաժինը ներառել է դատաքննության ընթացքում հետազոտված բոլոր ապացույցների նկարագրությունները և բաղկացած է եղել հետևյալ ենթաբաժիններից՝ Ամբաստանյալ/ների հարցաքննությունը, Տուժող/ների հարցաքննությունը, Վկա/ների հարցաքննությունը, Այլ ապացույցների հետազոտումը,

Միջնորդությունների ներկայացում և քննարկում բաժնում արտացոլվել են դատական քննության ընթացքում կողմերի և դատավարության մասնակիցների կողմից դատարանին ներկայացված միջնորդությունները, դրանց քննարկման արդյունքում կայացված որոշման մանրամասները,

Դատական վիճաբանություններ բաժնում ներկայացվել են դատական քննության համապատասխան փուլում կողմերի ներկայացրած ճառերը, ռեպլիկները և ամբաստանյալ/ների վերջին խոսքը,

Դատավճռի կայացումը և հրապարակումը բաժնում ներկայացվել է դատարանի կողմից կայացված դատական ակտի բովանդակությունը և այլ մանրամասներ,

Արդար դատաքննության հատուկ ասպեկտներ բաժնում արտացոլվել են արդար դատաքննության իրավունքի մաս կազմող դատավարական երաշխիքների վերաբերյալ հարցադրումներ, բաղկացած է եղել հետևյալ ենթաբաժիններից՝ Հրապարակային դատական քննության իրավունքը, Խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների քննություն և «արատավորված» ապացույցների օգտագործելիություն, Մեղքն ընդունելու համար ճնշումների առկայություն, Անմեղության կանխավարկածի իրավունք, Կողմերի հավասարություն, Մրցակցային դատավարություն, Ամբաստանյալի պաշտպանության իրավունք, Դատավորի անաչառություն և պատշաճ վարքագիծ, Դատական քննության արագացված կարգ բաժնում տեղ են գտել դատական քննության արագացված կարգով քննված գործերին վերաբերող հարցեր,

Թարգմանիչ ունենալու իրավունք,

Պաշտպանության միջոցների կիրառում բաժինը վերաբերել է դատավարության կողմերի նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցներին

Մինչդատական վարույթ բաժնում ամփոփվել են քրեական գործով նախնական քննության ընթացքում ամբաստանյալի մի շարք իրավունքների առնչվող հարցադրումներ, որոնք վերաբերում էին ձեռքարկված անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքին, Իրավաբանական խորհրդատվություն ստանալու և պաշտպանությանը նախապատրաստվելու համար բավարար ժամանակ ունենալու և համապատասխան միջոցներից օգտվելու իրավունքին, Կարճ ժամանակում դատավորի առջև կանգնելու և կալանավորման իրավաչափությունը վիճարկելու իրավունքին

Հավելված բաժնում դիտորդների կողմից ներկայացվել են դիտարկումների ընթացքում արձանագրված, սակայն վերոգրյալ բաժիններում տեղ չգտած իրավիճակներին վերաբերող տեղեկությունները:

հուշումների հիման վրա, մեխանիկորեն էր պատասխանում դրանց, թե ուշադիր ունկնդրում և փորձում էր հասկանալ հարցի իմաստը և այլն:

Մոնիթորինգ իրականացնողների հետ պարբերաբար իրականացվել են քննարկումներ՝ վերլուծության որակական մասի ապահովման նպատակով: Վերլուծության գործընթացն ունեցել է ինչպես քանակական մաս, որում հաշվի են առնվել հետազոտության գործիքի քանակական տվյալների համեմատությունները, համադրությունները, միջին գործակիցները, ստացված տվյալների դինամիկան և այլն, այնպես էլ որակական մաս, որի արդյունքում բացահայտվել են լատենտ գործոնները, ոչ ֆորմալացված փոխհարաբերությունները, քանակական տվյալներում չդրսևորվող երևույթները, սուբյեկտիվ ընկալումները:

Ծրագրի համակարգողի կողմից յուրաքանչյուր շաբաթ կազմվել է դատարանների կողմից քննության ենթակա զինվորական գործերի ցուցակը, որից նախապես մշակված չափանիշների հիման վրա ընտրվել են դիտարկման ենթակա գործերը: Ընտրանքի ներկայացուցչականության ապահովման համար հաշվի են առնվել գլխավոր համախմբության հատկանիշները, որոնք հնարավորինս արտացոլվել են ընտրանքային համախմբության մեջ:

Գործերն ի հայտ են բերվել Դատալեքս տեղեկատվական համակարգի, դատարանների շենքեր այցելելու և դատարաններ կատարված պարբերական հեռախոսազանգերի միջոցով: Յուրաքանչյուր դատական գործի դիտարկման համար ընտրվել է մեկ կամ մի քանի դիտորդ՝ կախված գործի բարդությունից: Յուրաքանչյուր գործ դիտարկվել է՝ սկսած առաջին դատական նիստից մինչև դատավճռի հրապարակումը:

Յուրաքանչյուր դատական գործի վերաբերյալ վերջնական զեկույցը դիտորդի կողմից ներկայացված կից փաստաթղթերի և ձայնագրառումների հետ (եթե այդպիսիք առկա են եղել) վճռի հրապարակումից հետո՝ 3 օրվա ընթացքում, ուղարկվել է ծրագրի ղեկավարին: Զեկույցում զետեղված տվյալների ստույգությունը և ամբողջականությունը ճշտելուց հետո դրանք մուտքագրվել են առցանց բազա:

Մոնիթորինգն իրականացրել են տասը դիտորդներ՝ ծրագրի համակարգողի վերահսկողությամբ: Դիտորդները ներգրավվել են բաց մրցույթի հիման վրա և նրանց ներկայացվել են մի շարք պահանջներ, այդ թվում՝ բարձրագույն կրթության առկայություն (իրավագիտություն, ինչպես նաև հարակից հումանիտար մասնագիտություններ), ինստիտուցիոնալ և անձնական անկախություն, օբյեկտիվություն, կարգապահություն: Ընտրված դիտորդների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ ծրագրի խնդիրների և մեթոդաբանության, ինչպես նաև քրեական դատավարության օրենսդրության, արդար դատաքննության միջազգային չափանիշների և հարցաթերթիկների լրացման կարգի վերաբերյալ:

Ընտրված դիտորդները ստանձնել են դիտորդի վարքագծի կանոններին ենթարկվելու պարտականություն:

Զեկույցը պատրաստվել է ծրագրի ղեկավարի և իրավաբան-փորձագետների կողմից, ովքեր ունեն մասնագիտացում և փորձառություն մարդու իրավունքների և քրեական իրավունքի բնագավառներում: Զեկույցի նախնական տեքստն ուղարկվել է ներքին և արտաքին փորձագիտական կարծիքների:

Զեկույցում վկայակոչված բոլոր դատական գործերն իրական են, սակայն ապահովվել է գործն անհատականացնող տվյալների անանունությունը:

Ուսումնասիրության ընթացքում տեղեկատվություն է ձեռք բերվել նաև երկրորդային աղբյուրներից, ինչպիսիք են, օրինակ՝ փորձագիտական հարցազրույցները, գործի մասնակիցներից և դատարանից վերցված գործին վերաբերող փաստաթղթերը և այլն: Փորձագիտական հարցազրույցներն իրականացվել են դատավորների, դատախազների և

պաշտպանների հետ²: Փորձագիտական հարցազրույցների միջոցով ստացված տեղեկատվությունը ներկայացված է առանձին՝ տարբերակելու համար բուն մոնիթորինգի շրջանակներում ստացված տվյալներից:

Փորձագիտական հարցազրույցներն անհրաժեշտ էին այնպիսի խնդիրների վերհանման և ուսումնասիրության համար, որոնք հնարավոր չէր ուղղակի դիտարկման ենթարկել: Հատկապես խնդրահարույց էր մինչդասական փուլի վերաբերյալ տեղեկատվության ստացումը, օրինակ՝ մինչդասական վարույթում անձի ազատության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ: Դատավարության մասնակիցների կողմից անձնական ազատության իրավունքի առնչությամբ, որպես կանոն, հարցեր չէին բարձրացվում (հատկապես արագացված դատաքննությունների դեպքում): Հետևաբար, դրանք հնարավոր չէր պարզաբանել բուն մոնիթորինգի շրջանակներում: Սակայն փորձագետների (դատավորներ, փաստաբաններ, դատախազներ) հետ անցկացված հարցազրույցների շնորհիվ վեր են հանվել բազմաթիվ կարևոր հիմնախնդիրներ և ստացվել են արժեքավոր տվյալներ և առաջարկներ:

Բացի այդ, փորձագիտական հարցազրույցներով ստացվել են անհատական կարծիքներ և դիրքորոշումներ դատաքննության փուլի այնպիսի հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք ևս՝ հնարավոր չէր ամբողջությամբ հասկանալ առանց լրացուցիչ մեկնաբանությունների, օրինակ՝ պատժի քաղաքականության ինչ-ինչ օրինաչափությունների, իրավաբանական օգնության տրամադրման օրենսդրական և ինստիտուցիոնալ սահմանափակումների, փորձաքննությունների իրականացման և այլ հիմնախնդիրների վերաբերյալ³:

Դիտարկումների իրականացման ողջ ընթացքում ընդհանուր իրավասության դատարանները և դատավարության մասնակիցները ցուցաբերել են անգնահատելի աջակցություն և համագործակցություն դիտարկումների անցկացման գործում՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն դատական գործերի վերաբերյալ: Միաժամանակ, անհրաժեշտ է ընդգծել Դատական դեպարտամենտի պատրաստակամությունը՝ հետազոտության համար անհրաժեշտ տվյալների տրամադրման հարցում կազմակերպությանն օժանդակելու համար:

² Հարցազրույցները վարվել են երեք դատավորների, երեք դատախազների և ութ փաստաբանների հետ:

³ Փորձագիտական հարցազրույցի հարցաշարում հարցերի հարաբերակցությունը տարբերվել է ըստ փորձագիտական խմբի (կախված նրանից՝ հարցվողը դատախազ էր, դատավոր, թե՛՝ փաստաբան) և ներառել է ներքոնշյալ թեմաները՝ Ձինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունները, Ձինվորական գործերով իրավաբանական օգնության տրամադրման հիմնախնդիրները (սախաքննության և դատական քննության շրջանակներում), Ձինվորական գործերով պատժի քաղաքականության օրինաչափությունները, Նախաքննության փուլում խափանման միջոցի ընտրությունը և պաշտպանից հրաժարվելը, Մինչ փաստաբանի ներկայանալը քննչական գործողությունների իրականացումն ու լռություն պահպանելու իրավունքի խախտումները, Վկաների իրավունքների խախտումները, Ամբաստանյալների իրավունքների խախտումները, Միջնորդությունների մերժման և բավարարման հիմնախնդիրներն ու օրինաչափությունները, Փորձաքննությունների իրականացման հետ կապված հիմնախնդիրները, Փաստաբանների կարիքները, Քննչական մարմնի անկախության հետ կապված հիմնախնդիրները, Դատախազության աշխատանքի արդյունավետությունն ու խնդիրները, Դատախազների կարիքները, Դատարանի անկախության հիմնախնդիրն ու դատարանի գործունեության այլ սահմանափակումները, Դատավորների կարիքները:

Ընդհանուր տեղեկություններ 2010 թվականին ՀՀ դատարանների կողմից քննված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների և ծրագրի շրջանակներում դիտարկված գործերի վերաբերյալ

Աղյուսակ 1. 2010թ. ՀՀ դատարանների կողմից քննված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վիճակագրությունն ըստ ՔՕ հոդվածների⁴

	ՔՕ հոդվածներ	Գործերի քննությունն ավարտվել է հաշվետու ժամանակաշրջանում				Օրինական ուժի մեջ է մտել	Բողոքարկվել է Վերաքննիչ դատարան	Այդ թվում՝ կասեցված
		Քննվել է ըստ էության և դատավճիռ կայացվել	Որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին	Որոշում է կայացվել անմեղադատյալների նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին	Ընդամենը ավարտվել են գործեր			
Հրամանը չկատարելը	356	1	0	0	1	1	0	0
Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը	358	24	0	0	24	16	8	0
Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում	359	84	1	0	85	70	12	1
Զինծառայողին վիրավորանք հասցնելը	360	23	0	0	23	17	3	0
Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը	361	162	1	1	164	134	15	1
Դասավրությունը	362	15	0	0	15	11	4	0
Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը	363	30	1	0	31	24	6	1
Զինվորական ծառայության պարտականությունները	364	25	0	0	25	23	2	0

⁴ Ներկայացված տվյալները ստացվել են ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված հարցման հիման վրա:

կատարելուց հրաժարվելը								
Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	365	12	0	0	12	10	2	1
Ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը	369	1	0	0	1	1	0	0
Ռազմական գույքը վատնելը	371	0	0	0	0	0	0	0
Ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը	372	3	0	0	3	3	0	0
Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը	373	7	0	0	7	6	1	0
Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը	375	67	0	0	67	44	15	0
Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ	376	5	0	0	5	3	2	0
Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը	377	9	0	0	9	7	0	0
Ընդհանուր		468	3	1	472	370	70	4

Մոնիթորինգի շրջանակներում զինվորական գործերով դատավարությունների դիտարկումներն իրականացվել են 2010թ. ապրիլի 1-ից մինչև 2010թ. դեկտեմբերի 28-ը: Դիտարկվել են 181 գործեր, որոնցում ներգրավված են եղել ընդհանուր թվով 290 ամբաստանյալներ:

Աղյուսակ 2. Մոնիթորինգի շրջանակներում դիտարկված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններով դատական գործերի վիճակագրությունն ըստ ՔՕ հոդվածների

	ՔՕ հոդվածներ	Հոդվածի կրկնման հաճախականությունը
Հրամանը չկատարելը	356	0
Պետին դիմադրելը կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելը	357	3
Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը	358	6

Զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում	359	49
Զինձառայողին վիրավորանք հասցնելը	360	20
Չորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը	361	61
Դասալքությունը	362	2
Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը	363	18
Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը	364	3
Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	365	20
Պահակային կամ կայագորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը	367	4
Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը	368	2
Ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը	369	3
Ռազմական գույքը վատնելը	371	0
Ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը	372	0
Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը	373	1
Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը	375	34
Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ	376	9

Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը	377	4
--	-----	---

Աղյուսակ 3. Մոնիթորինգի շրջանակներում դիտարկված ընդհանուր բնույթի հանցագործություններով դատական գործերի վիճակագրությունն ըստ ՔՕ հոդվածների⁵

ՔՕ հոդվածներ	Դիտարկված գործեր
104	5
110	2
112	4
117	2
138	1
139	2
140	1
141	2
147	1
176	7
177	55
178	10
179	3
179	6
182	3
213	1
235	3
238	1
239	1
244	1
258	14
268	1
306	1
314	1
316	1
324	3
327	7
Ընդամենը	139

Աղյուսակ 4. Մոնիթորինգի շրջանակներում դիտարկված ընդհանուր բնույթի հանցագործություններով դատական գործերի վիճակագրությունն ըստ հանցագործությունների օբյեկտների⁶

⁵ Աղյուսակ 2-ում, 3-ում և 4-ում ներկայացված է դիտարկված գործերի շրջանակներում հոդվածների հանդիպման հաճախականությունն՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք այլ հոդվածների հետ համակցությամբ են հանդես եկել թե ոչ: Այս պատճառով դրանց ընդհանուր թվաքանակն (382) էապես գերազանցում է ամբաստանյալների թիվը (290):

⁶ Տվյալները բերված են՝ առանց հանցագործության սուբյեկտների տարանջատման (զինծառայողներ թե քաղաքացիական անձինք): Այնուամենայնիվ, քանի որ քաղաքացիական անձանց թիվը չի գերազանցում

Հանցագործությունների օբյեկտներ	Դիտարկված գործեր
Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ	13
Մեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ	6
Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ	1
Մեփականության դեմ ուղղված հանցագործություններ	84
Տնտեսական գործնեության դեմ ուղղված հանցագործություններ	1
Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ	6
Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ	14
Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ	1
Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ	1
Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ	1
Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ	11

Ինչպես տեսնում ենք, ըստ հանցագործությունների օբյեկտների, ընդհանուր բնույթի հանցագործություններում գերակշիռ տեղ են զբաղեցնում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները (60%), որին հետևում են հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններն (10%) ու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները (9%): Մեփականության դեմ ուղղված հանցագործությունների բավականին բարձր տոկոսը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է բավարար ուշադրություն դարձնել հատկապես այս հանցագործության տարածվածության պատճառներին: Մասնավորապես, հնարավոր պատճառների շարքում կարող է լինել զինծառայողների կողմից գումարի հայթայթման անհրաժեշտությունը: Սա իր հերթին կարող է պայմանավորված լինել զինծառայողների կողմից սննդի, հագուստի կամ այլ պարագաների անձնական կարիքները հոգալու անհրաժեշտությամբ, զորամասում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությամբ (օրինակ՝ «հեղինակավոր» զինծառայողների կողմից գումար պահանջելը, մոլախաղերի արդյունքում պարտված գումարը հայթայթելը) և այլն:

ամբաստանյալների ընդհանուր թվի 8%-ը, առկա տվյալները թույլ են տալիս եզրահանգումներ կատարել զինծառայողների կողմից կատարված առավել տարածված հանցագործությունների վերաբերյալ:

2010թ. ՀՀ դատարանների կողմից քննված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դատարաններից ստացված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2010 թվականի ամենատարածված երկու հանցագործություններն էին.

գործամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելը - 164 դեպք (35%),

զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում - 85 դեպք (18%):

Ծրագրի շրջանակներում դիտարկված գործերի համախմբությունում մեծ տոկոս են կազմում հետևյալ երկու հանցագործությունները.

գործամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելը – 28%,

զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում – 25%:

Ինչպես տեսնում ենք վերը բերված տվյալներից, թե՛ դատարանների կողմից քննված, թե՛ մոնիթորինգի շրջանակներում դիտարկված առավել մեծ տարածում ունեցող երկու հանցագործությունները (զինվորական կարգի դեմ ուղղված) համընկնում են: Տարբերվում է միայն մոնիթորինգի շրջանակներում դրանցից յուրաքանչյուրի ներկայացվածության տոկոսը, ինչը, սակայն, էական ազդեցություն չունի ընտրանքի ներկայացուցչականության վրա:

2010թ. ՀՀ դատարանների կողմից քննված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դատարաններից ստացված վիճակագրությունն ի հայտ է բերում մի շարք հատկանշական հանգամանքներ: Քննված 472 գործերից միայն 3 (0,6%) դեպքերում է որոշում կայացվել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Եվս մեկ դեպքում որոշում է կայացվել անմեղսունակների նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին: Գործերից և ոչ մեկում դատարանի կողմից արդարացման դատավճիռ չի կայացվել:

Դիտարկումների ենթարկված գործերով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործը կարճելու վերաբերյալ դատարանների կողմից կայացվել է չորս դատական ակտ: Բոլոր դեպքերում էլ մեղադրանքից հրաժարվել է մեղադրողը:

Աղյուսակ 5. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ծանր հետևանքներ առաջացրած և մոնիթորինգի շրջանակներում դիտարկված հանցագործություններն ըստ ՀՀ քր. օր. հոդվածների⁷

ՔՕ հոդվածներ	Դիտարկված գործեր
358.2.3	8
368.2	3
369.2	3
375.2	3
376.2	5
377.1	4
Ընդամենը	26

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ծանր հետևանքներ առաջացրած 6 հանցագործություններ ունեցել են մահվան ելք, որոնցից 4-ը՝ 375.2, 2-ը՝ 376.2 հոդվածով:

⁷ Աղյուսակ 4-ում ներկայացված է դիտարկված գործերի շրջանակներում հոդվածների հանդիպման հաճախականությունը:

Իրավախախտում կատարած անձանց սոցիալական բնութագրիչներն ու դրանցով պայմանավորված օրինաչափությունները

Ա. Կրթություն

Զինվորական գործերով անցնող ամբաստանյալների 19%-ը բարձրագույն, 4%-ը՝ թերի բարձրագույն կրթություն ունեն: Միջնակարգ և թերի միջնակարգ կրթությամբ անձանց թվաքանակն է, համապատասխանաբար, 52% և 17%, ինչը նշանակում է, որ միջնակարգ և թերի միջնակարգ կրթությամբ անձանց ընդհանուր տոկոսային համախմբությունը կազմում է մոտ 69%:

Վերլուծության տեսանկյունից նշանակալի չէ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող անձանց թիվը՝ 3%: Եվս 5%-ի վերաբերյալ տվյալները բացակայում են:

Կրթական մակարդակը և գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը: Առանձին հանցատեսակներով կրթական մակարդակի և վերագրվող արարքի միջև հնարավոր է որոշակի օրինաչափություններ վեր հանել: Մասնավորապես, ՔՕ 361-րդ հոդվածով (գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը) մեղադրվող անձանց մոտ 83%-ն ունի միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն, ինչը 10%-ով բարձր է տարբեր հանցատեսակներով մեղադրվող միջնակարգ և թերի միջնակարգ կրթությամբ անձանց **ընդհանուր տոկոսից** (69%):

Տվյալ հոդվածով մեղադրվող անձանց միայն 7,4%-ն ունի բարձրագույն կրթություն, մինչդեռ տարբեր հանցատեսակներով մեղադրվող անձանց շրջանակում այդ թիվը կազմում է 18,1%: Այսպիսով՝ ընդհանուր թվից շուրջ 11%-ով **ցածր լինելը** բարձրագույն կրթությամբ և 10%-ով **բարձր լինելը** միջնակարգ և թերի միջնակարգ կրթությամբ անձանց շրջանում, թույլ է տալիս եզրակացնել, որ կրթական մակարդակն էական դեր ունի տվյալ արարքի կատարմանը գուցակցող գործոնների շարքում:

Ավելին, ակնհայտ է ևս մեկ օրինաչափություն նույնպես. նշյալ 7,4%-ը կազմող բարձրագույն կրթությամբ անձինք բոլորն էլ սպաներ են և մեղադրվում են 361-րդ հոդվածի 3-րդ մասով: Այսպիսով՝ մոնիթորինգի ենթարկված դատական գործերից և ոչ մեկում չկան 361-րդ հոդվածով մեղադրվող և բարձրագույն կրթություն ունեցող ժամկետային զինծառայողներ:

Կրթական մակարդակը և անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը: ՀՀ քր. օր. 363-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման և զինծառայողների կրթական մակարդակի միջև նույնպես նկատվում է որոշակի օրինաչափություն: Այս հոդվածով մեղադրվողների մոտ 33%-ը բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն ունեցողներն են, մոտ 55%-ը՝ միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողները: Ճիշտ է, տվյալ հոդվածով մեղադրվող միջնակարգ և թերի միջնակարգ կրթությամբ անձանց թիվը 20 տոկոսով բարձր է, սակայն, եթե հաշվի առնենք բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն ունեցող զինծառայողների համամասնությունը զինծառայողների ընդհանուր թվաքանակի մեջ, ապա 33%-ը պետք է ակնկալված օրինաչափությունը գերազանցող բացասական ցուցանիշ համարել:

Այսպիսով՝ համադրելով ՀՀ քր. օր. 361 և 363-րդ հոդվածներով մեղադրվող անձանց կրթական մակարդակները, կարելի է եզրակացնել, որ բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք առավել քիչ են հակված գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելուն, այսինքն՝ ծառայության իրականացման նկատմամբ ցուցաբերում են պատասխանատվություն և/կամ գիտակցում են իրենց արարքի հնարավոր հետևանքները: Այն փաստը, որ մոնիթորինգի ենթարկված 181 դատական գործերում չեն եղել 361-րդ հոդվածով մեղադրվող և բարձրագույն կրթություն ունեցող ժամկետային զինծառայողներ, ասվածի վկայությունն է: Մյուս կողմից,

սակայն, առավել բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք առավել հաճախ են հակված անդամախեղության, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելուն, քան առավել ցածր կրթական մակարդակ ունեցողները:

Բ. Տարիք


Զինծառայող ամբաստանյալների տարիքային կազմը և, տարիքից կախված, իրավախախտումների բնույթը: Զինվորական գործերով անցնող ամբաստանյալների միջին տարիքը 23, նվազագույնը՝ 18, առավելագույնը՝ 51-ն է: Հանցագործությունների 67%-ից ավելին բաժին է ընկնում 18-22 տարեկանների տարիքային խմբին: 23-51 տարեկանների շրջանում հանցագործությունների քանակն ըստ տարիքի նվազման միտում է ցուցաբերում և համեմատաբար հավասարաչափ է բաշխված բոլոր տարիքային միջակայքերում:

Հատկանշական է, որ ամբաստանյալների միայն 8%-ն է 18 տարեկան, մինչդեռ 19 և 20 տարեկանների տոկոսային հարաբերակցությունը համապատասխանաբար 25,8 և 22,2% է: Քանի որ 18 տարեկանների զինծառայության շրջանը համընկնում է ժամկետային զինծառայության սկզբնական փուլի հետ, ուստի, կարելի է եզրակացնել, որ իրավախախտումները կատարվում են հիմնականում զինվորական ծառայության հետագա ամիսներին կամ երկրորդ տարվա ընթացքում: Այս տվյալները ցույց են տալիս, որ իրավախախտման հավանականության աճն ուղիղ համեմատական է նորակոչիկների զինծառայության փուլերին. որքան երկար է զինծառայության ժամանակահատվածը, այնքան մեծանում է իրավախախտ վարքի հավանականությունը:

Տարիքից կախված՝ աճում են նաև ՔՕ այն հոդվածների ու դրանց համադրությունների թիվը, որոնցով մեղադրվում են ամբաստանյալները: Այսպես, 18 տարեկանների շրջանում մեղադրանքներն առաջադրված են ՔՕ-ի 12 հոդվածներով: 12-ից միայն մեկ դեպքում է առկա ՔՕ-ի 2 հոդվածների համադրություն: 19 տարեկանների շրջանում մեղադրանքներն առաջադրված են ՀՀ ՔՕ-ի 29 հոդվածներով և/կամ դրանց տարբեր համադրություններով: 20 տարեկաններին առաջադրված մեղադրանքների հոդվածների և/կամ դրանց համադրությունների թիվն է 35: Բերված տվյալներից բխում է ևս մեկ օրինաչափություն. զինծառայողների տարիքին (հետևաբար նաև՝ զինծառայության ժամանակահատվածին) զուգահեռ աճում է ոչ միայն հանցագործությունների քանակը, այլև դրանց բազմազանությունն ըստ ՔՕ-ի տարբեր հանցատեսակների ու հոդվածների: Այսպես, 18-ից 20 տարեկանների շրջանում թե՛ հանցագործությունների, թե՛ դրանց վերաբերող հոդվածների ու դրանց համադրությունների քանակն աճում է 3 անգամ:

Գ. Զինվորական կոչում

Պատկեր 1. Մոնիթորինգի շրջանակներում դիտարկված գործերում ամբաստանյալների զինվորական կոչումները



Աղյուսակ 6. Մոնիթորինգի շրջանակներում դիտարկված գործերում ամբաստանյալների զինվորական կոչումները

Զինվորական կոչումը	Թվաքանակը	Տոկոսը
շարքային	146	50%
եֆրեյտոր	4	1%
կրտսեր սերժանտ	28	10%
սերժանտ	12	4%
ավագ սերժանտ	9	3%
ավագ	1	1%
ենթասպա	8	3%
ավագ ենթասպա	2	1%
լեյտենանտ	8	3%
ավագ լեյտենանտ	17	6%
կապիտան	13	4%
մայոր	12	4%
փոխգնդապետ	2	1%
ամբաստանյալի զինվորական կոչումը հայտնի չէ	5	2%
ամբաստանյալը զինվորական կոչում չունի	23	8%

Պատկեր 1-ում բերված տվյալներից երևում է, որ 181 գործերով անցնող ամբաստանյալների 50%-ը շարքայիններ են: Նրանց հաջորդում են կրտսեր սերժանտները՝ 10% և ավագ լեյտենանտները՝ 6%:

Այսպիսով՝ ամբաստանյալները ներկայացնում էին.

1. շարքային կազմը՝ 69% (200),
2. ենթասպայական կազմը՝ 3% (10),
3. կրտսեր սպայական կազմը՝ 13% (38),
4. ավագ սպայական կազմը՝ 5% (14)⁸:

Զինվորական կոչում չունեին 8%-ը (23 ամբաստանյալներ), իսկ 2%-ի դեպքում ամբաստանյալների զինվորական կոչումները հնարավոր չի եղել պարզել, քանի որ դրանք չեն նշվել ո՛չ դատական քննության ընթացքում, ո՛չ դատավճիռներում:

Իրականացված վերլուծությունը բացահայտել է որոշակի օրինաչափություններ կատարված հանցագործությունների և դրանց սուբյեկտ հանդիսացած անձանց սոցիալական բնութագրիչների վերաբերյալ, որոնք կարող են օգտակար լինել հանցագործությունների կանխման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Մասնավորապես, գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու հանցագործությունը հիմնականում տեղ է գտնում կրթական ցածր մակարդակ ունեցող զինծառայողների շրջանում, մինչդեռ անդամախեղության, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու հանցատեսակն առավել տարածված է կրթական բարձր մակարդակ ունեցող զինծառայողների շրջանում: Զինվորական հանցագործությունների սուբյեկտ են հանդիսանում մեծամասամբ 18-22 տարեկան անձինք: Որքան բարձրանում է ամբաստանյալների տարիքը, այնքան նվազում է տեղի ունեցող հանցագործությունների քանակը, սակայն առավել բարձր տարիքում կատարված հանցագործություններն առավել բազմազան են դառնում և, որպես կանոն, համակցության արդյունք:

Իրավախախտում կատարած անձանց բնութագրիչներն ակնհայտ են դարձնում հրամանատարների՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալների միջամտության և աշխատանքի հիմնական թիրախները: Մասնավորապես, գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը հիմնականում կատարվում է կրթական ցածր մակարդակ ունեցող զինծառայողների կողմից, մինչդեռ անդամախեղության, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու արարքն առավելապես կատարվում է կրթական բարձր մակարդակ ունեցող զինծառայողների կողմից: Մա նշանակում է, որ եթե կրթական ցածր մակարդակ ունեցողները գերադասում են իրավիճակային լուծումները՝ հաճախ ինչ-ինչ զգայական ու զգացմունքային դրդապատճառներից ելնելով, ապա կրթական առավել բարձր մակարդակ ունեցողներն ընտրում են զինծառայությունից խուսափելու առավել «երաշխավորված» և հաշվարկված մարտավարություն:

Հատկանշական է նաև, որ իրավախախտումները կատարվում են հիմնականում զինվորական ծառայության ոչ առաջին ամիսներին, առավել հաճախ՝ զինծառայության երկրորդ տարում: Որքան երկար է զինծառայության ժամկետը, այնքան մեծանում է թե՛ իրավախախտ վարքի հավանականությունը, թե՛ կատարած հանցանքի ծանրությունը: Այս մտահոգիչ փաստը վկայում է այն մասին, որ անձի շարունակական ինտեգրումը զինվորական կոլեկտիվում նպաստում է ոչ թե նրա վարքի նկատմամբ դրական սոցիալական վերահսկողության

⁸ Զինվորական կոչումները խմբավորվել են՝ համաձայն «Զինվորական ծառայություն անցնելու մասին» օրենքի 6-րդ հոդվածի:

գարգացմանը, այլ, հակառակը՝ խթանում է իրավախախտ վարքի ի հայտ գալու հավանականությունը: Նկատված օրինաչափությունը գործում է ոչ միայն ժամկետային զինձառայողների դեպքում, այլև վերաբերելի է և պայմանագրային զինձառայողներին. տարիքից կախված՝ աճում է ՔՕ այն հոդվածների ու դրանց համադրությունների թիվը (հանցանքներն առավել բազմազան են դառնում և, որպես կանոն, համակցության արդյունք), որոնցով մեղադրվում են ամբաստանյալները: Ըստ էության, զինված ուժերում ևս գործում են փակ հաստատություններին բնորոշ վարքային մոդելների կրկնօրինակման, տարածման և խրախուսման օրինաչափությունները: Այս օրինաչափությունների իմացությունն անչափ կարևոր է անձնակազմի հետ տարվող աշխատանքների համատեքստում՝ հանցագործությունների կանխարգելման միջոցառումներ ձեռնարկելու համար:

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը քննարկվում է հետևյալ հիմնական ասպեկտներում.

1. կալանավորումը որպես անձնական ազատության սահմանափակման բացառիկ հիմք,
2. քրեական գործով վարույթի ընթացքում դատավարության մասնակիցների կարգապահական մեկուսացումը որպես անձնական ազատության սահմանափակման հիմք:

Ա. Կալանավորումը որպես անձնական ազատության սահմանափակման բացառիկ հիմք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և ՀՀ կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերը երաշխավորում են յուրաքանչյուրի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: ՔՂՕ-ը մասնավորեցնում է կալանավորման հիմքերն ու կարգը, ինչպես նաև նախատեսում է խափանման այլ միջոցներ, որոնք ապահովում են ամբաստանյալի՝ դատական նիստին ներկա գտնվելը: Կալանավորումը համարվում է ամենախիստ խափանման միջոցը, որը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց և այն դեպքերում, երբ առավել մեղմ խափանման միջոցներով հնարավոր չէ ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը և արդարադատության իրականացումը:

ՄԻԵԴ-ը, անդրադառնալով կալանավորման հիմնավորվածության խնդրին, ամրագրել է. «Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը և խափանման մյուս միջոցներով հնարավոր չէ կանխել մեղադրյալի ապօրինի դիմակայությունը և իրականացնել քրեական դատավարության խնդիրները»⁹:

ՄԻԵԿ-ում օգտագործվող «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունը վերաբերում է ներպետական օրենսդրությանը և պարտավորեցնում է պետությանը անձին ազատությունից զրկելիս պահպանել և՛ նյութական, և՛ դատավարական իրավունքի նորմերը¹⁰:

Մարդու իրավունքների կոմիտեն ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մինչդատական վարույթում կալանքը պետք է ոչ միայն օրինական լինի, այլև՝ անհրաժեշտ և ողջամիտ տվյալ հանգամանքներում: Կոմիտեն նշել է, որ հանցանք կատարելու վերաբերյալ կասկածի առկայությունն ինքնին բավարար չէ նախնական քննության ընթացքում և մինչև դատարանում մեղադրանքի ներկայացումը անձի կալանավորումն արդարացնելու համար: Անձին կալանավորելը կարող է անհրաժեշտ լինել նրա փախուստը կանխելու, վկաների վրա ճնշումներ գործադրելու և այլ ապացույցների նկատմամբ միջամտություն ցուցաբերելու փորձերը կանխելու, կամ այլ հանցանքների կատարումը կանխելու նպատակով¹¹:

ՔՂՕ-ի համաձայն՝ կալանավորումը կիրառվում է միայն դատարանի որոշմամբ և միայն մեղադրյալի նկատմամբ այնպիսի հանցագործության կատարման համար, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, վարույթն իրականացնող մարմնից խուսափելու կամ այլ

⁹ Wassink v. the Netherlands, 27 September 1990, para. 27.

¹⁰ Steel and Others v. the United Kingdom, 23 September 1998, para. 54.

¹¹ Communication No. 458/1991, A. W. Mukong v. Cameroon (Views adopted on 21 July 1994), in UN doc. GAOR, A/49/40 (vol. II), p. 181, para. 9.8.

ճանապարհով, կատարել նոր հանցագործություններ, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատժից, ինչպես նաև՝ խոչընդոտել դատավճռի կատարմանը¹²:

Քր. դատ. օր. 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի նկատմամբ խափանման միջոցն ընտրելիս հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, սեռը, նրա զբաղմունքի տեսակը, գույքային դրությունը, ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, բնակության մշտական վայրի առկայությունը և այլ էական հանգամանքներ:

Որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու հարցի առնչությամբ առաջ է գալիս նաև մեղադրյալի անմեղության կանխավարկածի պաշտպանության հարցը: Մասնավորապես, ՔԴՕ 18-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ մինչդատական վարույթի ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցի լուծման առթիվ դատարանը պետք է ուսումնասիրի հանրային շահերի գոյության բոլոր կողմ և դեմ փաստերը՝ հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, անձի անձնական ազատության իրավունքի պահանջները և հիմնավորի դրանք իր որոշումներում¹³:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ մինչդատական վարույթում անձի կալանավորումը չանցնի ողջամիտ ժամկետները: Դատարանն ամրագրել է, որ երկարատև կալանավորումը արդարացված կլինի միայն արդարացված հանրային շահի առկայության դեպքում, որը, հաշվի առնելով անմեղության կանխավարկածը, կվերադասվի անձի ազատության իրավունքին: Ավելին, Դատարանն ամրագրել է, որ անձին ազատությունից զրկելու համար վերջինի կողմից հանցագործությունը կատարելու ողջամիտ կասկածի պահանջը պարտադիր պայման է անձին կալանավորելու համար, սակայն որոշակի ժամանակ անց այն այլևս բավարար չէ¹⁴: Մինչդատական վարույթում անձի ազատության իրավունքի սահմանափակումը արդարացնելու համար դատարանը պետք է տա «համարժեք» և «բավարար» պատճառաբանություններ, ինչպես նաև ապացուցի, որ ցուցաբերել է առաձևահատուկ ջանասիրություն հարցի քննության ընթացքում¹⁵:

Այսպիսով՝ անմեղության կանխավարկածի և անձնական ազատության իրավունքների լույսի ներքո՝ մինչդատական վարույթի ընթացքում անձի կալանավորումը հանդիսանում է բացառություն, այլ ոչ ընդհանուր նորմ: Հետևաբար, այն պետք է օգտագործվի միայն, երբ խիստ անհրաժեշտ է և որպես միակ հնարավոր միջոց: Ավելին, այն չպետք է կրի պատժիչ բնույթ: Կալանավորման վերաբերյալ որոշումները պետք է պատշաճ պատճառաբանված լինեն՝ ի համապատասխանություն ՄԻԵԿ-ի պահանջների:

Օրինակ N 1

Դիտարկված գործերից մեկով դատարանում հարցաքննության ընթացքում ամբաստանյալները հայտնեցին, որ նախաքննության ընթացքում իրենց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է եղել կալանավորումը, երեքական օր եղել են կալանավորված և

¹² ՀՀ քր. դատ. օր., հոդվածներ 134, 135, 136:

¹³ Lettelier v. France, Series A no. 207, judgement of June 26, 1991, § 35.

¹⁴ The right to liberty and security of the person, A guide to the implementation of Article 5 of the European Convention on Human Rights. Human Rights Handbook no. 5 by Monica Macovei, p. 34.

¹⁵ Clooth v. Belgium, Series A no. 225, judgement of December 12, 1991, § 44.

խոստովանական ցուցմունքներ են տվել և ընդունել իրենց մեղքը, որպեսզի վերադառնան գործնաս. այսինքն՝ կալանավորումը պետք է փոխվեր այլ խափանման միջոցով, ինչպես իրենց խոստացել է քննիչը: Մյուս ամբաստանյալների նկատմամբ, ուրբեր նախաքննության ընթացքում իրենց մեղավոր չէին ճանաչել ու հրաժարվել էին ցուցմունքներ տալ, խափանման միջոց կալանավորումը չփոփոխվեց: Այսինքն՝ նախնական քննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվել է՝ պայմանավորված նրանց կողմից ցուցմունք տալուց հրաժարվելով, ուստի և կրել է պատժիչ բնույթ:


Բ. Մոնիթորինգի արդյունքում ձեռք բերված քանակական տվյալներ

Ստորև ներկայացվում են տվյալներ դիտարկված գործերով կիրառված խափանման միջոցների վերաբերյալ՝ ըստ ամբաստանյալների զինվորական կոչումների:


Այսպես, կալանավորումը, որպես խափանման միջոց, կիրառվել է 58 ամբաստանյալի նկատմամբ (20%), հրամանատարության հսկողությանը հանձնելը՝ 158 (55%) և ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը՝ 71 (25%) ամբաստանյալի նկատմամբ:

Դիտարկված դեպքերից միայն մեկում է դատական քննության ընթացքում որպես խափանման միջոց ընտրված եղել գրավը: Ընդ որում, այս մեկ դեպքում ամբաստանյալը կոչումով մայոր է եղել:


Պատկեր 2. Ամբաստանյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցները




Պատկեր 3. Կալանավորումը որպես խափանման միջոց (ըստ ամբաստանյալների զինվորական կոչումների)



Պատկեր 4. Հրամանատարության հսկողությանը հանձնելը որպես խափանման միջոց (ըստ ամբաստանյալների զինվորական կոչումների)




Պատկեր 5. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառությունն ըստ ամբաստանյալների զինվորական կոչումների



Բերված պատկերները վկայում են այն մասին, որ կալանավորվածների ավելի քան 3/4-ը (76%) շարքային կազմի ներկայացուցիչներ են:

Պատկեր 6. Զինվորական տարրեր կազմերի նկատմամբ կիրառված խափանման միջոցները



Բերված պատկերը թույլ է տալիս համեմատել զինվորական տարբեր կազմերի նկատմամբ կիրառված խափանման միջոցների համամասնությունները: Մասնավորապես, շարքային կազմի նկատմամբ «Հրամանատարության հսկողությանը հանձնելը» խափանման միջոցը կիրառվել է 70% դեպքերում, ինչն էականորեն բարձր է մյուս սպայական կազմերի նկատմամբ մինչև միջոցի կիրառման հաճախականությունից: Նույն կերպ «Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցն առավել հաճախ կիրառվել է ենթասպայական կազմի նկատմամբ, այնուհետև՝ կրտսեր և ավագ սպայական կազմերի նկատմամբ, և առավել պակաս՝ շարքային կազմի նկատմամբ (ընդամենը 8%): Հատկանշական է, որ բավականին ցածր է ենթասպայական կազմի նկատմամբ «կալանավորում» խափանման միջոցի կիրառման հաճախականությունը (8%), մինչդեռ մյուս սպայական կազմերի պարագայում այս ցուցանիշն առնվազն 2 անգամ բարձր է:

Գ. Կարգապահական մեկուսացումը որպես անձնական անձեռնմխելիության սահմանափակման հիմք:

Մեկուսացման՝ որպես կարգապահական տույժի կիրառումը ինքնին անթույլատրելի է մարդու իրավունքների տեսանկյունից: Առավել անթույլատրելի է քրեական գործի քննության շրջանակներում մեկուսացման ձևով կարգապահական տույժի կիրառումը որպես ճնշման միջոց:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության համաձայն՝ զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման համար զինծառայողն անձամբ կրում է կարգապահական պատասխանատվություն՝ պարտականությունների և զինվորական պարտքի հիշեցման կամ կարգապահական տույժի տեսքով¹⁶:

Ի լրումն այլ կարգապահական տույժերի՝ զինծառայողների նկատմամբ կարող է նշանակվել կարգապահական մեկուսարանում մեկուսացումն ու պահումը (ժամկետային ծառայության զինվորներին, սերժանտներին՝ առավելագույնը 10 օր, ենթասպաներին՝ 7 օր, սպաներին՝ 5 օր):

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ կարգապահական կարգով մեկուսացվածը համարվում է ազատությունից զրկված, եթե պահվում է փակ խցում և չի իրականացնում իր զինվորական պարտականությունները¹⁷:

ՄԻԵԿ-ն և ՀՀ Սահմանադրությունն անթույլատրելի են համարում իրավախախտման համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կամ տույժերի նշանակումը (դատապարտումը) առանց դատարանի համապատասխան որոշման: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը թույլատրում է անձի «կալանավորումը՝ իրավասու դատարանի կողմից դատապարտվելուց հետո»: Այս դրույթը տարբերություն չի դնում իրավախախտման բնույթի տեսանկյունից, որի կատարման համար անձը մեղավոր է ճանաչվել: Այն կիրառելի է յուրաքանչյուր «դատապարտման» նկատմամբ, որը հիմք է դարձել ազատությունից զրկելու համար և նշանակվել է դատարանի կողմից՝ անկախ տվյալ պետության իրավական համակարգում դրա դասակարգումից¹⁸: Հետևաբար, ցանկացած բնույթի իրավախախտման համար ազատությունից զրկելը՝ որպես պատիժ, կարող է կիրառվել բացառապես դատարանի որոշման հիման վրա:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածն ինկորպորացնում և վերարտադրում է ՄԻԵԿ 5(1)-րդ հոդվածը՝ առանց նախատեսելու որևէ բացառություն կամ այնպիսի թույլատրելի հիմք, ինչպիսին է՝ մեկուսացում կարգապահական տույժի կիրառմամբ ազատությունից զրկելը:

¹⁶ ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնադրություն, կետ 51:

¹⁷ Engel and Others v the Netherlands, 8 June 1976, Series A no. 22.

¹⁸ Campbell and Fell v. the United Kingdom, 28 June 1984, para. 68-69.

Հարկ է նկատի ունենալ, որ թեև ՀՀ-ն սույն հարցի կապակցությամբ վերապահում է կատարել ՄԻԵԿ 5-րդ հոդվածի (ազատության իրավունք) առնչությամբ¹⁹, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը նման բացառություն չի նախատեսում: Հետևաբար, ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսված հիմքով անձին ազատությունից զրկելը համարվում է ապօրինի և ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրությանը²⁰: Մյուս կողմից, նման վերապահումը չի բացառում կամ նվազեցնում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի (արդար դատաքննության իրավունքի) գործողությունը²¹:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավախախտումը «քրեական» որակելիս պետք է հաշվի առնել, թե այն սահմանող դրույթը պատկանում է քրեական իրավունքի տիրույթին, թե ոչ, ինչպես նաև դրա բնույթն ու հնարավոր պատժի ծանրությունը²²: ՄԻԵԴ-ը փաստել է, որ երեք օր ժամկետով ազատությունից զրկելը պատկանում է քրեական ոլորտին²³:

ՄԻԵԴ-ի կողմից սահմանված այս չափանիշների լույսի ներքո կարելի է եզրակացնել, որ այն արարքները, որոնց կատարման համար զինծառայողները կարող են ենթարկվել կարգապահական տույժի՝ մեկուսացման ձևով, Կոնվենցիայի իմաստով դասակարգվում են որպես քրեական և դրանց քննության ընթացքում պետք է պահպանվեն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները, այդ թվում՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքը:

Հետևաբար, ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսված հիմքով, առանց դատարանի որոշման անձին ազատությունից զրկելը համարվում է ապօրինի և նման պրակտիկան ուղղակիորեն հակասում է ՄԻԵԿ-ին և ՀՀ Սահմանադրությանը:

Դ. Առանց դատավարական կարգավիճակ տալու ազատությունից զրկելու հիմնախնդիրը:

Դիտարկման արդյունքներով արձանագրվել են դատական քննության ընթացքում վկայի և ամբաստանյալի անձնական ազատության իրավունքի կամայական սահմանափակումների երեք դեպքեր: Դրանք պաշտպանի կամ ամբաստանյալի կողմից դատարանին հայտնած դեպքերին են: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ նմանատիպ այլ դեպքերի մասին դիտորդները տեղեկացել են նաև մասնավոր զրույցներից և դրանց մասին հաճախ պաշտպանության կողմը խուսափում է բարձրաձայնել, ապա նմանատիպ դեպքերի իրական քանակը կարող է ավելին լինել, քան 3-ը:

Օրինակ N 2

¹⁹ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան և դրան կից արձանագրությունները վավերացնելու վերաբերյալ ՀՀ ԱԺ 2002թ. մարտի 20-ի որոշման համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները չեն ազդում ՀՀ կառավարության կողմից 1996թ. օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության գործողության վրա, համաձայն որի՝ մեկուսացումը և պահումը կարգապահական մեկուսարանում կարող է կիրառվել որպես կարգապահական տույժ...»:

²⁰ Մինչդեռ ՀՀ Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ և դրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և ի ապահովումն դրանց:

²¹ Aksoy v. Turkey, no 21987193, 18 December, 1996.

²² Demicoli v. Malta, 27 August 1991, paras. 31-34, Series A no. 210.

²³ Galstyan v. Armenia, 15 November 2007, paras. 55-60.

Ամբաստանյալը մեղադրվում էր զորամասը ինքնակամ լքելու մեջ: ՌՌ բերման ենթարկվելուց հետո վերջինս տարվել է զորամաս, որտեղ փաստացիորեն զրկվել է ազատությունից: Ազատությունից զրկվելուց երեք օր անց զորամասի հրամանատարի հրամանով նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ 10-օրյա ժամկետով կարգապահական մեկուսարանում պահելը: Ամբաստանյալին ազատությունից զրկելու հանգամանքը հաստատվել է նաև դատարանի դատավճռով, որով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժից հանվել է կարգապահական մեկուսարանում տույժ կրելու ժամկետը: Մակայն դատարանի դատավճռով անդրադարձ չի կատարվել ամբաստանյալին փաստացիորեն եռօրյա ազատությունից զրկման հարցին:

Այսպիսով՝ սույն պայմաններում անձի ազատության և անձեռնմխելիության վերաբերյալ բարձրանում են մի շարք հարցեր.

1. Ինչպիսի՞ կարգավիճակում է զինձառայողը առաջին անգամ զրկվել ազատությունից, եթե զինձառայողի արարքում հանցագործության հատկանիշներն ի սկզբանե հայտնի են եղել,

2. Ինչպիսի՞ կարգավիճակում է գործել զորամասի հրամանատարը զինձառայողին առաջին անգամ ազատությունից զրկելիս,

3. Ինչպիսի՞ կարգավիճակում է գործել զորամասի հրամանատարը զինձառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելիս և այդ ընթացքում ինչպիսի՞ դատավարական կարգավիճակում է գտնվել զինձառայողը:

ՔԴՕ-ի համաձայն՝ զորամասերի, զորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը հանդիսանում են քրեական հետապնդման մարմիններ՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ձառայության զինձառայողներին: Որպես հետաքննության մարմին՝ վերոգրյալ պաշտոնատար անձինք իրավունք ունեն քրեական գործ հարուցել, ձերբակալել հանցագործության մեջ կասկածվող անձին, նրա նկատմամբ կիրառել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց և այլն²⁴:

Ունենալով նման «փոխլրացնող» իրավասություններ՝ զորամասի, զորամիավորումների հրամանատարները քրեական գործով վարույթի ընթացքում կիրառում են մեկուսացման ձևով կարգապահական տույժի միջոցները՝ առանց դատարանի թույլտվության սահմանափակելով վարույթին ներգրավված զինձառայողների ազատությունը, հաճախ դա օգտագործելով որպես վարույթին ներգրավված անձանց ճնշելու միջոց:

Այսպես, որպես հետաքննության մարմին՝ **զորամասի, զորամիավորումների հրամանատարները, զինվորական հիմնարկների պետերը իրավասու են սահմանափակել անձի ազատությունը միայն վերջինիս ձերբակալելու միջոցով, որպիսի պայմաններում պետք է ապահովվեն ազատությունից զրկված անձանց երաշխիքները:**

ՔԴՕ 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ...ձերբակալումը չի կարող տևել 72 ժամից ավելի... «...եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման»:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմին բերված անձի իրավական կարգավիճակը համապատասխանում է

²⁴ՔԴՕ, հոդված 56-57:

«քրեական մեղադրանքի» ներկայացման կոնվենցիոն պահանջին²⁵: Հետևաբար վերջինը պետք է օժտված լինի հետևյալ սահմանադրական իրավունքներով.

1. իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը
2. տեղեկացվելու իրեն բերման ենթարկելու մասին
3. հրավիրելու իր փաստաբանին
4. լռելու

Վճռաբեկ դատարանը նաև ամրագրել է, որ որքանով վերաբերելի է, վերոգրյալ իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմիններում գտնվող և կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, ովքեր կարող են ողջամտորեն ենթադրել, որ իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են և միաժամանակ, որ իրենք կասկածվում են հանցագործության մեջ²⁶:

Հետևաբար, գորամասի հրամանատարները՝ որպես քրեական վարույթ իրականացնող մարմիններ, իրավասու են սահմանափակել անձի ազատության իրավունքը միայն վերջինին ձերբակալելով, ապահովելով ձերբակալված անձի իրավունքների իրականացումը՝ նրան իրավունքները գրավոր պարզաբանելու, առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, նրա փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Մինչդեռ պրակտիկայում հրամանատարները, փաստացիորեն հանդես գալով որպես քրեական գործով վարույթ իրականացնող մարմին, չարաշահելով կարգապահական տույժ նշանակելու իրենց լիազորությունները, զինձառայողներին ենթարկում են կարգապահական պատասխանատվության՝ քրեական գործով քննության ընթացքում առանց դատարանի համապատասխան թույլտվության զրկելով վերջինին ազատությունից՝ խախտելով նրանց անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

²⁵ «Քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական /փաստաթղթային/, այլ բովանդակային /գործնական/ իմաստով (*Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (*Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Subinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62):

²⁶ Գազիկ Միքայելյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում ԵԱԴԴ/0085/06/09, 2009թ. դեկտեմբերի 18, կետեր 21-22:

Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահպանումը կարգապահական և քրեական պատասխանատվության համատեքստում

Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահպանումը դիտարկվել է կարգապահական և քրեական պատասխանատվության համատեքստում:

Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի վերլուծությունը կարևորվում է հատկապես զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների և կարգապահական զանցանքների համատեքստում, քանի որ հանցագործությունների և զանցանքների սահմանազատումն այնքան էլ հստակ չէ, և, որպես կանոն, հանցագործությունների կատարման դեպքում քրեական պատասխանատվությանը նախորդում է կարգապահական պատասխանատվությունը նույն արարքի համար:

Ա. Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի իրավական հիմքերը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22-րդ հոդվածը և ՔՂՕ 21-րդ հոդվածը նախատեսում են կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

Համաձայն ՄԻԵԿ-ի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի՝ ոչ ոք չպետք է միննույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել կամ դատապարտվել է այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

Սույն սկզբունքի վերլուծությունը կարևորվում է հատկապես զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների և կարգապահական զանցանքների համատեքստում, քանի որ հանցագործությունների և զանցանքների սահմանազատումն այնքան էլ հստակ չէ ՀՀ ՔՕ-ում և ՀՀ Ձինված ուժերի կարգապահական կանոնադրության մեջ, զանցանքների՝ իրավական ակտերում տրված բնորոշումները չեն բավարարում իրավական որոշակիության սկզբունքին և, որպես կանոն, հանցագործությունների կատարման դեպքում քրեական պատասխանատվությանը նախորդում է կարգապահական պատասխանատվությունը նույն արարքի համար:

Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի կարգապահական կանոնադրության համաձայն՝ զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման համար զինծառայողն անձամբ կրում է կարգապահական պատասխանատվություն²⁷: Ձինծառայողի կողմից զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման դեպքում հրամանատարը (պետը) կարող է բավարարվել նրա պարտականություններն ու զինվորական պարտքը հիշեցնելով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կարգապահական տույժ տալ²⁸: Ձինծառայողների նկատմամբ որպես տույժեր կարող են կիրառվել նկատողությունը, խիստ նկատողությունը, հերթական արձակուրդից զրկումը, արտահերթ վերակարգում աշխատանքի նշանակումը, զինվորական կոչման իջեցումը, զինվորական կոչման զրկումը, կարգապահական մեկուսարանում առավելագույնը 10 օր ժամկետով մեկուսացումն ու պահումը (ժամկետային զինծառայողներին, սերժանտներին՝ առավելագույնը 10 օր, ենթասպաներին՝ 7 օր, սպաներին՝ 5 օր): Թվարկված տույժերից ամենախիստը կարգապահական մեկուսարանում պահելն է: Այն ներգործության ծայրահեղ միջոցներից է և կիրառվում է կարգապահական կոպիտ զանցանքներ

²⁷ ՀՀ Ձինված ուժերի կարգապահական կանոնադրություն, կետ 51:

²⁸ Նույն տեղում:

կատարելու կամ այն դեպքում, երբ հրամանատարի (պետի) ձեռնարկած մյուս միջոցներն անարդյունավետ են²⁹:

Կարգապահական կանոնադրության թիվ 5 հավելվածով սահմանվում են զինծառայողների կարգապահական կոպիտ խախտումները, որոնց համար կիրառելի է կարգապահական մեկուսարանում պահելու ձևով կարգապահական տույժը³⁰: Կանոնադրությամբ նախատեսված կարգապահական կոպիտ զանցանքների մեծ մասը նախատեսում է նաև քրեական պատասխանատվություն՝ ՔՕ-ի համաձայն³¹: Այսպես օրինակ՝ ՔՕ 359-րդ հոդվածը նախատեսում է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, 365-368-րդ հոդվածները քրեականացնում են ներքին ծառայության կանոնադրային կանոնները խախտելը, պահակային կամ կայազորային ծառայության կանոնադրային կանոնները խախտելը, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը: Թեև ՔՕ-ը նշված կանոնների համար քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորել է նաև ծանր հետևանքների առաջացմամբ, պետության անվտանգության շահերին վնաս պատճառելով կամ դրա պատճառման հնարավորությամբ, պրակտիկայում զանցանքների և հանցագործությունների սահմանազատումը խնդրահարույց է և, որպես կանոն, հանգեցնում է միևնույն արարքի համար կրկնակի դատապարտման:

Բ. Մոնիթորինգի արդյունքներ. Մեկուսացման ձևով պատասխանատվության ենթարկված ամբաստանյալների դեպքեր: Դիտարկված գործերի 12%-ում արձանագրվել են դեպքեր, երբ քրեական պատասխանատվության ենթարկված անձը կատարված նույն արարքի կամ դրա տարրերի համար նախկինում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Բոլոր դեպքերում ամբաստանյալներին վերագրվել է ՀՀ ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը: Ընդ որում, «կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահպանման» նկատառումներից ելնելով որոշ դատավորներ մեկուսացման ձևով կարգապահական պատասխանատվության ենթարկված ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժից հանել են կարգապահական տույժի ժամկետները, իսկ մյուսներն անգամ չեն անդրադարձել այդ խնդրին:

Ստորև ներկայացված են արձանագրված առանձին դեպքեր:

Օրինակ N 3

Դիտարկված գործերից մեկում ամբաստանյալը մեղադրվում էր զորամասն ինքնակամ լքելու համար երեք օր ավելի, սակայն մեկ ամսից պակաս ժամկետով: Սույն իրավախախտման համար ամբաստանյալը զորամասի հրամանատարի կողմից ենթարկվել էր կարգապահական տույժի՝ կարգապահական մեկուսարանում 10 օր ժամկետով պահելու ձևով: Դատավճռով ամբաստանյալի նկատմամբ նշանակված երկամսյա կալանքից հանվեց արդեն իսկ կրած տասնօրյա կալանքի ժամկետը (գործ թիվ 125):

²⁹ Նույն տեղում, կետ 106:

³⁰ Դրանք են ինքնակամ բացակայությունը, արձակուրդից, գործուղումից կամ բուժօգնության ժամկետին ծառայության չներկայանալը, պահակային, ներքին ծառայությունների և մարտական հերթապահության կանոնների խախտումը, ակոնոլի, թմրանյութերի կամ թունանյութերի օգտագործման հետևանքով անսթափ վիճակում ծառայողական պարտականությունների կատարումը, անվտանգության պահանջների խախտումը, որը հանգեցրել է աշխատունակության կորստի, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտումը, ռազմական գույքի վատնումը կամ կորուստը, զանցանքները հասարակական վայրերում՝ ծառայությունից դուրս:

³¹ ՔՕ-ի գլուխ 32-րդը պատասխանատվություն է սահմանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար (հոդվածներ 356-383):

Օրինակ N 4

Նմանատիպ գործով ամբաստանյալը, մեղադրվելով երեք անվա ընթացքում երեք անգամ մինչև երեք օր տնտղությանը գորամասը լքելու մեջ, դատապարտվեց կալանքի 3 ամիս ժամկետով, սակայն այդ ժամկետից հանվեցին ամբաստանյալի կրած կարգապահական պատասխանատվության ժամկետները (գործ N 17):

Ի հակադրություն վերը բերված օրինակներին...

Օրինակ N 5

Նույն հանցագործության համար մեղադրվող երիտասարդը մեղադրանքի կազմում ներառված գորամասը լքելու երկու դեպքերի համար ենթարկվել էր կարգապահական պատասխանատվության՝ կարգապահական մեկուսարանում 10 օր ժամկետով պահվելու ձևով և նրա նկատմամբ նշանակված վեց ամիս կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժից այդ ժամկետը չհանվեց (գործ N 128):

Գ. Հիմնախնդրի իրավական վերլուծություն: Վերը բերված օրինակներում անհասկանալի է մնում, թե որ իրավական հիմքով է անձը նույն արարքի համար դատապարտվում և՛ քրեական, և՛ կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև՝ ինչպիսի՞ իրավական հիմնավորմամբ է դատավճռով նշանակված պատժից հանվում կարգապահական տույժի ժամկետը: Պատժի ժամկետները հաշվարկելու և հաշվակցելու կարգը նախատեսող ՀՀ քր. օր.-ի 69-րդ հոդվածը որևէ դրույթ չի պարունակում կարգապահական տույժ և քրեական պատիժ հանդիսացող պատասխանատվության միջոցների միջև:

Այսպես, մի կողմից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկմանը, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին, մյուս կողմից էլ կալանքը որպես պատիժ չի կարող նշանակվել, եթե կալանավորումն ընտրված է եղել որպես խափանման միջոց: Հետևաբար, նշանակված պատժից կարգապահական տույժի ժամկետների հաշվակցումը պետք է մեկնաբանել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի դիտակետից, որով փաստորեն օրինականացվում է առանց համապատասխան դատական ակտի անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակումները:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն³² ներպետական օրենսդրությամբ ընթացակարգին տրված իրավական բնորոշումը միակ չափանիշը չէ Կոնվենցիայի ներքո *ne bis in idem* սկզբունքը գնահատելու համար: Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի «քրեական դատավարության կարգով» հասկացությունը պետք է մեկնաբանվի կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածներում համապատասխանաբար ամրագրված «քրեական մեղադրանք» և «պատիժ» հասկացությունների մեկնաբանման ընդհանուր սկզբունքների լույսի ներքո: Համաձայն ՄԻԵԴ առաջադրած չափանիշների՝ «քրեական մեղադրանքը» մեկնաբանվում է երեք չափանիշներից ելնելով. արարքի՝ ներպետական օրենսդրությամբ որպես հանցագործություն որակումը, իրավախախտման բնույթն ինքնին և անձին հասանելի պատժի ծանրությունը³³: Զինվորական կարգապահական պատասխանատվության ենթակա զանցանքներն իրենց բնույթով համարվում են քրեական՝ չնայած իրենց աննշանության հիմքով չեն կարգավորվում

³² Zolotukhin v. Russia, 10 February 2009, § 52.

³³ Engel and Others v. the Netherlands, 8 June 1976, § 85, Series A no. 22.

քրեախրավական և քրեադատավարական նորմերով: Նման դեպքերում կարևորվում է նաև կարգապահական պատասխանատվության դեպքում նշանակված պատժի ծանրությունը:

ՄԻԵԴ-ը հաստատել է, որ ազատությունից զրկելը պատկանում է քրեական ոլորտին, եթե իր բնույթով, տևողությամբ և իրականացման բնույթով վնասակար չէ³⁴: Ելնելով պատժամիջոցի պատժիչ և կանխարգելիչ բնույթից, ինչպես նաև խստությունից ազատությունից զրկումը նույնիսկ 3 օրով կարող է համարվել պատիժ՝ քրեական իմաստով³⁵: Սույն պայմաններում կարգապահական մեկուսարանում պահելու ձևով պատասխանատվությունն նախատեսող կարգապահական զանցանքները հանդիսանում են քրեական մեղադրանք Կոնվենցիայի իմաստով, հետևաբար դրանք պետք է բավարարեն նաև Կոնվենցիայի իմաստով «օրենքի» չափանիշները: Դատարանն ամրագրել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով՝ միայն օրենքով պետք է սահմանվեն հանցագործությունները և դրա համար նախատեսված պատժատեսակները (*nullum crimen, nulla poena sine lege*), բացի այդ, այն արգելում է քրեական օրենքի լայն մեկնաբանությունը՝ ի վնաս մեղադրյալի, ինչպես նաև ըստ անալոգիայի կիրառությունը: Սա ենթադրում է, որ հանցագործությունն նախատեսող նորմը պետք է հստակորեն նախատեսված լինի օրենքով:

Մինչդեռ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը (այսուհետ՝ Կարգապահական կանոնադրություն) չի տալիս կարգապահական պատասխանատվությունն նախատեսող արարքների ո՛չ հասկացությունը, ո՛չ բովանդակությունը³⁶: Միաժամանակ, «ներքին ծառայությունների կանոնների խախտում», «զինծառայողների փոխհարաբերությունների խախտում», ինչպես նաև «զանցանքները հասարակական վայրերում» սահմանումները ընդգրկում են և չեն բավարարում իրավական որոշակիության պահանջները: ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքով սահմանել է, որ «նախատեսված օրենքով» արտահայտությունը պահանջում է իրավական նորմի կանխատեսելիություն: Նորմը պետք է ձևակերպված լինի բավարար և՛ ճշգրտությամբ, և՛ հստակությամբ, նաև հնարավորություն ընձեռի անձին ողջամտորեն կանխատեսելու իր գործողությունների հետևանքները³⁷:

Հետևաբար, զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկող օրենքը հստակ և կանխատեսելի չէ և չի բավարարում ՄԻԵԿ չափանիշներին: Դեռ ավելին, Կարգապահական կանոնադրության 99-րդ կետի համաձայն՝ հանցագործության համար կարգապահական տույժ ստացած և պետությանը նյութական վնաս հասցրած զինծառայողը չի ազատվում քրեական և նյութական պատասխանատվությունից³⁸:

Այսպիսով՝ կարգապահական մեկուսարանում պահելու ձևով կարգապահական տույժի ենթակա իրավախախտումները Կոնվենցիայի իմաստով «քրեական»³⁹ են, հետևաբար, Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը զինվորական կարգապահական պատասխանատվության նկատմամբ կիրառելի է:

³⁴ Ezech and Connors v the United Kingdom [GC], nos. 39665/98 and 40086/98, § 69-130 ECHR 2003-X.

³⁵ Galstyan v. Armenia, no. 26986/03, § 57, 15 November 2007.

³⁶ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում տրվում է կարգապահական խախտման հասկացությունը, ինչպես նաև Կանոնագրքի հատուկ մասը նախատեսում է կարգապահական խախտումների տեսակները, որոնք մեծամասամբ կրկնում են ՔՕ-ի «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները» գլխում ընգրկված հանցագործությունները, որոնց տարբերությունը արարքի հետևանքն է:

³⁷ Corbely v. Hungary, 19 September 2008, para. 70, app. 9174/02.

³⁸ Անհրաժեշտ է ընդգծել, որ նույնաբովանդակ դրույթ պարունակում է նաև «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածը, որի 4-րդ մասով նախատեսված է, որ կարգապահական տույժի ենթարկված զինծառայողը չի ազատվում քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններում առկա են քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ:

³⁹ Menesheva v. Russia, no. 59261/00, § 94-98, ECHR 2006.

Նույն արարքի համար ինչպես քրեական, այնպես էլ այլ բնույթի (կարգապահական, վարչական) պատասխանատվությունը կհամարվի Կոնվենցիայի թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտում, եթե այդ երկու պատասխանատվությունները վրա են հասել *միևնույն արարքի* համար: «Միևնույն արարքի» չափանիշը ենթադրում է, որ մեղադրյալ անձն ունի պաշտպանության լայն շրջանակ Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի ներքո, քանի որ ներպետական օրենսդրության համաձայն՝ նույն փաստական հանգամանքները կարող են առաջացնել տարբեր նշանակության, բնույթի և նպատակի ուղղված տարբեր իրավախախտումներ⁴⁰: Դեռ ավելին, մեկ այլ գործում ՄԻԵԴ-ը ամրագրել է, որ *ne bis in idem* սկզբունքի խախտման հարցը վերաբերում է երկու իրավախախտումների միջև հարաբերակցությանը և չի հիմնվում երկու քննությունների հերթականության և կարգի վրա:

Մեկ այլ գործով, սակայն, ՄԻԵԴ-ը հաստատել է, որ նույն արարքը կարող է առաջացնել պատասխանատվություն երկու առանձին իրավախախտումների համար և չխախտել Կոնվենցիայի դրույթը, հատկապես, եթե պատիժներն ուժգնացող չեն⁴¹: Սա հատկապես վերաբերում է հանցագործությունների իդեալական համակցությանը, որի պայմաններում մեկ արարքը իրենից ներկայացնում է երկու տարբեր հանցագործություններ⁴²: Սույն պայմաններում որոշիչ է, թե արդյոք քննարկվող հանցագործությունների էական տարրերում առկա են տարբերություններ: Դատարանն ամրագրել է, որ զուտ այն հանգամանքը, որ նույն արարքը կարող է առաջացնել տարբեր իրավախախտումներ, չի հակասում Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածին: Այն դեպքում, երբ նույն արարքի վրա հիմնված տարբեր իրավախախտումները քննվում են հաջորդաբար՝ մեկը մյուսի վերջնական որոշումից հետո, անհրաժեշտ է քննարկել, թե արդյոք այդ իրավախախտումներն ունեն նույն էական տարրերը⁴³: Այն դեպքերում, երբ երկու հանցագործությունները ունեն չնչին համընկնումներ, դրանց համար առանձին պատասխանատվությունը չի հանգեցնի ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտման: Էական տարրերի մեջ հաշվի է առնվում արարքի ծանրությունը, հետևանքները, պաշտպանվող սոցիալական արժեքը և քրեական նպատակները⁴⁴: Վերջիններիս տարբերության պայմաններում երկու հանցագործությունների համար պատասխանատվությունը չի համարվի կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում:

Դատարանի գնահատմամբ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում օտագործվող «հանցագործություն» հասկացությունը չի արդարացնում դրա սահմանափակ մեկնաբանությունը: Հետևաբար, Դատարանն արձանագրել է, որ այն մոտեցումը, որը պահանջում է երկու հանցագործությունների իրավական բնութագրությունը, սահմանափակում է մարդու իրավունքները, քանի որ ելնելով այն կանխավարկածից, որ անձը պատասխանատվության է ենթարկվել իրավախախտումների համար, որոնք ունեն տարբեր իրավական դասակարգում, Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների խախտման ռիսկ է առաջացնում՝ չապահովելով դրա պրակտիկ և արդյունավետ իրացումը: Հետևաբար, ՄԻԵԴ-ի դիրքորոշման համաձայն՝ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածն անհրաժեշտ է հասկանալ որպես երկրորդ իրավախախտման կապակցությամբ քրեական հետապնդման կամ դատական քննության արգելում, եթե այն հիմնվում է ***նույնական փաստական հանգամանքների կամ ըստ էության նույն փաստական հանգամանքների վրա***⁴⁵:

⁴⁰ *Gradinger v. Austria* – 328-C (23.10.95), para. 66.

⁴¹ *Oliveira v. Switzerland*, 30 July 1998, *Reports* 1998-V.

⁴² *Göktan v. France*, no. 33402/96, § 48, ECHR 2002-V.

⁴³ *Franz Fischer v. Austria*, 29 May, 2001, para.25.

⁴⁴ *Garretta v. France* (dec.), no. 2529/04, 4 March 2008.

⁴⁵ *Zolotukhin v. Russia*, no 14939/03, 10 February 2009.

Մույն համատեքստում անդրադառնալով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ լքելու համար քրեական և կարգապահական պատասխանատվության հարաբերակցության հարցին, կարելի է հանգել եզրակացության, որ զինծառայողին նույն արարքի համար և՛ կարգապահական, և՛ քրեական պատասխանատվության ենթարկելն առաջացնում է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում: Նույնը վերաբերում է նաև երեք ամիսների ընթացքում երեք անգամ մինչև երեք օր տևողությամբ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ լքելու հանցակազմին: Եթե զինծառայողը տվյալ հանցագործության տարր հանդիսացող իրավախախտման կամ իրավախախտումների համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, ապա այն չի կարող ընդգրկվել քրեական պատասխանատվություն առաջացնող հանցագործության տարրերի մեջ, քանի որ տվյալ դեպքում կարգապահական զանցանքի և հանցագործության փաստական հանգամանքները նույնականանում են: Ավելին, տվյալ պայմաններում երկու իրավախախտումների և՛ ծանրության աստիճանը, և՛ վտանգված սոցիալական արժեքը, և՛ նպատակը, և՛ հետևանքները համընկնում են:

Հետևաբար, զինծառայողին քրեական պատասխանատվության կարելի է ենթարկել միայն այն դեպքում, երբ տեղի ունեցած իրավախախտման մաս հանդիսացող արարքի կամ արարքների համար վերջինս չի ենթարկվել զինվորական կարգապահական պատասխանատվության կամ չի արդարացվել դրա համար: Գործող կարգապահական կանոնադրության պայմաններում կարգապահական տույժ կիրառելու մասին որոշումը վերջնական է, քանի որ բողոքարկման համար նախատեսված է ընդամենը տասնօրյա ժամկետ⁴⁶, մինչդեռ բողոքարկումը չի հանգեցնում կարգապահական տույժի կատարման կասեցման⁴⁷: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ, որպես կանոն, կարգապահական տույժերն իրականացվում են անհապաղ, դրանց բողոքարկումը նախքան ի կատար ածվելը դառնում է անիրատեսական: Հետևաբար, կարգապահական մեկուսարանում պահելու ձևով կարգապահական տույժի կրումը վերջնական պատիժ է, որպիսի պայմաններում անձին նույն արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելը հանդիսանում է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում:

Այսպես, եվրոպական երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունում, ինչպես և Հայաստանում, գործում են զինծառայողների կարգապահական և քրեական պատասխանատվության համակարգերը:

Այդուամենայնիվ, տարբեր պետություններում պատասխանատվության հարաբերակցությունը որոշվում է տարբեր կերպ: Օրինակ, Գերմանիայի զինված ուժերի կարգապահական կանոնագրքի համաձայն՝ երբ դատարանի կողմից զինծառայողի նկատմամբ պատիժ է նշանակվել, զինվորական հրամանատարության կողմից կարգապահական տույժեր չեն կարող նշանակվել նույն արարքի համար: Կարգապահական տույժի կիրառումը թույլատրելի է միայն բացառիկ դեպքերում, եթե դա անհրաժեշտ է զինվորական կարգի կամ զինված ուժերի հեղինակության և համբավի պաշտպանության նկատառումից էլնելով⁴⁸:

Լյուքսեմբուրգի օրենսդրության համաձայն՝ եթե գործի քննությունը տարվում է քրեական օրենսդրության համաձայն, կարգապահական վարույթը կասեցվում է մինչև քրեական գործով վերջնական որոշման կայացումը⁴⁹: Մինչդեռ, օրինակ, Ֆրանսիայի և Իսպանիայի օրենսդրական կարգավորումը չի լուծում կարգապահական և քրեական պատասխանատվության հարաբերակցության հարցերը: Օրինակ՝ ֆրանսիական օրենսդրության համաձայն՝

⁴⁶ Կարգապահական կանոնադրություն, կետ 93:

⁴⁷ Նույն տեղում, կետ 100:

⁴⁸ Sect 16, WDO (Wehrdisziplinarordnung).

⁴⁹ Art. 22 of Law of 16 April 1979.

կարգապահական կալանքի ժամկետը չի հանվում ազատագրկման ձևով նշանակված պատժի ժամկետից⁵⁰: Լեհաստանում, սակայն, զինծառայողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության միայն դատավճռի ընդունումից հետո: Նման կարգապահական պատասխանատվությունը ներառում է իրավախախտումից տուժած անձից ներողության հայցումը, վնասի փոխհատուցումը և նման կարգապահական պատասխանատվության մասին ինֆորմացիայի հրապարակումը: Կրկին անգամ դատապարտելիության սկզբունքի տեսանկյունից, սակայն, նման կարգապահական պատասխանատվությունը որևէ խնդիր չի առաջացնում, քանի որ դրանք, ըստ էության, քրեական չեն:

Սույն պայմաններում, ելնելով կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքից՝ անհրաժեշտ է ՀՀ կարգապահական կանոնադրությամբ հստակորեն ամրագրել, թե կարգապահական որ իրավախախտումներն ինչպիսի կարգապահական տույժերի են հանգեցնում և հստակեցնել «քրեական» հանդիսացող կարգապահական տույժերի և քրեական պատասխանատվության միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը: Մասնավորապես, Կարգապահական կանոնադրության համաձայն՝ հրամանատարի կողմից ենթակային կարգապահական տույժ տալու որոշմանը պետք է նախորդի քննությունը, որը կատարվում է մեղավորներին հայտնաբերելու, զանցանքի կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու նպատակով: Եթե քննությամբ պարզվում է, որ զինծառայողի զանցանքը պարունակում է հանցակազմի հատկանիշներ, ապա գորամասի հրամանատարը տեղյակ է պահում կայագործի զինվորական դատախազին, անհրաժեշտության դեպքում հարուցում է քրեական գործ և նշանակում հետաքննություն⁵¹: Նման պայմաններում, երբ կարգապահական զանցանքի առնչությամբ տարվող կարգապահական քննության շրջանակներում տեղի ունեցած միջադեպում հայտնաբերվում են հանցագործության հատկանիշներ և հարուցվում է քրեական գործ, կարգապահական քննությունը պետք է կասեցվի, հետևաբար նաև զինծառայողը կարգապահական պատասխանատվության չպետք է ենթարկվի մինչև քրեական գործով վերջնական որոշման կայացումը: Քրեական գործով վերջնական որոշման կայացումից հետո, ելնելով զինված ուժերի հեղինակության և համբավի ամրապնդման և հետագա իրավախախտումները կանխելու անհրաժեշտությունից՝ զինծառայողի նկատմամբ կարելի է նշանակել կարգապահական տույժ, որն իր բնույթով, սակայն, «քրեական» չի լինի և չի խախտվի կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի պահանջը:

Հետևաբար, Կարգապահական կանոնադրությամբ նախատեսված նորմն առ այն, որ կարգապահական տույժը պետք է տրվի զանցանքի կատարման պահից մեկ օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան զանցանքի մասին հրամանատարին (պետին) հայտնի դառնալու պահից տասը օր հետո⁵², կարգապահական զանցանքի առնչությամբ քննության իրականացումը և նախքան կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման կայացումը արարքում հանցագործության հատկանիշների հայտնաբերումը դարձնում է անիրատեսական: Հետևաբար, «քրեական» կարգապահական տույժեր նախատեսող կոպիտ զանցանքների կատարման պայմաններում հրամանատարության կողմից իրականացվող քննությունը պետք է միտված լինի նախևառաջ բացառելու արարքում հանցագործության հատկանիշների առկայությունը: Մինչդեռ դիտարկման արդյունքում ի հայտ են եկել դեպքեր, երբ արդեն իսկ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի համար ամբաստանյալը ենթարկվել է մեկուսարանում պահելու ձևով կարգապահական տույժի:

⁵⁰ Վավերացնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ Ֆրանսիան և Իսպանիան վերապահում էին կատարել Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների՝ զինված ուժերում կարգապահական պատասխանատվության առնչությամբ:

⁵¹ Կարգապահական կանոնադրություն, կետ 91:

⁵² Նույն տեղում, կետ 93:

Օրինակ N 6

Գործերից մեկով ամբաստանյալը մեղադրվում էր ՔՕ 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ ծառայության վայրն առանց հարգելի պատճառների երեք օրից ավելի, սակայն մեկ ամսից ոչ ավել տևողությամբ ինքնակամ թողնելու համար (փաստացի ժամկետը 4 օր, երբ բերման էր ենթարկվել ՊՆ ՌՌ վարչություն): Հանցագործությունը բացահայտելուց ութ օր հետո ամբաստանյալի նկատմամբ գորամասի հրամանատարի կողմից նշանակվել էր կարգապահական տույժ՝ 10-օրյա կալանքի տեսքով: Ենթադրվում է, որ կարգապահական տույժի ենթարկելուն նախորդող քննությամբ գորամասի հրամանատարը պետք է որ նրա արարքում հայտնաբերած լիներ հանցագործության հատկանիշները և որպես հետաքննության մարմին՝ հարուցեր քրեական գործ և իրականացներ հետաքննություն: Սակայն հրամանատարի կողմից քրեական գործ չի հարուցվել, և զինծառայողը ենթարկվել է միայն կարգապահական պատասխանատվության, ինչը սույն դեպքում բացառում էր վերջինի նկատմամբ տույժը կրելուց հետո քրեական հետապնդման հարուցման հնարավորությունը (գործ N 125):

Այսպիսով՝ ուղղիչ և պատժիչ հատկանիշներից ելնելով՝ «քրեական» համարվող կարգապահական տույժերը պետք է նշանակվեն միայն օրենքով որոշակիորեն ամրագրված կարգապահական խախտումների դեպքում և նման կարգապահական տույժի նշանակումը պետք է բացառի հետագայում զինծառայողի՝ նույն արարքի համար քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվելու հնարավորությունը՝ ի պաշտպանություն կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի:

Հրապարակային դատաքննության իրավունքը

Այս գլխի շրջանակներում, որպես հրապարակային դատաքննության իրավունքի սահմանափակման վրա ազդող հիմնական գործոններ, դիտարկվել են դատական նիստերի մեկնարկումը նշանակված ժամի խախտմամբ անցկացնելը, արտագնա դատական նիստերի անցկացումը, այդ թվում դատական նիստերի անցկացումը ՀՀ տարածքից դուրս, դատական նիստերի անհարկի ձգձգումներն ու դատական նիստերի ձայնագրատման սահմանափակումները:

Ա. Հրապարակային դատաքննության իրավունքի իրավական հիմքերը: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար... իր գործի հրապարակային քննության իրավունք: Նման իրավունք է նախատեսված նաև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները... ունի արդար և հրապարակային դատաքննության իրավունք: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ քրեական գործերով և այլ իրավական հարցերով բոլոր դատավարությունները սկզբունքորեն պետք է իրականացվեն բանավոր և հրապարակային կարգով⁵³: Իսկ ՄԻԵԴ-ը գտել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում ամրագրված «հրապարակային քննության» իրավունքից անհրաժեշտաբար բխում է «բանավոր քննության» իրավունքը⁵⁴: Այն դեպքերում, երբ տվյալ դատական ատյանը առաջին և միակ ատյանն է, որը քննում է գործի թե՛ փաստական, թե՛ իրավական հարցերը, ապա բանավոր քննության իրավունքն առաջին հերթին պետք է իրականացվի այդ ատյանում⁵⁵: ՄԻԵԴ-ը բազմիցս հիշեցրել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով՝ առաջին և միակ ատյանում «հրապարակային դատաքննության» իրավունքը հանգեցնում է «բանավոր դատաքննության» իրավունքի անհրաժեշտությանը, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ, որոնք արդարացնում են նման դատաքննության բացառումը⁵⁶:

Հրապարակային դատական քննության իրավունքը առանցքային է այն իմաստով, որ այն կարևոր երաշխիք է հանդիսանում թե՛ անհատի իրավունքների, և թե՛, լայն առումով, հասարակության շահերի պաշտպանության համար: Դատական նիստերի հրապարակայնության սկզբունքը հանդիսանում է արդար դատաքննության հիմնարար սկզբունքներից, այն պաշտպանում է առանց հասարակական հսկողության արդարադատության գաղտնի իրականացումից, ինչպես նաև դատարանների հանդեպ վստահության պահպանման միջոցներից մեկն է:

Միջազգային չափանիշները պահանջում են, որ «դատական նիստը հանրության, ներառյալ՝ ՋԼՄ ներկայացուցիչների համար լինի դռնբաց, և այն չպետք է, օրինակ, սահմանափակված լինի միայն որոշակի խմբի անդամների համար»: ՄԻԵԴ-ը վճռել է, որ «քննության հրապարակային բնույթը դատավարության մասնակիցներին պաշտպանում է գաղտնի և առանց հասարակական վերահսկողության արդարադատության իրականացումից: Այն նաև դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման միջոցներից մեկն է: Արդարադատության իրականացումը դարձնելով տեսանելի՝ հրապարակայնությունը նպաստում է արդարացի դատական քննությունների հաստատմանը»:

⁵³ General Comment 32, Human Rights Committee, UN, CCPR/C/GC/32, 23 August, 2007 para. 28.

⁵⁴ *Salomonsson v. Sweden*, ՄԻԵԴ 2002թ. նոյեմբերի 12-ի վճիռը, պարբ. 34:

⁵⁵ *Håkansson and Stureson v. Sweden*, 21 February 1990, para 64.

⁵⁶ *Miller v. Sweden*, 8 February 2005, para 29.

Բ. Հրապարակային դատաքննության իրավունքի սահմանափակումները. մոնիթորինգի արդյունքներ: Դիտարկումների ենթարկված գործերից ոչ մեկով դատարանի կողմից չի կայացվել դատական քննությունը կամ դրա մի մասը դոնփակ անցկացնելու մասին որոշում: Բոլոր դատական գործերը ընթացել են դոնբաց, դատական նիստերի դահլիճ որևէ անձի մուտքը խոչընդոտելու փաստ չի արձանագրվել:


Սակայն դիտարկումների ընթացքում, այդուամենայնիվ, արձանագրվել են դատական քննության հրապարակայնության սահմանափակման որոշ դրսևորումներ: Որպես այդպիսին, կարելի է նշել դատական նիստի անցկացումը առանց դատարանի շենքում ներկա գործի մասնակիցների:

Օրինակ N 7

Արարատի և Վայոց Ձորի ընդհանուր իրավասության դատարանի Վեդու նստավայրում դատական նիստը նշանակված է եղել ժամը 12:30-ին: Մոտ կես ժամ սպասելով՝ դիտորդները նիստի քարտուղարից հետաքրքրվել են նիստի մեկնարկի մասին, որին նա պատասխանել է, որ «չի կարող ասել, սկսվելուց առաջ տեղյակ կպահի»: Դիտորդների հետ դատական նիստի մեկնարկին սպասել են նաև գործով երեք վկաները: Մոտ երկու ժամ սպասելուց հետո դիտորդը դարձյալ քարտուղարից հետաքրքրվել է նիստի մեկնարկի մասին և ստացել է պատասխան, որ նիստն արդեն տեղի է ունեցել և հետաձգվել է: Պարզվել է, որ կողմերի ներկայության մասին զեկուցելիս, քարտուղարը հայտնել է, որ չեն ներկայացել գործով ծանուցված վկաները, դատարանը գործը քննել է արագացված կարգով և դատական նիստը հետաձգվել է՝ կողմերին դատական վիճաբանությունների պատրաստվելու համար ժամանակ տրամադրելով (գործ N 1):

Հրապարակայնության սկզբունքի ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև դատական նիստերի՝ ժամանակին սկսելու հարցը: Դիտարկումների արդյունքները փաստում են, որ դատական նիստերը մեծամասամբ սկսվել են նշանակված ժամից ուշ: Ստորև բերված պատկեր 7-ում ներկայացված են տվյալներ, թե նախատեսվածից քանի րոպե ուշ է նիստը սկսվել և ինչպիսին է ուշացման տվյալ միջակայքի կրկնման հաճախականությունը:

Պատկեր 7. Նիստն ուշ սկսելու ժամանակային միջակայքերի (արտահայտված րոպեներով) կրկնման հաճախականությունը



Սակայն եղել են դեպքեր, երբ նիստը սկսվել է նշանակված ժամից ավելի շուտ: Երկու դեպքում նիստերը սկսվել են 10 րոպե շուտ, երկու դեպքում՝ մոտ 1 ժամ և 40 րոպե շուտ և ևս երկու դեպքում՝ մոտ 3,5 ժամ շուտ:

Դիտարկումների արդյունքների վերլուծությունը փաստում է, որ դատական նիստերի՝ նշանակված ժամից ուշ սկսելու ամենամեծ ցուցանիշները գրանցվել են Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի Վեդու նստավայրում, իսկ ճշտապահության առումով առանձնացել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը:

Զինվորական գործերով դիտարկվել են դատական նիստերի հրապարակայնությունը սահմանափակող մի շարք հիմնախնդիրներ ևս:

Արտագնա դատական նիստերի անցկացում

Դատական նիստերի հրապարակայնության սահմանափակման լուրջ վտանգ է պարունակում արտագնա դատական նիստերի իրականացումը, հատկապես գորամասերի տարածքում: Դիտարկումների ընթացքում արձանագրվել են դատական նիստերի արտագնա իրականացման մի շարք դեպքեր: Մասնավորապես, 52 գործով տեղի է ունեցել արտագնա դատական նիստ այլ դատարանում, ևս 14 գործով արտագնա դատական նիստեր են տեղի ունեցել գորամասերում:

Արտագնա դատական նիստերի անցկացման վերաբերյալ միակ օրենսդրական դրույթը նախատեսված է ՀՀ ՔԴՕ-ով որի 41-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Գործը քննող դատավորի որոշմամբ կարող է անցկացվել արտագնա դատական նիստ, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»: Ճիշտ է, դատական նիստի անցկացումը դատարանից դուրս, որպես այդպիսին, չի ենթադրում դրա ոչ հրապարակային բնույթը, այդուամենայնիվ, դատական նիստի անցկացումն այնպիսի վայրում, ինչպիսին է գորամասը, որտեղ հասարակության ներկայացուցիչների ազատ մուտքն արգելված է, հրապարակայնության սկզբունքի սահմանափակման վտանգ է պարունակում: Եթե նիստը գորամասում է անցկացվում, ապա դժվար է ապահովել բոլոր ցանկացողների ներկայությունը (բացառությամբ ամբաստանյալի ծառայակիցների):

Արտագնա դատական նիստերի անցկացումը վտանգում է նաև հանրության իրազեկվածությունը նիստերի անցկացման տեղի ու ժամանակի վերաբերյալ: Նման պրակտիկան անկախ դիտորդների համար նիստին ներկա գտնվելու հետ կապված խնդիրներ կարող է առաջացնել, քանի որ պարզ չէ, թե ինչպես վերջիններս կարող են տեղեկանալ նիստի անցկացման վայրի վերաբերյալ: Այստեղ, ըստ փորձագետ դատավորի, շահերի բախման խնդիր կա: Մի կողմից՝ արտագնա դատական նիստն իր դաստիարակչական նշանակությամբ նաև այլ զինձառայողների կողմից հանցագործությունների կանխարգելման խնդիր ունի, մյուս կողմից՝ այս խնդիրը հակասության մեջ է մտնում դատական նիստի հրապարակայնության սկզբունքի հետ, քանի որ հասարակության մյուս անդամները գործնականում զրկված են նման նիստին մասնակցելու հնարավորությունից: Մինչդեռ ՄԻԵԴ-ը փաստել է, որ պետությունն է կրում պարտականություն ձեռք առնելու համապատասխան միջոցներ՝ ապահովելու հասարակության և լրատվամիջոցների տեղեկացվածությունը իրականացվող դատական նիստի տեղի և ժամանակի մասին, ինչպես նաև նրանց արդյունավետ մուտքը նիստին:

Դատական նիստերի անցկացումը գորամասերում իր մեջ պարունակում է նաև արդար դատաքննության իրավունքի սահմանափակման այլ ռիսկեր, քանի որ գորամասերում բացակայում են արտագնա դատական նիստերի ձայնագրատման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, ինչպես նաև պետության խորհրդանիշները:

Օրինակ N 8

Մյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում դիտարկված գործերից մեկով նիստերը տեղի են ունեցել երեք տարբեր դատարաններում: Ի սկզբանե դատական նիստերը նշանակված են եղել դատարանի՝ Գորիս քաղաքում տեղակայված նստավայրում, սակայն քանի որ հանցագործությունը տեղի էր ունեցել ԼՂ տարածքում և գործով անցնող վկաների ներկայությունը դատարանում ապահովելու անհրաժեշտություն կար, ապա արտագնա դատական նիստերը տեղի են ունեցել Ստեփանակերտ քաղաքում: Այնուհետև դատարանը, առանց այդ մասին դատական քննության ընթացքում կանխավ հայտարարելու, որոշում է կայացրել արտագնա դատական նիստ անցկացնել արդեն Արտաշատ քաղաքում՝ ի ապահովումն տուժողների՝ դատարանում հարցաքննվելու հնարավորությանը (գործ N 178):

Խնդրահարույց է նաև դատարանների կողմից արտագնա դատական նիստերի՝ ՀՀ պետական սահմանից դուրս իրականացնելու պրակտիկան: Ինչպես ցույց են տալիս դիտարկումների արդյունքները, Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների կողմից, «արդարադատության շահ»-ի վկայակոչմամբ, արտագնա դատական նիստեր են անցկացվում ՀՀ տարածքից դուրս՝ Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններում: Այս պրակտիկայի իրավաչափությունը

վիճահարույց է, քանի որ այն կարգավորված չէ ո՛չ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, ո՛չ ՀՀ միջազգային համաձայնագրերով:

Դատարանի պայմանները, վայրն ու տեղակայումը

Դատական իշխանության հեղինակության և դատական նիստերի հրապարակայնության իրական ապահովման և երաշխավորման համար կարևոր նշանակություն ունի նաև դատարանի շենքային պայմանները, տեղակայման վայրն ու հասանելիությունը: Շենքային վատթար պայմաններ են արձանագրվել հիմնականում մարզային դատարաններում: Դրանց մի մասում ամենաակտուալ խնդիրներից է դահլիճների բացակայությունը, ինչի պատճառով դատական նիստերի մի մասը հետաձգվում կամ նշանակվածից էական ուշացումով է սկսվում: Նման դատարաններում առկա խնդիրներից էր նաև սանհանգույցի հարցը, հատկապես նիստերի ձգձգման, ուշացման պայմաններում: Որոշ դատարաններում սանհանգույցների դռները միշտ բանալիով փակ էին և այն հասանելի էր միայն դատարանի աշխատակիցների համար: Գավառի դատարանում սանհանգույցը բաց էր բոլոր ցանկացողների համար, սակայն շենքն ուներ ջրամատակարարման խնդիր, իսկ սանհանգույցն իրենից ներկայացնում էր փորված փոս: Ջրամատակարարումից բողոքում էր նաև Վեդիի դատարանի աշխատակազմը՝ «... սպասում ենք, որ գնանք տուն, հանգիստ օգտվենք սանհանգույցից»:

Բացի բուն շենքային պայմաններից կարևոր է նաև դատարանի տեղակայման վայրը՝ դատական իշխանության հեղինակության ապահովման տեսանկյունից: Այսպես, Եղեգնաձորի դատարանը տեղեկայված է անմիջապես ռոտիկանության շենքի 3-րդ հարկում, իսկ դատարանի գտնվելու տեղի վերաբերյալ ցուցանակը տեսանելի չէ շենքի ճակատային մասից: Ի հակադրություն դատարանի՝ դատախազությունն ունի հարևանությամբ գտնվող առանձին և բարվոք վիճակում գտնվող շենք: Ակնհայտ է, որ դատարանի տեղակայման վայրն ու շենքային պայմանները, հատկապես ռոտիկանության և դատախազության տեղակայման և պայմանների համեմատ, դատական իշխանության հզորության և անկողնակալության նկատմամբ թերահավատության և անվստահության պատճառ կարող է դառնալ:

Նույնը վերաբերում է նաև Գավառ քաղաքի դատարանին: Բացի դատարանից, նույն շենքում են տեղակայված քաղաքի ռոտիկանությունը, նոտարական գրասենյակը: Դարձյալ ավելի տեսանելի և արտահայտիչ է ռոտիկանության ցուցանակը և առաջին անգամ դատարանի շենքը ճանաչելու համար անհրաժեշտ է հարցուփորձ անել: Քաղաքի նոտարական գրասենյակը գործում է դատարանի միակ դատական նիստերի դահլիճի հարևանությամբ:

Ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի իրացումը: Դատական նիստերի ձգձգումներ

Դիտարկումներն արձանագրել են զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերի ձգձգումների միտումներ:

Դատական նիստերի ձգձգումները, երկարաժամկետ հետաձգումները, որպես կանոն, պայմանավորված են ինչպես ամբաստանյալների, այնպես էլ վկաների ու տուժողների՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու հանգամանքով: Շատ են դեպքերը, երբ վերջիններս գործուղման մեջ են լինում՝ մեկնած են լինում այլ զորամասեր կամ զորավարժությունների, ներգրավված են լինում մարտական հերթապահության մեջ կամ վերակարգերում: Օրինակ՝ Վանաձորի դատարանում քննվող գործերից մեկում նիստը մի քանի անգամ հետաձգվել էր ծառայողական տարբեր պարտականությունների իրականացման հանգամանքով պայմանավորված՝ վկայի դատարան չներկայանալու պատճառով: Մեկ այլ դեպքում վկաներից

մեկին գործուղել էին արտասահման և գործի քննությունն այդ պատճառով մոտ 1 ամիս հետաձգվեց:

Ջորամասերի հեռավորությունը դատարանից նույնպես էական խոչընդոտ է վկաների ներկայությունը ապահովելու համար, հատկապես այն դեպքերում, երբ դատական նիստերը տեղի են ունենում ձմեռային ամիսներին, իսկ ճանապարհները փակված են լինում: Այսպես, Վարդենիսի դատարանում, որտեղ քննվում են Քարվաճառի գործառնի դեպքերը, ձմեռային ամիսներին գրեթե նիստեր տեղի չեն ունենում, քանի որ ձյան պատճառով փակված ճանապարհները բարդացնում են գործի կողմերի ներկայության ապահովումը:

Նիստերի ձայնագրառումների հետ կապված հիմնախնդիրներ

Դատական նիստի ձայնագրառումն ապահովող սարքն առկա է եղել դիտարկված 387 նիստերից 154-ում, առկա չի եղել 180-ում: Եվս 53 նիստերի դեպքում հնարավոր չի եղել պարզել համապատասխան սարքի առկայության փաստը: Այսպիսով՝ դիտարկված նիստերից յուրաքանչյուր երկրորդում ձայնագրառումն ապահովող սարքն առկա չի եղել: Մակայն պետք է հաշվի առնել հատկապես մարզային դատարաններում (որտեղ շենքային պայմանները հիմնականում անբավարար են) մեկ գործով նշանակված նիստերի քանակը:

Բարձրախոսը (միկրոֆոնը) առկա է եղել դիտարկված 387 նիստերից 132-ում, առկա չի եղել 200-ում: Եվս 55 նիստերի դեպքում հնարավոր չի եղել պարզել համապատասխան սարքի առկայության փաստը: Այսպիսով՝ դիտարկված նիստերից առնվազն 50%-ից ավելի դեպքերում բարձրախոսը (միկրոֆոնը) առկա չի եղել:

Որոշ դատարաններում (օրինակ՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում) դատական նիստերի ձայնագրառումների հետ կապված խնդիրներ կան: Մասնավորապես, հստակեցված չէ կուտակված տեղեկատվության արխիվացման հարցը. պարզ չէ, թե ինչպես և ինչպիսի կրիչների վրա պետք է արխիվացվի առկա տեղեկատվությունը:

Կախված շենքային պայմաններից՝ մի շարք դատարաններում ընդհանրապես բացակայում է նիստի ձայնագրառման հնարավորությունը: Այսպես, Վարդենիսի դատարանը, որ ժամանակավորապես տեղակայված է քաղաքապետարանի շենքում, չունի համապատասխան տեխնիկական հնարավորություններ: Դատական նիստերի քարտուղարը ձայնագրառման համար օգտագործում էր ձեռքի փոքրիկ ձայնագրիչ, ինչի միջոցով կատարված ձայնագրառման որակը խիստ կասկածելի է:

Նիստերի ձայնագրառման հնարավորության բացակայությունը խնդիրներ էր առաջացնում նաև այլ դատարաններում, հատկապես բարդ՝ բազմաթիվ ամբաստանյալներով և վկաներով գործերի քննության ժամանակ: Օրինակ՝ Գավառի դատարանում նիստերը չէին ձայնագրառվում և ակնհայտ զգացվում էր, որ նիստերի քարտուղարը չէր հասցնում արձանագրել շատ կարևոր հանգամանքներ: Այդ պատճառով շատ հաճախ պաշտպանները դիտորդներին էին մոտենում և նրանցից խնդրում նիստերի ձայնագրությունները:

Վեդիի դատարանում նույնպես ձայնագրառում չի իրականացվում: Ըստ դիտորդի դիտարկումների՝ մի շարք դատական նիստերի ընթացքում նիստի քարտուղարը չէր արձանագրում նիստի ընթացքը, քանի որ կամ պարզապես հետևում էր նիստի ընթացքին, կամ ինչ-որ այլ գրառումներ կատարում:

Պաշտպանության իրավունքը

Պաշտպանության իրավունքի համատեքստում սույն գլխի շրջանակներում դիտարկվել են մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքից օգտվելու, պաշտպանների կողմից իրենց կարգավիճակի հավաստման հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև մինչդասական վարույթում փաստաբանի ներգրավվածության և կիրառված խափանման միջոցի ընտրության օրինաչափությունները:

Ա. Պաշտպանության իրավունքի իրավական հիմքերը: ՔԴՕ 19-րդ հոդվածը նախատեսում է կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. ...բ. բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանների միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված պաշտպան, երբ դա պահանջում է արդարադատության շահը...:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ պաշտպանության իրավունքի վերաբերյալ դիրքորոշման համաձայն՝ պաշտպանության իրավունքը կասկածյալին/մեղադրյալին վերապահված դատավարական իրավունքների ամբողջություն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքը, որպես կասկածյալին/մեղադրյալին վերապահված իրավունքների ամբողջություն, հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ՔԴՕ-ով սահմանված կարգով նշանակված պաշտպանի միջոցով: ՔԴՕ-ի իմաստով կասկածյալի/մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը⁵⁷: Եվ եթե նա բավարար միջոցներ չունի պաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, իրավունք ունի ունենալ անվճար պաշտպան, երբ դա պահանջում է արդարադատության շահը:

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք ունի օրենքով նախատեսված դեպքերում պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու իրավունք⁵⁸: Այս իրավունքի իրականացումը նախատեսված է քրեական գործերով՝ ՔԴՕ-ով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով⁵⁹:

ՔԴՕ 69-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ *մեղադրյալը* ժամկետային ծառայության զինծառայող է: Անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ ՔԴՕ 69-րդ հոդվածը, ի տարբերություն պաշտպանի պարտադիր մասնակցության այլ դեպքերի, պաշտպանի պարտադիր մասնակցություն նախատեսում է միայն ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող ՄԵՂԱԴՅԱԼԻ համար՝ այդպիսով լռելով՝ կասկածյալի կարգավիճակում գտնվող զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց՝ պարտադիր պաշտպան ունենալու իրավունքի մասին: Օրենսդրական նման կարգավորումը լուրջ խնդիր է

⁵⁷ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՅՔԴԴ2/0153/01/08 որոշում, կետ 25:

⁵⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 20:

⁵⁹ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

հանցագործության մեջ կասկածվող զինձառայողի համար, քանի որ հենց կասկածյալի կարգավիճակում են զինձառայողները առաջին անգամ հարցաքննվում, իսկ պաշտպանի բացակայության պայմաններում վերջիններից խոստովանական ցուցմունքների կորզումը և նրանց այլ դատավարական իրավունքների խախտումների հնարավորությունն առավել հավանական է:

Բ. Պաշտպանության իրավունքի իրացում. մոնիթորինգի քանակական տվյալներ:
Դատական քննության ընթացքում պաշտպան ունենալու իրենց իրավունքից 290 ամբաստանյալներից օգտվել են 264-ը, իսկ 290 ամբաստանյալներից ընդամենը 83-ն են ունեցել պաշտպան մինչդատական վարույթի ընթացքում:

Դատական քննության 7% դեպքերում տեղի է ունեցել պաշտպանի փոխարինում: Դատական քննության ընթացքում ամբաստանյալը հրաժարվել է իր պաշտպանից 13% դեպքերում:

Մեղադրյալների կողմից պաշտպան ունենալու իրավունքից հրաժարումը պայմանավորված է վարույթն իրականացնող մարմնի կողմից այդ իրավունքի չներկայացմամբ կամ անլիարժեք պարզաբանմամբ, տվյալ իրավունքի իրականացման համար հնարավորությունների չապահովմամբ, ամբաստանյալների միջոցների սղությամբ, պաշտպանների նկատմամբ ամբաստանյալների անվստահությամբ և այլ պատճառներով:

Օրինակ N 9

Դատական նիստի ժամանակ դատավորը պարզեց, որ ամբաստանյալը նախաքննության ընթացքում չի ունեցել պաշտպան և տեղյակ չէր պաշտպանի պարտադիր մասնակցության և անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների մասին: Այն բանից հետո, երբ դատարանը բացատրեց նրա պաշտպան ունենալու իրավունքը, պայմանագրային պաշտպանի և հանրային պաշտպանի իմաստն ու նշանակությունը, բոլոր ժամկետային զինձառայողների՝ հանրային պաշտպանի գրասենյակ դիմելու իրավունքը, ամբաստանյալը ցանկություն հայտնեց իր իրավունքները պաշտպանել պաշտպանի միջոցով (գործ N 11):

Օրինակ N 10

Գործերից մեկով ամբաստանյալը պաշտպան չի ունեցել, որովհետև մտածել է, որ եթե ինքը անմեղ է, իրեն պաշտպան պետք չի գա, բայց հիմա մտածում է, որ անմեղ լինելը քիչ է և իրեն պաշտպան է պետք: Այդուամենայնիվ, երբ դատավորը բացատրեց, որ ինքը պաշտպան ընտրելու հնարավորություն չունի, այլ վերջինս նշանակվելու է հանրային պաշտպանի գրասենյակի կողմից, ամբաստանյալը չցանկացավ օգտվել հանրային պաշտպանի ծառայությունից (գործ N 40):

Օրինակ N 11

Նիստին մասնակցում էր հանրային պաշտպան, սակայն դատարանը պարզեց, որ ամբաստանյալը աշխատավարձ է ստանում և որոշեց, որ այդ պայմաններում ամբաստանյալը չի օգտվում հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելու իրավունքից: Ամբաստանյալը չհրաժարվեց պաշտպանից: Նա ասաց, որ ուզում է պաշտպան, սակայն չի կարող վճարել դրա համար և իրեն անվճար պաշտպան է պետք: Հաջորդ նիստին պաշտպանը փոխարինվեց և ներգրավվեց մասնավոր պաշտպան (գործ N 84):

Դիտարկման ենթարկված գործերից 142-ը տեղի է ունեցել արագացված կարգով: Առնվազն յուրաքանչյուր երկրորդ գործում պաշտպանները ներգրավվել են դատական քննության ընթացքում, դատական նիստերը չեն հետաձգվել և վերջիններս գործին անտեղյակ ստանձնել են ամբաստանյալի պաշտպանությունը: Դատաքննության փուլում պաշտպանի այսպիսի ձևական մասնակցությունն ապահովվել է, որպես կանոն, արագացված կարգի անցնելու նկատառումներից ելնելով. դրանով իսկ ամբաստանյալները զրկվել են արդյունավետ պաշտպանության իրավունքի իրականացումից: Դա հատկապես վերաբերում է պետության կողմից տրամադրված իրավաբանական օգնությանը՝ հանրային պաշտպանների ներգրավման դեպքերում:

Դիտարկման ենթարկված գործերով դատական քննության ընթացքում ներգրավված պաշտպանների 62%-ը եղել են հանրային, 38%-ը՝ մասնավոր:

Օրինակ N 12

Դիտարկման ենթարկված գործերից մեկում դատական քննության ընթացքում ներգրավվել էր հանրային պաշտպան, ով քրեական գործի նյութերին ծանոթանալու միջնորդություն ներկայացրեց՝ պատճառաբանելով, որ դատական նիստին ներկայանալուց ընդամենը մեկ ժամ առաջ է ստացել գրասենյակի ղեկավարի որոշումը: Գործի «նյութերին» ամբաստանյալի հետ զրույցից ծանոթանալով՝ սկսվեց գործի քննությունը: Դատարանին ներկայացվելիք միջնորդությունների բացակայության պայմաններում դատարանն անցավ դատաքննության և առաջարկեց հրապարակել մեղադրական եզրակացությունը, ինչի կապակցությամբ մեղադրող դատախազը հայտնեց, որ մեղադրական եզրակացությամբ չի առարկել արագացված դատական քննության կարգ կիրառելու դեմ և հիմա էլ կողմ է: Առաջարկեց լսել պաշտպանության կողմին այդ կապակցությամբ: Այս խոսքերից հետո հանրային պաշտպանը ժամանակ տրամադրելու միջնորդություն ներկայացրեց՝ ճշտելու իր պաշտպանյալի դիրքորոշումը: Մոտ 2-3 րոպե տևած խորհրդակցությունից հետո պաշտպանն ու իր պաշտպանյալը հանդես եկան միջնորդությամբ՝ արագացված դատաքննության կարգ կիրառելու վերաբերյալ (գործ թիվ 128):

Օրինակ N 13

Դատական նիստերից մեկի ընթացքում դատավորը հայտարարեց ընդմիջում, որպեսզի գործին նոր ներգրավված պաշտպանը ծանոթանա գործի նյութերին: Ընդմիջումից անմիջապես հետո կարգադրիչը մոտեցավ պաշտպանին և կանչեց դատավորի սենյակ: Պաշտպանը, առանց որևէ փաստաթուղթ իր հետ վերցնելու, գնաց: Երբ վերադարձավ դահլիճ, դատավորը եկավ և շարունակեց նիստը՝ պաշտպանին հարցնելով. «ծանոթացա՞ք գործին», պաշտպանը պատասխանեց «այո», և նիստը շարունակվեց (գործ N 175):

Օրինակ N 14

Ամբաստանյալը ներկայացել էր նիստին առանց պաշտպանի և մտադրություն չունեղ օգտվելու փաստաբանի ծառայություններից: Սակայն դատավորի օգնականի նախաձեռնությամբ նիստի սկզբից մոտ 30 րոպե առաջ գործին պաշտպան ներգրավվեց: Թեև պաշտպանը տեղյակ չէր նույնիսկ մեղադրական եզրակացությանը, քանի որ այն չէր տրամադրվել անգամ ամբաստանյալին, նիստը շարունակվեց և պաշտպանի նախաձեռնությամբ դատական

քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացվեց դատարանին: Ըստ էության, պաշտպանը ներգրավվել էր դատավորի օգնականի նախաձեռնությամբ, որպեսզի ապահովվի արագացված կարգի կիրառության նախադրյալները ու գործի քննությունը չհետաձգվի (գործ N 114):

Գ. Պաշտպանի կարգավիճակի հավաստման հիմնախնդիրը. իրավական վերլուծություն:
ՔԴՕ 68-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

ՔԴՕ 71-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանն իր իրավավիճակը հաստատելու համար վարույթն իրանականացնող մարմնին է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ և Փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը:

Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով օտարերկրացի փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում գործում է իր պետության համապատասխան փաստաբանական կառույցի տված արտոնագրի հիման վրա և պետք է հավատարմագրվի Փաստաբանների պալատում⁶⁰:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ օտարերկրացի փաստաբանը, կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունը ստանձնելիս, վարույթն իրականացնող մարմնին ի լրումն ՔԴՕ 71-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի, պետք է ներկայացնի նաև ՀՀ Փաստաբանական պալատում հավատարմագրված լինելու փաստը հաստատող փաստաթուղթ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

ՔԴՕ 104-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալներ, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ՔՕ-ով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում որպես ապացույց չեն կարող օգտագործվել կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի էական խախտմամբ, տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից, քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները: ՔԴՕ 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ

⁶⁰ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

ՔԴՕ 106-րդ հոդվածի համաձայն՝ փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաև վարույթում դրանց սահմանափակ օգտագործման հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Ապացույցի թույլատրելիությունը հիմնավորելու պարտականությունը ընկած է այն ձեռք բերող կողմի վրա:

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով՝ ապացույցների հավաքմանն ու ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում:

Հետևաբար, ոչ պատշաճ պաշտպանի մասնակցությամբ տեղի ունեցող դատական քննության ընթացքում ձեռք բերված ապացույցները պետք է ճանաչվեն անթույլատրելի և չեն կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում:

Դ. Պաշտպանի կարգավիճակի հավաստման հիմնախնդիրը. մոնիթորինգի արդյունքներ: Դիտարկումների ընթացքում տեղ գտած կարևոր և մտահոգիչ արդյունքներից էր նաև այն, որ չորս փաստաբաններ, որոնք նշված չեն հանրային պաշտպանների ցանկում, գործին ներգրավվել և մասնակցել են որպես հանրային պաշտպաններ:

Երկու պաշտպանների դեպքում արտագնա դատական նիստը նշանակված էր գորամասում: Ըստ դիտարկումների տվյալների՝ պաշտպանները գորամաս էին ներկայացել դատավորների հետ, ըստ երևույթին, վերջիններիս անձնական խնդրանքով, որպեսզի պաշտպանի բացակայության պատճառով նիստը չհետաձգվի: Նիստի հնարավոր հետաձգումը կանխելու համար նրանք թե՛ դիտորդներին, թե՛ ամբաստանյալներին ներկայացել էին որպես հանրային պաշտպաններ և վերջիններիս առաջարկել էին օգտվել իրենց անվճար ծառայություններից: Դիտորդների հավաստմամբ՝ այս դեպքերում պաշտպաններն ամբաստանյալներին նյութական պահանջներ չեն ներկայացրել և որպես հանրային պաշտպան հանդես գալու հանգամանքը չեն օգտագործել որևէ այլ նպատակով:

Անհրաժեշտ է փաստել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության դատարանի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում տեղի ունեցած արտագնա դատական

նիստերի ընթացքում որպես ամբաստանյալի պաշտպան ներգրավված է եղել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից արտոնագրված փաստաբան, ում Հայաստանի Հանրապետության Փաստաբանական պալատի կողմից հավատարմագրված լինելու հանգամանքը դատական քննության ընթացքում չի պարզվել: Մինչդեռ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանները Հայաստանի Հանրապետության դատարաններում ամբաստանյալի պաշտպանությունն ստանձնելիս դատարանին պետք է ներկայացնեն նաև ՀՀ փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ:

Կողմերի հավասարության, մրցակցության սկզբունքի պահպանումը և *ex parte* շփումների բացառումը

Կողմերի հավասարության և մրցակցության իրավունքի խախտումները դիտարկվել են հետևյալ խնդիրների համատեքստում.

1. պաշտպանության կողմից ներկայացված միջնորդությունների անհիմն մերժումներ,
2. առանց հարգելի պատճառների բացակայող մեղադրանքի կողմի վկաների ներկայության չապահովումը և մինչդատական վարույթի ընթացքում տրված գրավոր ցուցմունքների հիման վրա մեղադրական դատավճիռների կայացումը,
3. դատարանում վկաների հարցաքննության հիմնախնդիրները,
4. նախաքննական ցուցմունքների կիրառումը դատական քննության ընթացքում:

Սույն գլխի շրջանակներում նաև քննարկման են արժանացել.

1. *ex parte* շփումները դատավորների հետ,
2. ոչ ֆորմալ շփումները դատախազների հետ,
3. խորհրդակցական սենյակի գաղտնիության խախտումը:

Ա. Կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքի իրավական հիմքերը: Քրեական դատավարության ընթացքում գործի արդարացի քննության սկզբունքը պահանջում է, որպեսզի դատական քննության ընթացքում պահպանվեն կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները: Վերոգրյալ սկզբունքները զարգացում են ապրել մարդու իրավունքներն ամրագրող փաստաթղթերում:

Մասնավորապես, առաջին անգամ սույն սկզբունքներն ամրագրվել են 1948թ. Մարդու իրավունքների հռչակագրում, որի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիմունքով իրավունք ունի, որ իր գործը քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»: Չնայած Հռչակագրի դրույթները ընդհանուր բնույթ էին կրում՝ սակայն դրանք հանցագործության մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության սկզբնաաղբյուր հանդիսացան:

Քրեական գործի քննության արդարացիության պահանջ է նախատեսում նաև ՔՔԻՄԴ-ը⁶¹: Դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի համար նախատեսված նվազագույն երաշխիքները:

ՄԻԵԿ-ը նույնպես ամրագրում է արդար դատաքննության իրավունքը⁶²: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի նվազագույն իրավունքները: Մասնավորապես, քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

⁶¹ ՔՔԻՄԴ, հոդված 14: Ընդունվել է 1966թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից:

⁶² ՄԻԵԿ, հոդված 6: Ընդունվել է 1950թ.-ին ԵԽ-ի կողմից:

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի պաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված պաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններում, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՔԴՕ 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

Նույն հոդվածի 5-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող կողմերը ՔԴՕ-ով օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերի համար ապահովվել են հավասար պայմաններ: Դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է: Եվ գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը առաջին ատյանի դատարանում ... ապահովում է դատարանը:

Ճիշտ է, մրցակցության և կողմերի հավասարության մասին Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ուղղակիորեն չի մատնանշում, այդուամենայնիվ, ՄԻԵԴ-ը, իր նախադեպային որոշումներում մեկնաբանելով դատաքննության արդարացիությունը, դրանում ներառել է նաև կողմերի հավասարությունը և մրցակցությունը: ՄԻԵԴ-ը ամրագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավունքները սպառիչ չեն: Դրանք միայն հաստատում են արդար դատաքննության սկզբունքային երաշխիքները: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը դիտվում են որպես ընդհանուրի և մասնավորի հարաբերակցություն: Քրեական դատավարությունը որպես այդպիսին չի համապատասխանի արդարացիության չափանիշներին, եթե նույնիսկ 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքները պահպանված լինեն:

Այսպես, ՄԻԵԴ-ի կողմից հաստատվել է, որ կողմերի հավասարության սկզբունքի իմաստն այն է, որ երկու կողմերի համար էլ ապահովվի գործի փաստերի և հակառակ կողմի փաստարկների վերաբերյալ ինֆորմացիան և կողմի համար ապահովվի հնարավորությունը՝ պատասխանելու դրանց⁶³: Կողմերի հավասարությունը (զենքերի հավասարությունը) պահանջում է, որ յուրաքանչյուր կողմ իր գործը՝ ներառյալ ապացույցները, ներկայացնելու հնարավորություն ունենա այնպիսի պայմաններում, որոնք վերջինիս չեն դնում էական անբարենպաստ վիճակի մեջ իր հակառակորդի նկատմամբ: Կողմերի միջև արդարացի հավասարակշռություն պետք է հաստատվի:

ՄԻԵԴ-ն արդար դատաքննության իրավունքի խախտում է ճանաչել այնպիսի գործերում, որտեղ ներպետական դատական ատյանները դատավճիռները հիմնավորել են այնպիսի փաստարկներով, որոնց վերաբերյալ ամբաստանյալները տեղյակ չեն եղել: Մատուցան ընդդեմ

⁶³ Feldbrugge v. Netherlands no: 8562/79, 29 May, 1986.

Իտալիայի գործով Դատարանն ամրագրել է դիմումատուի իրավունքը՝ քննության սկզբնական փուլերում տեղեկացված լինելու իրեն վերագրվող արարքի բնույթի և հանգամանքների վերաբերյալ⁶⁴: Աբբասովն ընդդեմ Ադրբեջանի գործում Դատարանն ամրագրել է, որ դատաքննության արդարացիության պահանջը ներառում է կողմերի հավասարության սկզբունքը և մրցակցության վրա հիմնված դատաքննության իրավունքը: Մա նշանակում է, որ ինչպես մեղադրողը, այնպես էլ ամբաստանյալը պետք է ունենան հավասար հնարավորություն՝ իրազեկվելու մյուս կողմի ներկայացրած ապացույցներին և փաստարկներին և մեկնաբանելու դրանք⁶⁵:

Քրեական դատավարության արդարացիության տեսանկյունից բավարար չէ, որպեսզի անձը հանգամանորեն տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի վերաբերյալ: Անհրաժեշտ է, որպեսզի անձն ունենա բավարար ժամանակ և հնարավորություն իրեն դատարանում պաշտպանելու համար: Քրեական դատավարության տեսանկյունից բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունքը կարևոր տեղ է զբաղեցնում քրեական դատավարության ընթացքում ամբաստանյալի իրավունքների լավագույնս պաշտպանելու տեսանկյունից:

Կողմերի հավասարության և մրցակցության իրավունքի տեսանկյունից հույժ կարևորություն ունի նաև իր դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու պրակտիկ հնարավորության ապահովումը: Մրցակցային քրեական դատավարության ընթացքում բոլոր ապացույցներն, ըստ էության, պետք է ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ և դատարանի առջև: Այս պահանջի իրավական հիմքը ՄԻԵԿ-ի 6.3(դ) հոդվածն է, որն ամրագրում է քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները: Հետևաբար, պետությունը, ի դեմս դատարանի, կրում է դատաքննության ընթացքում վկաների ներկայությունն ապահովելու պոզիտիվ պարտավորություն:

Պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումները ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի հետ անհամատեղելի են համարվում այն ժամանակ, երբ դատապարտումը հիմնված է բացառապես կամ որոշիչ չափով այն վկայի ցուցմունքների վրա, ում մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ ով նախաքննության ընթացքում կամ դատական քննության ժամանակ չի հարցաքննվել դատական մարմնի կողմից:

Բ. Կողմերի հավասարության սկզբունքի ապահովումը. մոնիթորինգի արդյունքներ: Հատկանշական է, որ պաշտպանության և մեղադրող կողմի՝ դատարան ներկայացած վկաների համամասնությունը, ըստ մոնիթորինգի շրջանակներում ձեռք բերված տվյալների, գրեթե նույնական է 36%՝ պաշտպանության կողմի և 34%՝ մեղադրող կողմի դեպքում:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ կողմերի հավասարության և մրցակցության տեսանկյունից կարևորվում է, որ դիտարկված գործերից 62% դեպքերում դատական նիստին բացակայող մասնակիցների պարագայում դատական նիստերը շարունակելու մասին որոշում է կայացվել:

Օրինակ N 15

⁶⁴ Mattoccia v. Italy, no: 23969/94, 25 July 2000.

⁶⁵ Abbasov v. Azerbaijan, 17 January 2008, para. 30, Brandstetter v. Austria, 28 August 1991, para. 66-67.

Դիտարկման ենթարկված գործերից մեկի քննության ընթացքում ընդհանուր կարգի պայմաններում դատակոչի ենթակա վկաներից ոչ ոք չի հարցաքննվել: Դատական նիստի ընթացքում կողմերը փոխհամաձայնության եկան վկաներին դատարանում չհարցաքննելու վերաբերյալ, քանի որ գործամասը շատ հեռու էր և վերջիններիս ներկայությունն ապահովելը մեծ ծախս է գործամասի համար: Պաշտպանության կողմից որևէ հակադրություն տեղի չի ունեցել, քանի որ ամբաստանյալները պաշտպանվում էին ինքնուրույն: Սույն գործով դատավճիռը հիմնվել է լուրջ վկաների նախաքննության ընթացքում տված ցուցմունքների վրա (գործ N 99):

Օրինակ N 16

Գործերից մեկում գործամասի հրամանատարը հրավիրված էր որպես վկա: Սակայն տեղի ունեցած երեք դատական նիստերից ոչ մեկին վերջինս չէր ներկայացել: Ջորամասը ներկայացնող սպա վկաներից մյուսը տեղեկացրեց, որ գործամասի հրամանատարը մասնակցում է հրամանատարական խորհրդակցության, ինչի պատճառով նրա մասնակցությունն անհնար է: Դատավճիռի հիմքում դրվեց դատարանի կողմից հրապարակված հրամանատարի նախաքննական ցուցմունքը (գործ N 158):

Դատական քննության ընթացքում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքի տեսանկյունից կարևորվում է նաև կողմերի ներկայացրած միջնորդությունների վերաբերյալ դատարանի որոշումները: Դիտարկման ենթարկված գործերի ընթացքում ընդհանուր առմամբ մերժվել են դատարանին ներկայացրած միջնորդությունների 9%-ը⁶⁶:

Օրինակ N 17

Դիտարկված գործերից մեկում ամբաստանյալներից մեկի պաշտպանը միջնորդեց կատարել հարցաքննված վկայի և ամբաստանյալներից մյուսի առերես հարցաքննություն՝ ցուցմունքներում առկա էական հակասությունը պարզելու կապակցությամբ: Միջնորդության քննարկման ժամանակ մեղադրանքի կողմը հայտնեց, որ վկան և ամբաստանյալը հարցաքննվել են, կարելի էր ուղղել հարցեր այդ ժամանակ: Պաշտպանի միջնորդությունը մերժվեց դատարանի կողմից՝ առանց որևէ հիմնավորման: Այնուամենայնիվ, ցուցմունքների միջև առկա հակասությունը էական էր և վերաբերում էր մեղսագրվող հանցագործության մեջ ամբաստանյալի մեղավորությանը և նպատակներին վերաբերող հանգամանքներին:(գործ N 57):

Պաշտպանության կողմից դատավորի դեմ ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացվել 2 անգամ, որոնք 2-ն էլ մերժվել են: Պաշտպանության կողմից մեղադրողի դեմ ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացվել մեկ անգամ, որը մերժվել է:

Գ. Դատարանում վկաների նախաքննական ցուցմունքների կիրառման հիմնախնդիրը. մոնիթորինգի արդյունքներ: Մրցակցային քրեական դատավարության ընթացքում բոլոր ապացույցներն, ըստ էության, պետք է ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ և դատարանի առջև: Ամբաստանյալը պետք է իր դեմ ցուցմունք տվող վկաներին հարցաքննելու հնարավորություն ունենա: Պետությունը պարտավոր է պոզիտիվ քայլեր

⁶⁶ Միջնորդությունների ընդհանուր քանակի մեջ գերակշռում են նրանք, որոնք վերաբերում են դատական նիստը հետաձգելուն, գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրելուն, վկաներին բերման ենթարկելուն և այլն:

ձեռնարկել դատաքննության ընթացքում վկաների ներկայությունն ապահովելու համար: Դա նաև բխում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելու պետության պարտականությունից:

Մակայն դիտարկումների արդյունքները փաստում են, որ ամբաստանյալի՝ իր դեմ ցուցմունքներ տված վկաներին հարցաքննելու իրավունքը չի պահպանվում ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով, և դատավճռի հիմքում դրվում են վկաների նախաքննական ցուցմունքները:

Որպես այդպիսին կարելի է նշել դատարանում վկաների ներկայությունն ապահովելու անհնարինությունը՝ պայմանավորված դատարանից գորամասերի հեռավորությամբ, հատկապես ձմեռային ամիսների ընթացքում:

Դատարանում վկաների ներկայությունն ապահովելու հարցում խնդիրներ են առաջանում այն դեպքերում, երբ զինվորները գորացրվում են և մեկնում ՀՀ տարբեր շրջաններ: Որոշ դեպքերում գորացրված զինվորները բացակայում են հանրապետությունից:

Ընդհանուր կարգով քննված գործերի (որոնց շրջանակներում վկաներ են հարցաքննվել) դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց 92%-ում դատարանները հիմնվել են վկաների նախաքննական ցուցմունքների վրա:

Դիտարկված գործերում վկաներին ըստ էության հարցաքննելու հիմնական ձևը եղել է հետևյալը. դատարանի կողմից վկայի ինքնությունը պարզելուց անմիջապես հետո հետևել է հարց, թե արդյո՞ք վկան պնդում է նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները, թե ոչ: Նման դեպքերում վկաները հիմնականում պնդել են նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները, որոնք մեծ մասում նույնիսկ չեն հրապարակվել: Ավելին, ինչպես դատարանը, այնպես էլ մեղադրանքի կողմը ամեն կերպ փորձել են վկաներից ստանալ «պնդում եմ նախաքննական ցուցմունքներս» արտահայտությունը: Եվ քանի որ հարցաքննվող վկաների մեծամասնությունը ժամկետային զինծառայողներ էին, ովքեր, որպես կանոն, առաջին անգամ էին մասնակցում քրեական վարույթին, ներկա գտնվում դատարանում, հասարակության ներկայացուցիչների ներկայությամբ ցուցմունք տալիս հեշտությամբ ենթարկվում էին դատարանի և մեղադրանքի կողմի «հորդորներին» և պնդում էին նախաքննության ընթացքում տված ցուցմունքները:

Եթե նույնիսկ վկան ցուցմունք էր տալիս, ինչի ընթացքում առաջանում էր որևէ հակասություն նախաքննական և դատարանում տրված ցուցմունքների միջև, դարձյալ բարձրացվում էր հարց, թե դրանցից որն է պնդում վկան: Վկաները արդարանում էին, որ դեպքից հետո անցել է բավականին ժամանակ և շատ մանրուքներ չեն հիշվում, հետևաբար, եթե գրել են որևէ բան անցյալում, երբ ավելի թարմ էր հանցագործության մասին տեղեկատվությունը, դա է ճիշտ: Որպես կանոն, նման պնդումները կատարվում էին մեղադրանքի կողմի հոգեբանական ճնշումների արդյունքում. դատախազները մեծամասամբ վկաներին հորդորում էին. «դե պնդի նախաքննական ցուցմունքդ, վերջացրո՛ւ»:

Նման պրակտիկայի պայմաններում պաշտպանության կողմը զրկվում է վկաներին հարցաքննելու իր իրավունքի լիարժեք իրականացումից:

Դ. Կողմերի հավասարության սկզբունքը *ex parte* շփումների համատեքստում. իրավական վերլուծություն: Կողմերի հավասարության սկզբունքն անթույլատրելի է համարում նաև *ex parte* շփումները: Ո՛չ դատախազը, ո՛չ պաշտպանը և ո՛չ էլ որևէ այլ անձ իրավունք չունեն քննարկել գործը դատավորի հետ *ex parte*: Միակ բացառությունը, որը թույլատրվում է միջազգային ստանդարտների ներքո, այն է, երբ մյուս կողմը նախապես իրազեկվում է նման քննարկման մասին, իսկ դատավորը պարտավորվում է ապահովել, որ յուրաքանչյուր նման հանդիպման մանրամասները արձանագրվեն:

Հայաստանի Հանրապետության «Դատավորի վարքագծի կանոնագիրքը» ևս արգելում է դատական նիստից դուրս դատավորի շփումները կողմերի և դատավարության այլ մասնակիցների հետ: Մասնավորապես, կանոն 11-րդի համաձայն՝ դատական նիստից դուրս դատավորը պարտավոր է ձեռնպահ մնալ կողմերի և դատավարության այլ մասնակիցների հետ առանձին շփումից: ՄԻԵԴ-ը և Արդարադատության եվրոպական դատարանն արձանագրել են, որ ցանկացած որոշում, որը ձևավորվել և ընդունվել է *ex parte*, չի կարող ճանաչվել դատարանի կողմից⁶⁷:

Դիտարկումների ընթացքում արձանագրվել են նաև դատարանի հետ *ex parte* շփումների դեպքեր, որոնք, սակայն, հնարավոր չէ քանակական չափման ենթարկել, դրանց վերաբերյալ տվյալները ստացվել են դիտորդների ուղղակի դիտարկումների հիման վրա և ներկայացված են օրինակների ձևով:

Օրինակ N 18

Դիտարկման ենթարկված գործերից մեկի ընթացքում դատական նիստը սկսվեց ուշացումով, քանի որ դատավորը շուրջ կեսժամյա առանձնագրույց ունեցավ ամբաստանյալներից մեկի ծնողի հետ (գործ N 171):

Օրինակ N 19

Մինչև նիստի սկիզբը դատական նիստերի դահլիճում դատավորն ու պաշտպանը գրուցում էին իրար հետ, որի ընթացքում դատավորը դեռ թիկնոցով չէր: Պաշտպանն ասում էր, որ միջնորդելու է հետաձգել գործը, որովհետև ծանոթ չէ գործին, ինչպես նաև այլ նիստով զբաղվածություն ունի և շտապում է: Պաշտպանի սույն հայտարարության վրա դատավորը զայրացավ և ասաց. «Այստեղ ծանոթանալու բան չկա: Ուրա ստեղ գործ: Էս ինչ գործա, հեսա 15 րոպեում սրա հարցերը լուծենք, գնա»: Պաշտպանն ասաց, որ ամեն դեպքում պիտի ծանոթանա գործին, դատավորը պատասխանեց, որ պետք չի ծանոթանա, եթե կուզի, 10 րոպե ընմիջում կտա ծանոթանալու համար: Դատական նիստի ժամանակ դատարանի հարցին, թե արդյոք կողմերն ունեն միջնորդություններ, պաշտպանը միջնորդեց արագացված դատաքննություն անցկացնել: Դատավորը հարցրեց. «Կարիք ունե՞ք գործին ծանոթանալու, թե արդեն ծանոթացել եք»: Պաշտպանը պատասխանեց, որ արդեն ծանոթ է և կարիք չունի ծանոթանալու: Դատավորը հայտարարեց 10 րոպե ընդմիջում և պաշտպանին, դատախազին և ամբաստանյալին ուղեկցող մայրին հրավիրեց իր սենյակ սուրճ խմելու: Նիստը շարունակվեց 25 րոպե հետո (գործ N 90):

Օրինակ N 20

Դատական գործերից մեկում ամբաստանյալը պաշտպան չունեք, ընդունել էր մեղադրանքը՝ ցանկանալով արագացված դատական քննության կարգ կիրառել: Դատավորը հայտնեց, որ սույն դեպքում պարտադիր է պաշտպանի մասնակցությունը և ամբաստանյալին հորդորեց պայմանագիր կնքել նիստին ներկա փաստաբան Ա-ի հետ: Հայտարարվեց ընդմիջում, որի ընթացքում ամբաստանյալի և փաստաբանի միջև խոսակցությունից պարզ դարձավ, որ ամբաստանյալը չի ուզում պաշտպան ունենալ՝ վկայակոչելով իր անվճարունակ լինելը: Փաստաբանը, ձայնը բարձրացնելով, հայտնեց, որ եթե ինքը չներգրավվի, արագացված կարգով դատական քննությունը չի ընթանա, և դատարանը «պայմանականը» չի կիրառի:

⁶⁷ Denilauler/Couchet Frères (ECJ, Case C 125/79, 21 May 1980).

Ամբաստանյալը ստիպված համաձայնեց ու գումար փոխանցեց պաշտպանին, ինչից հետո նյութերը վերցնելով՝ փաստաբանը անցավ դատավորի աշխատասենյակ (գործ N 4):

Դիտարկումները ընթացքում հանդիպել է մեկ դեպք, երբ դատավորը խախտել է խորհրդակցական սենյակի գաղտնիության սկզբունքը՝ դիտորդներին թույլ տալով իր հետ գտնվել խորհրդակցական սենյակում մինչև վճռի հրապարակումը:

Օրինակ N 21

Մարզերից մեկի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող գործի շրջանակներում դատավորը խախտել է խորհրդակցական սենյակի գաղտնիության սկզբունքը՝ նիստին ներկա երկու դիտորդներից մեկին թույլատրելով իր հետ գտնվել խորհրդակցական սենյակում մինչ վճռի հրապարակումը:

Նշված դեպքում դատական նիստն ընթանում էր դատավորի աշխատասենյակում: Նիստի ավարտից հետո դատարանը հայտնեց, որ հեռանում է խորհրդակցական սենյակ՝ դատավճիռ կայացնելու: Դատարանի այս հայտարարությունը նշանակում էր, որ գործի կողմերն ու նիստին ներկա այլ անձինք պետք է դուրս գային դատավորի աշխատասենյակից, որն այդ պահից սկսած վերածվում էր խորհրդակցական սենյակի: Նիստին ներկա անձինք դուրս եկան դատավորի աշխատասենյակից (խորհրդակցական սենյակից), մինչդեռ դիտորդներից մեկը դատավորի «հրավերով» մնաց նույն սենյակում (գործ N 118):

Ճնշումներից և ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը

Վերլուծության այս հատվածում դիտարկվում են ամբաստանյալների՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքի իրացման, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից, ճնշումներից և խաբեությունից զերծ մնալու իրավունքների, ինչպես նաև այս իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների և նման դեպքերի՝ դատարանում բարձրաձայնելու հիմնախնդիրները:

Ա. Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքի իրավական հիմքերը:
ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը⁶⁸, որի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև քրեադատավարական օրենքում⁶⁹: Միաժամանակ, ՔԴՕ-ը սահմանում է, որ կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան աջակցություն ցույց տալ⁷⁰, ինչի կապակցությամբ վարույթն իրականացնող մարմինը վերջիններին պատշաճորեն տեղեկացնելու պարտականություն է կրում: Նմանապես, ՔԴՕ-ի՝ կասկածյալի ու մեղադրյալի իրավունքները նախատեսող հոդվածները նախատեսում են անձի իրավունքները՝ հրաժարվել ցուցմունքներ կամ բացատրություններ տալուց⁷¹: Դատաքննության ընթացքում նույնպես ամբաստանյալն իրավունք ունի ցուցմունքներ չտալ, ինչը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա: Սույն իրավունքի պարզաբանումը օրենքով դրված է դատարանի վրա⁷²: Այդուամենայնիվ, ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր բովանդակությամբ ավելի լայն է, քան բացառապես ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը. ներառում է նաև իր վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու անձի իրավունքը:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը միջազգային իրավունքի, հատկապես ՄԻԵԴ-ի պրակտիկայում դիտվում է արդարացի դատաքննության իրավունքի և անմեղության կանխավարկածի բաղադրիչ (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): ՄԻԵԴ-ը բազմիցս ամրագրել է, որ թեև լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված չեն, այդուամենայնիվ, դրանք հանդիսանում են արդար դատաքննության հասկացության հիմքում ընկած համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափանիշներ: Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, մասնավորապես, ենթադրում է, որ քրեական հետապնդման մարմինները չպետք է օգտագործեն մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի կիրառման կամ ճնշման արդյունքում ձեռք բերված ապացույցները: Այս առումով, լռելու իրավունքը սերտորեն կապված է Կոնվենցիայով երաշխավորված անմեղության կանխավարկածի հետ⁷³: ՄԻԵԴ-ի տեսանկյունից ցուցմունք տալու հարկադրանք է դիտվում քրեական սանկցիաների կիրառումը կամ կիրառման սպառնալիքն այն անձի նկատմամբ, ով հրաժարվում է վարույթն իրականացնող մարմնին

⁶⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 22:

⁶⁹ ՀՀ ՔԴՕ, հոդված 20:

⁷⁰ ՀՀ ՔԴՕ, հոդված 19, մաս 5:

⁷¹ ՀՀ ՔԴՕ, հոդվածներ 63, 65:

⁷² ՀՀ ՔԴՕ, հոդված 336:

⁷³ Murray v. The United Kingdom, 8 February 1996, para. 45, Saunders v. the United Kingdom, 17 December 1996, para. 68.

տեղեկություններ հաղորդել այն հանցագործության կապակցությամբ, որի կատարման մեջ վերջինս կասկածվում կամ մեղադրվում է⁷⁴: Յուցմունք ստանալու նպատակով ուղղակի ֆիզիկական կամ հոգեբանական ներագրեցությունը որոշակի պայմանների առկայության պարագայում կարող է դիտվել որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (խոշտանգումների արգելում):

Հատկանշականն այն է, որ այս իրավունքը սահմանափակման հնարավորություն չի նախատեսում: Անձը պահպանում է լռելու իրավունքը՝ անկախ իրեն վերագրվող հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից⁷⁵:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը սահմանում է նաև օրենքով ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքերի նախատեսման հնարավորություն: Սահմանադրական սույն նորմի հիման վրա քրեադատավարական օրենսգրքով նախատեսվում է անձի իրավունքը ցուցմունք չտալու ոչ միայն իր, այլև ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ⁷⁶: Սույն իրավունքը վերաբերում է ոչ միայն ամբաստանյալին, այլև վկային, տուժողին և քրեական դատավարության մյուս մասնակիցներին նույնպես: ՔԴՕ-ի համաձայն՝ մերձավոր ազգական են համարվում անձի ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր և համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջինների համար՝ փեսան և հարսը⁷⁷:

Բ. Մոնիթորինգի արդյունքում ձեռքբերված քանակական տվյալներ: Դիտարկման ենթարկված գործերում ամբաստանյալները հրաժարվել են ցուցմունքներ տալ 7% դեպքերում: Իսկ կողմերի հարցերին ամբաստանյալներն ընդհանրապես հրաժարվել են պատասխանել 21% դեպքերում⁷⁸:

Ամբաստանյալների՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքի համատեքստում կարևոր նշանակություն է ձեռք բերում նրա նախաքննական ցուցմունքների օգտագործման խնդիրը: Դիտարկումների արդյունքները փաստում են, որ դիտարկման ենթարկված դատական գործերում 67% դեպքերում դատական քննության ընթացքում հրապարակվել են ամբաստանյալի՝ նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները: Հատկանշական է, որ նախնական քննության և դատական քննության ընթացքում ամբաստանյալի ցուցմունքներում էական հակասությունների հիմքով նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքների հրապարակման դեպքերը կազմել են ընդամենը 14%: Մինչդեռ դիտարկումների արդյունքները փաստում են, որ ամբաստանյալները դատական քննության ընթացքում հրաժարվել են ցուցմունքներ տալուց 7% դեպքերում և հարցերին պատասխանելուց 21% դեպքերում: Նման պայմաններում անհասկանալի է, թե նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները մյուս դեպքերում ինչու են հրապարակվել դատական քննության ընթացքում, եթե ամբաստանյալը չի հրաժարվել ցուցմունքներ տալուց և դրանց միջև էական հակասություններ չեն եղել:

Այսպիսով, թեև ամբաստանյալները դատարանում ցուցմունք են տալիս, պարզաբանում ցուցմունքներում առկա հնարավոր հակասությունների պատճառները, սակայն դրանց մեծ մասն անտեսվում է, դատարանի կողմից հիմք են ընդունվում նախաքննական ցուցմունքները, որոնք ինչպես հարկն է չեն ուսումնասիրվում, վեր չեն հանվում հիմնական հակասող

⁷⁴ Quinn v. Ireland, no 36887/97, 21 March 2001.

⁷⁵ Saunders v. the United Kingdom, 17 December, 1996, para. 72.

⁷⁶ ՀՀ ՔԴՕ, հոդված 20:

⁷⁷ ՀՀ ՔԴՕ, հոդված 6:

⁷⁸ Ներկայացված թվերը չեն ներառում կողմերի՝ եզակի հարցերին պատասխանելուց հրաժարվելու դեպքերը:

հանգամանքները, այլ միայն հրապարակվում են՝ հիմք հանդիսանալով հետագոտված ապացույց ճանաչվելու և դատավճռի հիմքում դրվելու:

Գ. Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման խնդրի իրավական վերլուծություն: ՀՀ Սահմանադրության նույն 22-րդ հոդվածով արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիությունը փաստական տվյալների ստացման և դատավարական ամրագրման՝ օրենքով նախատեսված պահանջների սահմանումն է, որը հնարավորություն է տալիս հավաքված ապացույցները ներմուծել քրեադատավարական համակարգ և օգտագործել անձի մեղավորության կամ անմեղության, ինչպես նաև քրեական գործի այլ փաստական հանգամանքների հաստատման համար:

ՄԻԵԴ-ը ամրագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, սակայն այն չի սահմանում ապացույցների ընդունելիության և թույլատրելիության չափանիշներ, ինչն ի սկզբանե հանդիսանում է ներպետական օրենքի կարգավորման առարկա⁷⁹: Դատարանը միաժամանակ նշել է, որ իր (Դատարանի) խնդիրը չէ որոշել ապացույցների որոշակի տեսակների՝ ներպետական օրենսդրության խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման թույլատրելիությունը կամ որոշել՝ արդյոք դիմումատուն մեղավոր է, թե ոչ: Պատասխանի ենթակա է այն հարցը, թե արդյոք քննությունը՝ որպես ամբողջություն, ներառյալ եղանակը, որի միջոցով ձեռք է բերվել ապացույցը, եղել են արդար⁸⁰:

Ապացույցների թույլատրելիության պայմանների վերաբերյալ տեսության մեջ առկա մոտեցումների և ՔԴՕ-ի վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել թույլատրելիության հետևյալ պայմանները.

- ապացույցի բովանդակությունը կազմող փաստական տվյալների պատշաճ աղբյուրի առկայություն,
- պատշաճ սուբյեկտի առկայություն, որն իրավասու է կատարել ապացույցների հավաքմանն ուղղված գործողություններ,
- ապացույցների հավաքմանն ուղղված պատշաճ դատավարական գործողության իրականացում,
- ապացույցների հավաքմանն ուղղված դատավարական գործողության (դատական կամ քննչական) կատարման օրենքով սահմանված կարգի պահպանում:

Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա⁸¹:

Քրեադատավարական օրենսդրությունը, այնուամենայնիվ, հնարավորություն է տալիս օգտագործել օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Եթե իր բնույթով արդարացնող ապացույցը ստացվել է մեղադրյալի այս կամ այն դատավարական իրավունքի խախտման հետևանքով, այն կարող է թույլատրելի համարվել պաշտպանության կողմի միջնորդությամբ⁸², քանի որ, ըստ էության, վարույթն իրականացնող մարմնի խախտումները չեն հասել իրենց նպատակին: Հանցագործության կատարման ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրանքի կողմի վրա: Պաշտպանության կողմն իրավունք ունի ապացուցել ինչպես

⁷⁹ Schenk v. Switzerland, 12 July, 1988, para. 45-46.

⁸⁰ Harutyunyan v. Armenia, 27 June 2007, para. 61.

⁸¹ ՀՀ ՔԴՕ, հոդված 105, մաս 2:

⁸² ՀՀ ՔԴՕ, հոդված 105, մաս 3:

մեղադրյալի անմեղությունը, այնպես էլ կասկածի տակ դնել մեղադրող ապացույցները: Վերջին դեպքում նա իրավունք ունի օգտագործել օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցը, որն անթույլատրելի է մեղադրանքի կողմի համար:

Դ. Ֆիզիկական և հոգեբանական բռնության, ճնշումների կամ խաբեության միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործման խնդրի իրավական վերլուծությունը: ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձեռքբերված, կալանավորված կամ ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՔԴՕ-ը կտրականապես արգելում է խոշտանգումների, ճնշումների կամ խաբեության միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործումը քրեական դատավարության ընթացքում: Մասնավորապես, օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործման, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Նման պայմաններում անհրաժեշտ է ուշադրության արժանացնել զինվորական ծառայության առանձնահատկությունների և զինվորական ծառայություն անցնող ժամկետային պարտադիր զինծառայողների անձնական հատկանիշների գնահատմանը: Զինվորական ծառայություն անցնող զինծառայողների հոգեբանական վիճակի վրա մեծ ազդեցություն է ունենում զինված ուժերի հիերարխիկ կառուցվածքը, դրանում կյանքի առանձնահատկությունները (իրավունքների օբյեկտիվ սահմանափակումները)՝ դարձնելով նրանց առավել խոցելի: Հետևաբար, այն գործողությունները, սպառնալիքները, ահաբեկումները, որոնք քաղաքացիական կյանքում կարող են չընկալվել որպես ռեալ և իրական վտանգ, զինվորական ծառայության պայմաններում կարող են լուրջ գործոն հանդիսանալ անձի կողմից իր գործողությունները ընտրելու հարցում:

Ե. Մոնիթորինգի շրջանակներում ֆիզիկական և հոգեբանական բռնության և ճնշումների առնչությամբ վեր հանված դեպքերը: Հատկանշականն այն է, որ դիտարկված գործերից միայն *մեկում* է պաշտպանության կողմը բարձրացրել նախաքննության ընթացքում ամբաստանյալների նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառման վերաբերյալ հարց՝ չնայած այն հանգամանքին, որ ամբաստանյալները մի շարք դեպքերում հայտարարել են, որ ցուցմունքների ստացման համար իրենց նկատմամբ ճնշումներ, այդ թվում բռնություն է կիրառվել: Սակայն, ինչպես վկայի և ամբաստանյալի անձնական ազատության իրավունքի կամայական սահմանափակումների երեք դեպքերի պարագայում, որոնք բարձրաձայնվել էին դատարանում, այս դեպքը ևս եզակի չի կարող համարվել: Նմանատիպ դեպքերի մասին դիտորդները տեղեկացել են նաև մասնավոր զրույցներից, սակայն դրանք չեն բարձրաձայնվել դատարանում: Մույն հանգամանքը կարելի է բացատրել ինչպես արագացված դատաքննության կարգի կիրառման գործերի մեծ քանակությամբ (դիտարկման ենթարկված գործերի 78%), պաշտպանների՝ գործի նյութերին և անգամ հանգամանքներին ծանոթ չլինելով, այնպես էլ ամբաստանյալների՝ ավելորդ խնդիրներ չունենալու ցանկությամբ:

Օրինակ N 22

Ամբաստանյալը ցուցմունքներ տալիս նշել է, որ նախաքննական մարմինն իր վրա ֆիզիկական ու հոգեբանական ճնշում է գործադրել. ստիպել են խոստովանել, որ ինքն է հրազենով վիրավորել տուժողին: Ֆիզիկական ուժ են գործադրել նաև իր հետ դեպքի վայրում գտնված անձնակազմի (իր դեկավարած ջոկի զինծառայողների) վրա՝ նրանց ստիպելով իր դեմ ցուցմունքներ տալ: Չնայած այս ամենին՝ ինքը պնդել է, որ տուժողը «խփվել է» հակառակորդի կողմից, նույնիսկ դեպքի պահին իրենց մոտ զենք չի եղել: Այնուամենայնիվ, ամբաստանյալի նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելով (սպառնալով, որ մեղադրյալը չի գորացրվի, եթե իր ուզած ցուցմունքը չտա)՝ քննիչը ստիպել է ինքնախոստովանական ցուցմունք տալ: Միայն ցուցմունքներ ստանալուց հետո է ամբաստանյալը գորացրվել (գործ N 91):

Ամբաստանյալի անմեղության կանխավարկածի ապահովումը

Սույն գլխի շրջանակներում քննարկվում են դատական քննության ընթացքում ամբաստանյալի անմեղության կանխավարկածի իրացման, ինչպես նաև դատարանի կողմից վարքագծի կանոնների պահպանման հարցերը:

Ա. Անմեղության կանխավարկածի սկզբունքի ապահովման իրավական հիմքերը: ՄԻԵԿ-ն և ՀՀ Սահմանադրությունը նախատեսում են անմեղության կանխավարկածի իրավունքը՝ հանցագործության համար մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

ՔԴՕ 18-րդ հոդվածն իր հերթին սահմանում է. «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

Այսպես, ՄԻԵԿ-ն իր նախադեպային որոշումներում բազմիցս անդրադարձել է հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի անմեղության կանխավարկածի իրավունքին՝ ամրագրելով, որ անմեղության կանխավարկածը քրեական դատավարության ընթացքում արդարացի քննության տարրերից մեկն է՝ արտացոլված հոդվածի 1-ին մասում⁸³: Այն խախտված կհամարվի, եթե հանցագործության մեջ մեղադրվող անձի վերաբերյալ կայացված դատական որոշումը արտացոլում է կարծիք անձի մեղավորության մասին նախքան նրան մեղավոր ճանաչելն օրենքով սահմանված կարգով: Նույնիսկ պաշտոնական փաստաթղթերի բացակայության պայմաններում դատարանի կողմից ամբաստանյալին որպես հանցագործության մեջ մեղավորի վերաբերվելը բավարար պատճառաբանություն է⁸⁴:

Սա նշանակում է, որ ողջ դատական քննության ընթացքում ամբաստանյալը պետք է համարվի անմեղ, քանի դեռ դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցներով մեղադրանքի կողմը չի հիմնավորում ամբաստանյալի մեղքը ողջամիտ կասկածներից վեր: Սույն պայմաններում ամբաստանյալի հանցագործության մեջ մեղավոր լինելու ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը: *Նույնիսկ այն դեպքում, երբ ամբաստանյալն իրեն մեղավոր է ճանաչում մեղսագրվող հանցագործության մեջ, ամբաստանյալի մեղքը պետք է հիմնավորվի դատաքննության ընթացքում հետազոտված գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:* Դատաքննության ողջ ընթացքում դատարանը պետք է չեզոք դիրքորոշում և վերաբերմունք ունենա ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմի ներկայացրած ապացույցների նկատմամբ: Բացի այդ, նույնիսկ եթե

⁸³ Deweer v. Belgium, 27 February 1980.

⁸⁴ The Minelli v. Switzerland, no: 8660/79, 25 March 1983.

ամբաստանյալի կողմից ներկայացվում են ապացույցներ՝ ի պաշտպանություն իրեն, այնուամենայնիվ, վերջինիս կողմից հանցագործության կատարման ապացուցման բեռը մնում է մեղադրանքի կողմի վրա: Ամբաստանյալը դատական քննության ընթացքում որևէ բան ապացուցելու պարտականություն առհասարակ չի կրում, փոխարենը, մեղադրանքի կողմը պետք է ողջամիտ կասկածներից վեր ապացուցի ամբաստանյալի մեղավորությունը վերագրվող հանցագործությունների յուրաքանչյուր էլեմենտում, այդ թվում նաև այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվել է հենց ամբաստանյալի կողմից: Դատական քննության ընթացքում հակառակը չի կարող լինել, և եթե մեղադրողը չի կարողանում հիմնավորել ամբաստանյալի մեղքը, դատարանը պետք է նրան արդարացնի: «Ողջամիտ կասկածից վեր» տերմինը կանխորոշում է, թե որքան համոզիչ պետք է լինի ապացույցը, որպեսզի դրվի մեղադրական դատավճռի հիմքում: Մարդկային հարաբերություններում բավականին քիչ հարցեր կան, որոնք կարող են հայտնի լինել բացարձակ հստակությամբ: Այդ պատճառաբանությամբ հնարավոր չէ մեղադրողի վրա պարտավորություն դնել ապացուցելու ամբաստանյալի մեղավորությունը բոլոր հնարավոր կասկածներից վեր: *Ողջամիտ կասկածը մեղադրյալի մեղավորության վերաբերյալ արդարացված կասկածն է՝ ապացույցի բնույթի և որակի վրա հիմնված*: Սակայն այն պետք է լինի փաստական, այլ ոչ երևակայական: Անմեղության կանխավարկածի բովանդակությունը հանգում է հետևյալին.

-մինչև մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը անձը համարվում է անմեղ և նրա մեղավորության վերաբերյալ ոչ մի հետևություն իրավաբանական նշանակություն չունի,

-մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը անձը համարվում է անմեղ՝ չնայած նրա կողմից հանցագործություն կատարելու կասկածների կամ նրան առաջադրված մեղադրանքի առկայությանը,

-մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձին անմեղ համարելու և որպես անմեղ ներկայացնելու պարտականությունը կախված չէ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կարծիքից կամ ներքին համոզմունքից,

-արդարադատություն իրականացնելիս դատավորը չպետք է ելնի այն համոզմունքից, որ մեղադրյալը կատարել է հանցագործությունը,

-հանցագործության համար մեղադրվելու կապակցությամբ անձի իրավունքների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակներին: Նման սահմանափակումները չեն կարող պարունակել պատժի տարրեր կամ համարժեք լինել քրեական պատժին⁸⁵:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայով նախատեսված անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է, ի թիվս այլոց, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չպետք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի⁸⁶:

Բ. Մոնիթորինգի շրջանակներում արձանագրված անմեղության կանխավարկածի խախտման դեպքերը: Դատարանի կողմից ամբաստանյալի անմեղության կանխավարկածի խախտումները տեղ են գտել ինչպես ընդհանուր կարգով, այնպես էլ արագացված կարգով դատաքննությունների ընթացքում: Անմեղության կանխավարկածի խախտումն արտահայտվել է երկու հիմնական ձևով. երբ դատավորի կողմից ակնհայտորեն կասկածի տակ են դրվել ամբաստանյալի հայտնած տեղեկությունները (24% դեպքերում) և դատավորը բացահայտորեն

⁸⁵ ՀՀ Արդարադատության խորհրդի 05.11.2008թ. թիվ ԱԽ-19-Ո-20 որոշում:

⁸⁶ Barbera, Messegué and Jabardo v. Spain 10590/83, para. 77.

արտահայտել է իր բացասական, մեղադրական թեքումով վերաբերմունքը ամբաստանյալի նկատմամբ (21%):

Օրինակ N 23

Դիտարկման ենթարկված առավել ծանր հանցագործություններից մեկի քննության ընթացքում ամբաստանյալի ցուցմունքին ի պատասխան, առ այն, որ վերջինս իրեն մեղսագրվող հանցագործությունը չի կատարել, դատավորը վրդովվեց, թե մի թե ականատեսները ստում են: Նման արտահայտությամբ դատավորն իր դիրքորոշումն արտահայտեց ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ (գործ N 57):

Օրինակ N 24

Մեկ այլ գործով, որը կապված էր տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հետ, ամբաստանյալի այն պնդմանը, որ տուժողի հետ ունեցել է բարիդրացիական հարաբերություններ, դատավորը նման կերպ արձագանքեց. «Բա ինչո՞ւ ես էդպես ծեծել»: Այսինքն՝ դատավորը նախքան խորհրդակցական սենյակ հեռանալը արդեն իսկ հայտնում է իր դիրքորոշումը ամբաստանյալի մեղքի, հանցագործությունը վերջինի կողմից կատարվելու վերաբերյալ (գործ N 41):

Օրինակ N 25

Դատարանը նախատեց ամբաստանյալին, ով բարձրաստիճան սպա էր՝ ասելով. «Ինչով են պայմանավորված վերջին ժամանակներում Ձեր կողմից կատարված բռնությունները: Նման վարքագծով Դուք գցում եք հայոց բանակի համբավը ոչ միայն համաքաղաքացիների աչքում, այլև տարածաշրջանում: Ինչու եք նման բաներ Ձեզ թույլ տալիս» (գործ N 36):

Գ. Դատավորների կողմից էթիկայի նորմերի խախտումներ: Դիտարկումների ենթարկված 63 գործերով արձանագրվել են նաև դատավորի վարքագծի կանոնների ենթադրյալ դեպքեր, որոնք դրսևորվել են դատավարության մասնակիցների նկատմամբ անհարգալից՝ արհամարհական, ծաղրական, հեզնական վերաբերմունքի արտահայտմամբ:

Օրինակ N 26

Դիտարկված գործերից մեկով հարցաքննության ժամանակ ամբաստանյալը շփոթված էր պատասխանում հարցերին և ակնհայտորեն կաշկանդված էր, ինչին հետևեց դատավորի հեզնական արտահայտությունը. «... սրան էլ զենք են տվել, ուղարկել են դիրքեր»: Ամբաստանյալը ցածր էր խոսում, և նրա ձայնը լսելի չէր, դատավորը, վերջինիս վրա բարկանալով և բղավելով, կանչեց ամբիոնի մոտ, որպեսզի լավ լսի: Մակայն ամբիոնի մոտ ևս նրան խոսելու հնարավորություն չտալով՝ կրկին հետ ուղարկեց դահլիճի՝ ամբաստանյալների համար նախատեսված հատված (գործ N 162):

Օրինակ N 27

Դիտարկված գործերից մեկի քննության ընթացքում պարզվեց, որ ամբաստանյալի ծնողները տեղյակ չէին՝ իրենց որդին կարգապահական տույժի արժանացել է թե ոչ: Դատավորն արհամարհական տոնով ասաց ամբաստանյալի ծնողների մասին. «Գյուղացի մարդիկ են, շատ են հասկանում՝ կարգապահական տույժն ինչ է»:

Այնուհետև դատավորը, դատական նիստում ընդմիջում հայտարարելուց հետո, սկսեց կշտամբել ամբաստանյալի ծնողներին, որ չեն հետևել իրենց որդու առողջությանը և նույնիսկ տեղյակ չեն եղել, որ քրեական գործ է հարուցված:

Դատավորը հայտարարեց նաև, թե ամբաստանյալի ծնողներն առավելապես իրենց անասուններով են անհանգստացած, քան իրենց որդու առողջությամբ (գործ N 159):

Վկաների և տուժողների պաշտպանվածությունը

Սույն բաժնում անդրադարձ է կատարվում վկաների և տուժողների պաշտպանության խնդրի ինչպես իրավական ասպեկտին, այնպես էլ վկաների և տուժողների պաշտպանության միջազգային փորձին (այդ թվում միջազգային քրեական արդարադատության պրակտիկայում) և վկաների ու տուժողների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությանն ու առկա պրակտիկային ՀՀ-ում, ինչպես նաև դատարանում վկաների հարցաքննության հիմնախնդրին:

Ա. Վկաների և տուժողների պաշտպանության խնդրի իրավական վերլուծություն: Վկաների պաշտպանության համար հատուկ ծրագրերի մշակումը պահանջում է առաջին հերթին ընդունել, որ վկայի պաշտպանությունը պետության պարտականությունն է: Հետևաբար, պետությունը պարտավորություն է կրում հատուկ միջոցներ ձեռնարկել պաշտպանելու վկաների իրավունքները: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը և այլ կարևորագույն փաստաթղթերը ներկայացնում են վկաների՝ հետապնդումներից և ահաբեկումից պաշտպանելու, ինչպես նաև վերջիններիս արժանապատվությունը հարգելու իրավունքը: Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը հռչակում է «մարդկային անհատին հատուկ արժանապատվության հարգանքը»⁸⁷ և սահմանում է, որ «ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական և անօրինական միջամտության իր անձնական և ընտանեկան կյանքին, թղթակցության գաղտնիությանը կամ ենթարկվել անօրինական հարձակման իր պատվի և հեղինակության նկատմամբ»⁸⁸: Դաշնագրի դրույթների լույսի ներքո պետությունները կրում են ընդհանուր պարտավորություն՝ «իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու համար, որոնք անհրաժեշտ կլինեն դաշնագրում ճանաչվող իրավունքների իրականացման համար»⁸⁹:

Մարդու իրավունքների տարածաշրջանային փաստաթղթերը, ինչպիսիք են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան⁹⁰, Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան⁹¹, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան⁹² չեն պարունակում հատուկ կետեր՝ պետություններին պարտավորեցնելու ձեռնարկել կոնկրետ միջոցներ վկաների պաշտպանության համար:

Մարդու իրավունքների կոմիտեն մեկնաբանել է ՔՔԻԴ-ի 9-րդ հոդվածը՝ դրանում ներառելով պաշտպանության իրավունքը՝ ի սպասելու անվտանգության իրավունքի: Կոմիտեն ճանաչել էր Դաշնագրի 9-րդ հոդվածի խախտում առ այն, որ պետությունը չէր ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու անձի պաշտպանությունը ոստիկանության աշխատակիցների հետապնդումներից իր հիմնարար իրավունքների առնչությամբ բողոք ներկայացնելու պահից⁹³: Սույն գործում պետությունը չէր ապահովել վկայի անվտանգությունը և վերջինս թաքնվել էր՝ վախենալով հետապնդումներից: Կոմիտեն հաստատել է, որ Դաշնագրի 9-րդ հոդվածը չի թույլատրում պետություններին անտեսել իր իրավասության ներքո գտնվող չկալանավորված անձանց անձնական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները: Մարդու իրավունքների կոմիտեն եզրահանգել է, որ պետությունը պարտավորված է «ձեռք առնել արդյունավետ միջոցներ՝ պաշտպանելու անձին դատավարությանը մասնակցությունից բխող սպառնալիքներից և ահաբեկումներից» և

⁸⁷ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՔՔՄԴ), հոդված 10:

⁸⁸ Նույն տեղում, հոդված 17:

⁸⁹ Նույն տեղում, հոդված 2:

⁹⁰ ETS No. 5, 213 UNTS 22, entered into force on 3 September 1953.

⁹¹ OAU Document CAB/LEG/67/3 rev. 5, 21 ILM 58 (1982).

⁹² OAS Treaty Series No. 36, 1144 UNTS 123.

⁹³ *Rajapakse v. Sri Lanka* (CCPR/C/87/D/1250/2004), paragraph 9.7.

«երաշխավորել, որպեսզի նման խախտումները չկրկնվեն ապագայում»: Մարդու իրավունքների կոմիտեն նման իրավունքի խախտումներ արձանագրել է նաև այլ գործերում և ընդգծել է, որ անվտանգության իրավունքը չի սահմանափակվում զուտ ձեռքարկված կամ կալանավորման ձևով ձևակերպելու ազատությունից զրկմամբ, այլ պարտավորեցնում է պետությանը ձեռք առնել ողջամիտ և համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու այն անձանց, որոնց կյանքը վտանգված է⁹⁴:

Եվհուրդը ընդունել է մի շարք հանձնարարականներ վկաների իրավունքների վերաբերյալ՝ սահմանելով սկզբունքներ և մեխանիզմներ, որոնց համաձայն՝ անդամ պետությունները պետք է իրականացնեն դրանք՝ ի պաշտպանություն մարդու հիմնարար իրավունքների⁹⁵: Սույն հանձնարարականներով սահմանվում են վկաների պաշտպանության և աջակցման մեխանիզմները քրեական դատավարության ընթացքում նրանց հիմնարար իրավունքների պահպանման տեսանկյունից, ինչպիսիք են ծածկանունների օգտագործումը և վկաների պաշտպանության հատուկ ծրագրերի հիմնումը:

Հաշվի առնելով նաև ՄԻԵԿ-ի ներքո անձի նվազագույն իրավունքները երաշխավորելու, արդարադատություն իրականացնելու և հանցագործներին պատասխանատվության ենթարկելու պետության պարտավորությունը՝ ՄԻԵԿ-ն ամրագրել է, որ պետությունը պետք է քրեական արդարադատությունը կազմակերպի այնպես, որպեսզի տուժողների և վկաների շահերն անարդարացիորեն չվտանգվեն⁹⁶:

ՄԻԵԿ-ը պաշտպանության իրավունքը մեկնաբանել է կյանքի իրավունքի լույսի ներքո: Մասնավորապես, Դատարանն ամրագրել է իշխանությունների պարտավորությունը՝ պաշտպանել այն անձին կամ անձանց, ում կյանքը վտանգված է երրորդ անձանց հանցավոր գործողություններով, և պետությունը պետք է ձեռնարկի օպերատիվ միջոցառումներ, երբ իշխանությունները գիտեն կամ պետք է իմանային անձի կամ անձանց կյանքին սպառնացող իրական և ուղղակի վտանգի մասին⁹⁷:

Բ. Վկաների և տուժողների պաշտպանության միջազգային փորձը: Արտասահմանյան պետությունների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք պետություններ ունեն վկաների և տուժողների պաշտպանությանն ուղղված հատուկ օրենքներ, որոնք նախատեսում են պաշտպանության ենթակա անձանց շրջանակը, պաշտպանության միջոցները, պաշտպանության տրամադրման հստակ մեխանիզմները և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձանց:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության «Տուժողների, վկաների, և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» օրենքով (ընդունվել է 2004թ.) պաշտպանություն է նախատեսվում տուժողի, վկայի, դատախազի, կասկածյալի, մեղադրյալի, նրանց փաստաբանների և օրինական ներկայացուցիչների, փորձագետի, մասնագետի, թարգմանչի, ինչպես նաև նրանց հարազատների, մերձավոր ազգականների, ընտանիքի

⁹⁴ Տե՛ս, օրինակ, *Bahamonde v. Equatorial Guinea* (CCPR/C/49/D/468/1991), *Cagas, Butin and Astillero v. Philippines* (CCPR/C/73/D/788/1997), *Prince v. Jamaica* (CCPR/C/44/D/269/1987).

⁹⁵ ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ R (97) 13 Հանձնարարական վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքի վերաբերյալ, ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ R (2005) 9 Հանձնարարական վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության վերաբերյալ:

⁹⁶ *Doorson v. The Netherlands*, 26 March 1996, para. 70. Դատարանը շարունակում է, որ «արդար դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որպեսզի համապատասխան դեպքերում պաշտպանության կողմի և վկաների շահերի միջև արդարացի հավասարակշռություն պահպանվի»: Ճիշտ է, Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ընդհանուր առմամբ չի նախատեսում վկաների իրավունքները, այնուամենայնիվ, նրանց անձնական կյանքին, ազատությանը և անձեռնմխելիությանը վերաբերող պահանջներ պարունակում են Կոնվենցիայի մյուս հոդվածները:

⁹⁷ Տե՛ս նաև *Aksoy v. Turkey* (ECHR, application No. 21987/93), *Sarli v. Turkey* (ECHR, application no. 24490/94).

անդամների և այլոց համար: Պետական պաշտպանություն տրամադրելու մասին որոշումը կայացնում է վարույթն իրականացնող մարմինը՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմնի ղեկավարը:

ՌԴ «Պետական պաշտպանության» օրենքով նախատեսված հետևյալ պաշտպանության միջոցները գոյություն ունեն՝ ...անձնական պաշտպանության, բնակարանի և գույքային պաշտպանության ապահովում, անձնական պաշտպանության հատուկ միջոցների տրամադրում, պաշտպանվող անձի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ապահովում, բնակության վայրի փոփոխում, անձը հաստատող նոր փաստաթղթերի տրամադրում, արտաքին տեսքի փոփոխում, աշխատանքի կամ ուսման վայրի փոփոխում, ժամանակավոր բնակեցում անվտանգ վայրում, պաշտպանվող անձի նկատմամբ պաշտպանության լրացուցիչ միջոցների ձեռնարկում:

Օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում է զինծառայողների պաշտպանության միջոցները, որոնք իրականացվում են համապատասխան հրամանատարության կամ վերադաս հրամանատարության կողմից: Ի լրումն պաշտպանության ընդհանուր միջոցների՝ զինծառայողների նկատմամբ կիրառվում են՝ պաշտպանվող անձի գործուղումը այլ զորամաս կամ այլ ռազմական ստորաբաժանում, պաշտպանվող անձի տեղափոխումը զինվորական ծառայության նոր վայր, այդ թվում՝ գործադիր իշխանության այլ մարմին, որտեղ դաշնային օրենքով նախատեսված է զինվորական ծառայություն, պաշտպանվող անձին վտանգ սպառնացող պարտադիր զինվորական ծառայության գորակոչված զինծառայողի գործուղումը կամ տեղափոխումը այլ զորամաս կամ ռազմական ստորաբաժանում:

Քրեական վարույթն իրականացնող մարմինների հետ համագործակցելու պատճառով հետապնդվող անձանց պաշտպանությանն ուղղված հատուկ օրենքներ ունեն նաև ԱՄՆ «Կազմակերպված հանցավորության վերահսկողության ակտը» (1970թ.), Միացյալ Թագավորությունը՝ «Ծանր, կազմակերպված հանցավորության և ոստիկանության մասին» ակտ (2005թ.), Իտալիան՝ «Վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության օրենք» (1991թ.), Գերմանիան՝ «Վկաների պաշտպանության մասին» օրենք (1998թ.), Ավստրալիան՝ «Վկաների պաշտպանության մասին» ակտ (1994թ.), Չինաստանը՝ «Վկաների պաշտպանության կանոնակարգ» (2000թ.), Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը (2000թ.):

Վկաների պաշտպանության միջոցառումների միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ դեպքերի մեծամասնությունում վկաները ենթարկվում են սպառնալիքների, հետապնդումների, ահաբեկումների, հարձակումների և գույքի ոչնչացման: Նման պայմաններում վկաների նկատմամբ կիրառվող պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն վտանգի բնույթին և դրա ինտենսիվությանը:

Արտասահմանյան պետությունների փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պաշտպանության միջոցների ենթակա անձանց բաժանում ըստ հանցագործությունների կամ վկաների տեսակների գոյություն չունի: Դրանք ցանկացած դեպքում կիրառվում են՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից⁹⁸:

⁹⁸ Դատարանների կողմից պաշտպանության միջոցների կիրառման դեպքում, որպես կանոն, հաշվի են առնվում.

- հանցագործության տեսակը (կազմակերպված հանցագործություն, սեռական բնույթի հանցագործություն, ընտանեկան հանցագործություն և այլն),
- տուժողի անձը (անչափահաս, սեռական բռնության զոհ և այլն),
- անձի հարաբերությունները ամբաստանյալի հետ (մերձավոր հարազատ, ամբաստանյալի հետ ստորադասության մեջ և այլն),
- վկայի վախի և սթրեսի աստիճանը,
- ցուցմունքի կարևորությունը:

Գ. Վկաների և տուժողների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունն ու առկա պրակտիկան ՀՀ-ում: ՀՀ ներպետական օրենսդրության միակ փաստաթուղթը, որով նախատեսվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է: 2006թ. փոփոխություններով դրանում ավելացվեցին դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանն ուղղված նորմեր, որոնք ներառված են առանձին գլխում՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը վերտառությամբ:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի համար կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու շահերը, ունի պաշտպանության իրավունք: «Պաշտպանության կարիք ունեցող անձի» կամ «պաշտպանվող անձի» պաշտպանությունը կատարում է վարույթն իրականացնող մարմինը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց կիրառելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման⁹⁹:

ՀՀ ներպետական օրենսդրության մեջ տեղ են գտել հիմնականում տուժողների և վկաների պաշտպանությանը վերաբերող միջազգային փաստաթղթերի դրույթները՝ նախատեսելով պաշտպանության միջոցների մեծ բազմազանություն¹⁰⁰:

Անհրաժեշտ է նկատել, սակայն, որ պաշտպանության միջոցներին վերաբերող գլուխը պարունակում է ընդհանուր բնույթի հասկացություններ, որոնք կիրառելի են ցանկացած հանցագործության նախաքննության և դատական քննության ընթացքում՝ առանց մասնավորեցնելու որևէ կատեգորիայի անձանց ներգրավվածության դեպքում դրանց կիրառման առանձնահատկությունները: Այսպես, ՀՀ օրենսդրությամբ նույնպես ճանաչվում է ժամկետային զինձառայող անձանց խոցելիությունը՝ հաշվի առնելով զինված ուժերում կյանքի առանձնահատկությունները և դրա ազդեցությունը զինվորական ծառայություն անցնող անձանց վրա¹⁰¹: ՄԻԵԴ-ը **հաստատել է, որ հիերարխիկ համակարգերը (որը զինված ուժերի բնորոշ հատկանիշներից է) կանխորոշում են զինված ուժերի ներկայացուցիչների միջև**

⁹⁹ ՔԴՕ, հոդված 98:

¹⁰⁰ ՔԴՕ 98.1 հոդվածով նախատեսված են պաշտպանության հետևյալ միջոցները.

- 1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, թե ումից է սպասվում պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում,
- 2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը,
- 3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը,
- 4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը,
- 5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը,
- 6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը,
- 7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը,
- 8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը,
- 9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը,
- 10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը,
- 11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դրսևակ դատական քննություն անցկացնելը,
- 12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման¹⁰⁰:

Քննարկվող գործի պայմաններում նախատեսված պաշտպանության միջոցներից մեկից ավելին կիրառելի է:

¹⁰¹ Համաձայն ՀՀ ՔԴՕ-ի՝ որպես պաշտպանի պարտադիր մասնակցության դեպք նախատեսվում է մեղադրյալի՝ ժամկետային զինձառայող հանդիսանալու հանգամանքը:

փոխհարաբերությունները՝ դժվարացնելով կոչումով բարձր անձանց ընդդիմանալու և հակահարված տալու ենթակաների հնարավորությունը: Այն խոսակցությունները, որոնք քաղաքացիական կյանքում կարող են դիտվել որպես մտքերի անմեղ փոխանակություն, զինված ուժերում կյանքի տեսանկյունից կարող են դիտարկվել որպես հետապնդումների և իշխանազանցության ձևով ճնշումներ: Նման պայմաններում պետությունները իրավասու են ձեռք առնել հատուկ միջոցներ զինված ուժերի անձնակազմի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար¹⁰²: Որպես կանոն, զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններով վկաները և տուժողները պարտադիր ժամկետային զինծառայողներ են՝ 18-20 տարեկան պատանիներ, ովքեր դեռևս լիարժեք ձևավորված անհատներ չեն և հեշտ են ենթարկվում տարատեսակ ազդեցությունների, սպառնալիքների, ճնշումների, համոզման: Հետևաբար, զինվորական կարգի դեմ ուղղված ցանկացած հանցագործության քննության շրջանակներում վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է դիտարկվի վարույթին մասնակցող բոլոր անձանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտության հարցը:

Զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության ընթացքում առավել կիրառական պաշտպանության միջոցներն են պաշտպանվող անձի ծառայության վայրը փոխելը, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի ընտրությունը, պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու անվտանգությունն ապահովելը, դատական քննության ընթացքում կիրառելի է նաև դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական նիստ անցկացնելը:

Զինծառայողների նկատմամբ ամենակիրառական պաշտպանության միջոցը զինվորական ծառայության վայրը փոփոխելն է: Սակայն աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոփոխելը նախատեսող ՔԴՕ 98.11-րդ հոդվածը չի կարգավորում ծառայության վայրի փոփոխման հարցերը և հոդվածի բովանդակությունից պարզ չէ, թե արդյոք այն վերաբերում է զինվորական ծառայության վայրը փոփոխելուն: Մասնավորապես, չնայած այն հանգամանքին, որ հոդվածը վերնագրված է աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, դրա բովանդակությամբ անդրադարձ չի կատարվում պաշտպանվող անձի ծառայության վայրը փոփոխելուն: Ավելին, հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե պաշտպանվող անձին ուղղված վտանգի վերացման համար պահանջվում է, որ նա թողնի նախկին աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը, ապա քրեական վարույթ իրականացնող մարմնին այդ անձի միջնորդությամբ կամ համաձայնությամբ օգնում է տեղավորվել նոր աշխատանքի կամ ուսման վայր: Ենթադրվում է, որ օրենքով նշված ծառայության վայրը փոփոխելը վերաբերում է պետական կառավարման մարմիններում ծառայություն հանդիսացող աշխատանքին, քանի որ նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ պաշտպանվող անձի հարկադիր պարապուրդի ժամկետը հաշվակցվում է որպես աշխատանքային ստաժ և այդ ժամկետի համար վճարվում է փոխհատուցում, որը չի կարող նախկին աշխատանքի կամ ծառայության համար տրված աշխատավարձից ցածր լինել: Իսկ հոդվածի երրորդ մասը վերաբերում է պաշտպանվող անձի ուսման վայրը փոխելուն: Այսպիսով, ՔԴՕ 98.11-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցը չի կարգավորում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողի ծառայության վայրը փոփոխելու հետ կապված հարցերը, ինչի պայմաններում այն որպես պաշտպանության միջոց զինծառայողների նկատմամբ կիրառելիս բաց են մնում մի շարք հարցեր, այդ թվում՝ արդյո՞ք զինծառայողի ծառայության վայրը փոխվում է վարույթն իրականացնող մարմնի պարտադիր որոշմամբ, թե՞ համապատասխան հրամանատարի հրամանով, ինչպիսի՞ նոր ծառայության վայր է տեղափոխվում զինծառայողը, ու՞մ վրա է դրվում վերջինի

¹⁰² Larissis and others v. Greece, 24 February 1998, para. 51.

պաշտպանության իրականացման հետ կապված խնդիրների լուծման պարտականությունը և այլն:

ՔԴՕ 98.6-րդ հոդվածով նախատեսված է պաշտպանության միջոց՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոցի ընտրությունը, որը կբացառի բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը: Պայմանավորված զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների բնույթից՝ դրանց քննության ընթացքում նման խափանման միջոց հանդիսանում է մեղադրյալի կալանավորումը, քանի որ այն է միակ միջոցը, որը կարող է ապահովել հանցագործության մեջ մեղադրվող զինծառայողի հեռացումը համապատասխան միջավայրից:

Միաժամանակ, ըստ փաստաբան փորձագետի կարծիքի՝ սպայական կազմի զինծառայողներին վերագրվող հանցագործությունների դեպքում մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցնելու հնարավորությունը քննչական մարմինների կողմից գրեթե չի դիտարկվում: Մինչդեռ դա կարող է լինել այլընտրանք նույնիսկ անձի կալանավորմանը՝ ապահովելով վարույթի բնականոն ընթացքը և զերծ պահելով տուժողներին և վկաներին հնարավոր հակաիրավական արարքների ենթարկվելու վտանգից:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված գործերով վարույթի շրջանակներում որպես պաշտպանության միջոց նպատակահարմար է կիրառել նաև վտանգի աղբյուր հանդիսացող անձանց ծառայության վայրի փոփոխությունը, հատկապես այն դեպքերում, երբ նման վտանգը սպառնում է պաշտպանության կարիք ունեցող անձի նկատմամբ վերադասության հարաբերություններում գտնվող անձի կողմից:

Դ. Պաշտպանության միջոցների կիրառության վերաբերյալ քանակական տվյալներ: Դիտարկումների արդյունքները փաստում են, որ դիտարկված 181 քրեական գործերից ոչ մեկում դատարանների կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ պաշտպանության միջոցներ չեն կիրառվել: Նախաքննության ընթացքում ընտրված պաշտպանության միջոցների վերաբերյալ դատական քննության ընթացքում նույնպես չի բարձրաձայնվել: Գործի մասնակիցներից ստացված տեղեկությունները բավարար չեն ամբողջական պատկերը ներկայացնելու համար, քանի որ դեպքերի մեծ մասում ո՛չ վկաները, ո՛չ տուժողները, ո՛չ դատավարությանը մասնակցող այլ անձինք չեն կարողացել հստակ պատասխանել վարույթի ընթացքում կիրառված պաշտպանության միջոցների մասին:

Արտաքին դիտարկմամբ արձանագրվել են քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների 3 դեպքեր, ինչը, սակայն, ներկայացուցչական քանակ չէ կիրառված պաշտպանության միջոցների իրական պատկերը գնահատելու համար: Երեք դեպքում էլ պաշտպանության միջոցը կիրառվել էր տուժողների նկատմամբ, երեք դեպքում էլ փոխվել էր վերջիններիս ծառայության վայրը:

Ե. Դատարանում վկաների պաշտպանվածության խնդիրները. մոնիթորինգի արդյունքներ: Հետազոտության արդյունքներն ակնառու են դարձնում մի շարք խնդիրներ՝ կապված քրեական գործի քննության ընթացքում վկաների պաշտպանության արդյունավետության հետ: Այսպես, դիտարկման ենթարկված դատական քննության ընդհանուր կարգի շրջանակներում քննված 39 գործերով հարցաքննվել են 136 վկաներ, որոնց 67%-ը հանդիսացել են պարտադիր ժամկետային ծառայության մեջ գտնվող անձինք:

Դիտարկման արդյունքները փաստում են, որ նախքան հարցաքննվելը վերջիններս չեն առանձնացվում հասարակության մյուս ներկայացուցիչներից: Ճիշտ է, դիտարկված բոլոր գործերում պահպանվել է ՔԴՕ 340-րդ հոդվածով նախատեսված վկայի հարցաքննության կարգը, վկաները հարցաքննվել են անջատ և չհարցաքննված վկաների բացակայությամբ,

սակայն այդ ընթացքում վերջիններս գտնվել են դատարանի միջանցքում, որտեղ նրանց հետ կարող էր շփվել ցանկացած մեկը: Վկաների՝ ճնշումների ենթարկվելու ռիսկն առկա է դիտարկման ենթարկված բոլոր դատարաններում, քանի որ և ոչ մի դատարանում վկաները չեն պահվել վկաներին պահելու համար նախատեսված առանձին սենյակներում: Հազվադեպ դեպքերում վերջիններս պահվել են կարգադրիչների համար նախատեսված կամ դատարանի այլ աշխատասենյակներում: Դիտարկումների ընթացքում արձանագրվել են դատավարության կողմ չհանդիսացող անձանց կողմից վկաների հետ առանձին զրուցելու և շփվելու դեպքեր, առանձին գործերով արձանագրվել են նաև քաջքուկներ և վկաներին ուղղված սպառնալիքներ: Նման դեպքերում դատական կարգադրիչների ծառայությունը չի կարողացել իրականացնել իր առջև դրված խնդիրները, այն է՝ դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ գործողություններից: Դատարանում կարգուկանոն պահպանելու համար հաճախ, հատկապես մարզերում, դատարան են հրավիրվում ՌՌ աշխատակիցները:

Օրինակ N 28

Վանաձորի դատարանում քննվող գործերից մեկի ժամանակ դիտորդն արձանագրել էր, որ վկաների նկատմամբ փորձել էր ճնշում գործադրել քաղաքացիական հագուստով մի անձ: Վերջինս վկաներին սպառնացել էր, որ եթե ցուցմունք տան, վատ կլինի իրենց համար: Այդ ամենը եղել էր կարգադրիչների ներկայությամբ, որոնք որևէ կերպ չեն փորձել միջամտել: Միջադեպը նկատել և այդ մասին դատավորին ահազանգել է դատախազը, ինչից հետո դատավորի հրահանգով վկաները տեղափոխվել են առանձին սենյակ: Սակայն վկաները տարվել էին կարգադրիչների պետի սենյակ, որտեղ նրանց հետ նույն սենյակում էին գտնվել նաև քաղաքացիական հագուստ կրող այլ անձինք: Ինչպես դատախազն էր նկատել այս հանգամանքի հետ կապված. «Իմ հետ էլ նույն սենյակում նման դեմքերով մարդիկ լինեին, ես էլ կվախենայի ցուցմունք տալ...» (գործ N 51):

Օրինակ N 29

Ինչպես ներկայացրել էր դատավորներից մեկը, դատական նիստը հետաձգելուց հետո, երբ նիստի ձայնագրառումն ավարտվել է, վկաներին ճնշումներից զերծ պահելու համար ամբաստանյալին և նիստին ներկա նրա հարազատներին զգուշացրել է՝ «Եթե ես իմանամ, որ տուժողին կամ վկային ամբաստանյալը կամ ամբաստանյալների հարազատները, ընկերները մոտենան, գործ եք ունենալու ինձ հետ: Իսկ հանձին ինձ, օրենքի հետ եք գործ ունենալու»: Ըստ դատավորի՝ սա եզակի միջոցներից մեկն է՝ վկաներին ճնշումներից զերծ պահելու համար (փորձագիտական հարցազրույցից):

Դատական քննության արագացված կարգի կիրառման պրակտիկան զինվորական հանցագործություններով

Ա. Դատական քննության արագացված կարգի կիրառման իրավական հիմքերը: ՔԴՕ-ի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալը իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայն լինելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար ՔՕ-ով նախատեսված պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Մինչև դատաքննությունը սկսել մեղադրողը կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությամբ: Նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված են այն պայմանները, որոնց բավարարման դեպքում դատարանը կարող է կիրառել դատական քննության արագացված կարգ: Դրանք են. ա) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, բ) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և գ) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի պաշտպան:

Այսպիսով՝ դատական քննության արագացված կարգ կիրառվում է այն դեպքում, երբ մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայն է կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ:

Վերոգրյալ պայմաններից որևէ մեկի բացակայության պայմաններում դատական քննությունը պետք է իրականանա ընդհանուր կարգով: Ուստի դատական քննության արագացված կարգի իրականացման վերաբերյալ միջնորդությունը մերժելու հիմք են հանդիսանում.

1. մեղադրողի համաձայնության բացակայությունը,
2. առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի մասնակի համաձայնությունը,
3. ամբաստանյալին կամ մեղադրյալին վերագրվող արարքի առանձնապես ծանր լինելը,
4. ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից միջնորդությունը ներկայացվել է ճնշման տակ, այսինքն՝ հարկադրաբար,
5. ամբաստանյալը կամ մեղադրյալը չի գիտակցում ներկայացված միջնորդության բնույթն ու հետևանքները:

Եթե վերոգրյալ պայմաններից որևէ մեկը չի բավարարվել, ապա դատարանը կայացնում է դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշում և գործը քննում ընդհանուր կարգով:

ՔԴՕ 375.2-րդ հոդվածը սահմանում է դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդության ներկայացման կարգը: Համաձայն այդ հոդվածի՝ «1. Ամբաստանյալը (մեղադրյալը) դատական քննության արագացված կարգով անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունը սկսվելը:

2. Ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Այն դեպքում, երբ ամբաստանյալը (մեղադրյալը) ներկայացրել է արագացված կարգ կիրառելու միջնորդություն և չունի պաշտպան,

ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Եթե ամբաստանյալին հնարավոր չէ անհապաղ ապահովել պաշտպանով, ապա դատարանը պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգում է: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց, ապա դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը»:

Դատական քննության արագացված կարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդության քննությունը սկսվում է մեղադրողի կողմից ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ներկայացմամբ: Դրանից հետո դատավորը հարցեր է տալիս ամբաստանյալին՝ համոզվելու համար՝ պարզ է արդյոք նրան առաջադրված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելն արդյոք խորհրդակցել է պաշտպանի հետ (եթե ամբաստանյալն ունի պաշտպան), գիտակցում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները:

Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա են 375.1-րդ հոդվածով սահմանված պայմանները, որոշում է կայացնում դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ: Հակառակ դեպքում՝ դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

Այսպիսով՝ վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը վերապահված է ամբաստանյալին/մեղադրյալին, այն էլ միայն պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո: Բացի այդ, մինչև միջնորդությունը ներկայացնելը պաշտպանի հետ խորհրդակցելը չպետք է կրի ձևական բնույթ. խորհրդակցելու նպատակն այն է, որ ամբաստանյալին հանգամանորեն պարզաբանվի արագացված կարգով դատական քննության էությունը ու հետևանքները, դատավճիռ կայացնելու և այն բողոքարկելու կարգը: Ընդ որում, մինչև խորհրդակցելը պաշտպանը պետք է ծանոթանա գործի նյութերին և համոզված լինի, որ իր պաշտպանյալի մեղադրանքը հիմնավորված է և հաստատվում է գործով հավաքված ապացույցներով¹⁰³:

Արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարվում. ուսումնասիրվում են միայն ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Դատարանն արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը: Եթե առավել խիստ պատժի երկու երրորդը, համաձայն օրենքի, փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա նշանակվում է առավել մեղմ պատիժը: Դատավճիռը կարող է բողոքարկվել ըստ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքի և կարգի, այն բացառությամբ, որ ապացույցների վերաբերյալ հարցերը չեն կարող հիմք ծառայել Վերաքննիչ դատարանի կողմից դատավճիռը բեկանելու համար:

Բ. Դատական քննության արագացված կարգի կիրառման առանձնահատկություններ. մոնիթորինգի արդյունքներ: Դիտարկման ենթարկված դատական գործերից միայն 22%-ն է քննվել դատական քննության ընդհանուր կարգով: 78% դեպքերում դատարանի կողմից կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

¹⁰³ Վճռաբեկ դատարանի 2011 թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշումը, կետ 29:

Դիտարկումները ցույց են տալիս, որ արագացված կարգի կիրառումը, որպես կանոն, դատախազների, դատավորների և պաշտպանների միջև ձեռք բերված փոխադարձ համաձայնության արդյունք է, որի ընթացքում ոչ միշտ են հաշվի առնվում ամբաստանյալների օրինական շահերը:

Դատարանները արագացված դատական քննության կարգ կիրառելու պայմանները ստուգելու իրենց պարտականությունը ընկալում են որպես ձևական պահանջ: Դատավորները հաճախ օրենքով նախատեսված հաջորդականությամբ հապճեպ հարցադրումներ են կատարում ամբաստանյալներին՝ արդյոք պա՞րզ է մեղադրանքը, համաձա՞յն է առաջադրված մեղադրանքի հետ, պնդո՞ւմ է դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը, կամավո՞ր է այն ներկայացրել, խորհրդակցե՞լ է իր պաշտպանի հետ մինչ միջնորդությունը ներկայացնելը և հասկանո՞ւմ է արագացված դատական քննության հետևանքները:

Պաշտպանի կողմից ներկայացված միջնորդության արդյունքում շփոթված ամբաստանյալների կողմից դատախազի կամ պաշտպանների հորդորներով արտաբերված «այո»-ն հանգեցնում է դատարանի կողմից արագացված կարգի անվերապահ կիրառման: Դիտարկումների ընթացքում չի հանդիպել գոնե մի դեպք, երբ դատավորները մերժեին միջնորդությունը: Ճիշտ հակառակը, այնպիսի անհեթեթ իրավիճակներում է արագացված կարգը կիրառություն ստացել, որը կոպտորեն խախտում է արդար դատաքննության բոլոր հիմնարար երաշխիքները:

Օրինակ N 30

Գործերից մեկում, դատական նիստը բացելուց հետո դատարանում մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը չընթերցվեց: Դատավորը հապճեպորեն դիմեց ամբաստանյալին՝ պարզելու, թե արդյո՞ք ընդունում է իր մեղքը: Հարցին պատասխանեց պաշտպանը՝ նշելով՝ այո և ներկայացրեց դատաքննության արագացված կարգ կիրառելու միջնորդություն, որը բավարարվեց դատարանի կողմից (գործ N 20):

Օրինակ N 31

Դատական նիստերից մեկի ընթացքում դատավորը հայտարարեց ընդմիջում, որպեսզի գործին նոր ներգրավված պաշտպանը ծանոթանա գործի նյութերին: Ընդմիջումից անմիջապես հետո կարգադրիչը մոտեցավ պաշտպանին և կանչեց դատավորի սենյակ: Պաշտպանը, առանց որևէ գործի նյութ իր հետ վերցնելու, գնաց: Երբ վերադարձավ դահլիճ, դատավորը եկավ և շարունակեց նիստը՝ պաշտպանին հարցնելով. «Ծանոթացա՞ք գործին», պաշտպանը պատասխանեց՝ «այո», և նիստը շարունակվեց (գործ N 175):

Գործերի մեծ մասում նկատվում էր ինչպես պաշտպանների, այնպես էլ դատավորների շահագրգռվածությունը՝ գործն արագացված դատական կարգով քննելու: Դիտորդների կողմից արձանագրվել են դեպքեր, երբ պաշտպանն ուղղակիորեն ստիպում է ամբաստանյալին արագացված կարգով դատական քննության կարգի միջնորդություն ներկայացնել՝ համոզելով, որ պատիժը մեղմ կլինի կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվի:

Օրինակ N 32

Ամբաստանյալի հետ զրույցից դիտորդը տեղեկացել էր, որ պաշտպանն իրեն ասել է, որ մեղքն ընդունելու դեպքում ինքը պատիժ չի կրի և բոլոր հարցերը հեշտ կլուծվեն (գործ N 77):

Արձանագրվել են դեպքեր, երբ նույնիսկ արագացված կարգ կիրառելու միջնորդության ներկայացումից հետո էլ ամբաստանյալը չէր ընդունում մեղքը:

Օրինակ N 33

Գործերից մեկում նախքան դատական նիստի սկսվելը պաշտպանը հայտնել էր, որ ամբաստանյալը, ում մեղադրանք էր առաջադրվել պետի նկատմամբ բռնություն գործադրելու և վիրավորանք հասցնելու համար, անմեղ է և նրան ձերբակալելուց հետո են ստիպել ընդունել մեղադրանքը: Այնուամենայնիվ, դատարանում նույնպես պաշտպանի հորդորով ամբաստանյալը ընդունեց մեղքը, ներկայացվեց արագացված դատական քննության կարգ կիրառելու միջնորդություն: Սակայն իր խոսքի ընթացքում ամբաստանյալը չհամաձայնեց 360-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի հետ՝ նշելով, որ հայեցողանքը ուղղված չի եղել տուժողին: Սակայն դատավորը միանգամից ընդհատեց նրան՝ ասելով. «Կամ ընդունում ես մեղքը կամ չես ընդունում: Մեղքդ արդեն ընդունել ես, էլ ոչ մի խոսք պետք չէ»: Կիրառվեց արագացված դատական քննության կարգ և ամբաստանյալը դատապարտվեց 4 ամիս ժամկետով ազատազրկման (գործ N 39):

Օրինակ N 34

Մեկ այլ գործով արագացված կարգի կիրառման համար ամբաստանյալի կողմից մեղքն ընդունելու վերաբերյալ հարցերը պարզաբանելիս ամբաստանյալը չի համաձայնել մեղադրանքի դրվագներից մեկին, այն է՝ տուժողի նկատմամբ բռնություն կիրառելուն (մեղադրանքն առաջադրված է եղել ՔՕ-ի 358 և 360-րդ հոդվածներով): Դատավորը պատասխանել է. «Դու արդեն միջնորդություն ես ներկայացրել և չես կարող պահանջել որպեսզի մենք նորից հարցաքննենք քեզ» (գործ N 107):

Գ. Տուժող կողմի ներգրավվածությունը արագացված կարգի կիրառման հարցում. իրավական վերլուծություն: Արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ նաև դատական քննության ընթացքում տուժողի դերին: Այսպես, ՔԴՕ-ի համաձայն՝ մեղադրանքի կողմը իր մեջ ներառում է քրեական հետապնդման մարմինները, տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները:

Այսպես, ՔԴՕ 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդել արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին, այն հանցագործություններով, որոնց համար ՔՕ-ով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»:

Դատաքննության արագացված կարգի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ ներառված դրույթների վերլուծությունից հետևում է, որ դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում օրենսդիրը սահմանում է ամբաստանյալի արդարացի դատաքննության իրավունքի կենսագործման բավարար շրջանակ, ինչպես նաև ամբաստանյալի համար նախատեսում է բարենպաստ իրավական հետևանքներ:

Մինչև նույն ժամանակ, արագացված դատական քննության իրականացման պայմաններում ՔԴՕ-ը որևէ կանոն չի նախատեսում, որը կամրագրեր տուժող կողմի (այդ թվում՝ տուժողի,

տուժողի ներկայացուցչի և օրինական ներկայացուցչի) ներգրավվածությունը արագացված կարգի կիրառման հարցում: Այլ կերպ՝ տուժող կողմի դիրքորոշումը հաշվի առնելու պահանջ ամրագրված չէ ո՛չ մեղադրողի համար՝ արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս և ո՛չ էլ դատարանի համար արագացված դատական քննության անցնելու մասին որոշում կայացնելիս:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010թ. մարտի 26-ին թիվ ԵՇԴ/0097/01/09 գործով հանգել է դիրքորոշման, որ «իր խախտված իրավունքները վերականգնելու ... համար» սահմանադրական ձևակերպումը վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին, քանի որ տուժողն այն անձն է, որի իրավունքները հանցագործությամբ խախտվել են: Ընդ որում, տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»:

Վճռաբեկ դատարանի որոշմամբ նման պահանջը ենթադրում է, որ՝

ա. դատախազը/մեղադրողը/ արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնի տուժողի դիրքորոշումը՝ որպես մեղադրանքի կողմի սուբյեկտի,

բ. դատարանը չի կարող անցնել դատական քննության արագացված կարգի՝ առանց այդ հարցի կապակցությամբ տուժողի դիրքորոշումը պարզելու,

գ. դատարանը կարող է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը մերժել, եթե դրա դեմ առարկում է տուժողը: Այդ դեպքում դատարանը կայացնում է առանձին որոշում, որում պատճառաբանում է արագացված դատական քննության արդյունքում տուժողի օրինական շահերի վտանգման հանգամանքները:

Դատական քննության արագացված կարգի դեմ առարկելու և ամբաստանյալի համապատասխան միջնորդությունը մերժելու հարցը լուծելիս տուժողի դիրքորոշումը պետք է վճռական նշանակություն ունենա, մասնավորապես այն դեպքերում, երբ տուժողը՝

ա. ողջամտորեն հիմնավորում է, որ իրեն հասցված վնասն ամբողջությամբ չի հատուցվել,

բ. փաստարկված առարկում է գործի փաստական հանգամանքների դեմ:

Թեև Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտվել է նման առաջադիմական իրավական դիրքորոշում, այնուամենայնիվ, այն չի կենսագործվում:

Դ. Տուժողների կարծիքի ճշտումը դատական քննության արագացված կարգի կիրառության շրջանակներում. մոնիթորինգի արդյունքներ: Դիտարկումների ընթացքում արձանագրվել է, որ արագացված կարգի կիրառման պայմաններում տուժողների կարծիքն արագացված դատական քննությունն անցկացնելու հարցի վերաբերյալ միայն 3 դատական գործերի շրջանակներում է ճշտվել: Դատարանի կողմից առավել հաճախ պարզվում է տուժողի՝ քաղաքացիական հայց ներկայացրած լինելու հանգամանքը, տուժողի և ամբաստանյալի միջև «պարտք ու պահանջի» առկայությունը:

Պատժի քաղաքականությունը զինվորական գործերով

Պայմանավորված զինված ուժերի՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխավորի դերով և նշանակությամբ՝ վերջին տարիներին ակնհայտ է դատական պրակտիկայի պատժի քաղաքականության խստացումը զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով: Սույն հանգամանքը, իհարկե, պայմանավորված է նաև օբյեկտիվ չափանիշներով, մասնավորապես՝ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի, ՀՀ զինված ուժերում բռնությամբ կատարվող հանցագործությունների թվի աճի, կանոնադրային հարաբերությունների խախտումների առկայության պայմաններում առաջանում է սոցիալական անհրաժեշտություն պետության պատժիչ քաղաքականության միջոցով բարձրացնել զինված ուժերի նկատմամբ հասարակության վստահությունը, ամրապնդել զինված ուժերի հեղինակությունը, զինված ուժերում կարգապահությունը և նպաստել անձնակազմի անդամների միջև առողջ հարաբերությունների ձևավորմանը:

Այնուամենայնիվ, որքան էլ արտահայտված լինի դատական իշխանության պատժի քաղաքականությունը, կարևորվում է յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանումը:

Ա. Պատժի նպատակներն ու պատժի քաղաքականության սկզբունքները: ՀՀ քր. օր.-ի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Սույն հոդվածի վերլուծությունից երևում է, որ սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած ՔՕ 10-րդ հոդվածի բովանդակությունից, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Պատժի քաղաքականության տեսանկյունից մեծ կարևորություն ունի պատժի և կատարված հանցագործության ծանրության համապատասխանության հարցը: Սույն սկզբունքը առաջադրվել է դեռևս երկու դար առաջ Չ. Բեկկարիայի կողմից, որի՝ հանցագործությունների կանխարգելման վերաբերյալ տեսության համաձայն, երբ անձը հանցանք է գործում, ցանկալի է, որ նա գործի նվազ վտանգավորության զանցանքներ, քան ծանր հանցագործություններ: Հետևաբար, պետությունը պետք է դասակարգի պատժի միջոցները հանցագործությունների ծանրությանը համապատասխան, ինչը պոտենցիալ հանցագործներին կդրդի (հանցագործություն կատարելու ցանկության դեպքում) կատարել նվազ վտանգավորության հանցագործություններ: Կատարված հանցագործության և նշանակված պատժի միջև համապատասխանության բացակայությունը կհանգեցնի մի իրավիճակի, որ հանցագործություն կատարող անձինք կգերադասեն կատարել ավելի ծանր հանցագործություններ: Այդուամենայնիվ, հանցագործությունների կանխարգելման սույն տեսությունը բազմաթիվ քննադատությունների արժանացավ:

Ի հակառակ սույն տեսակետի՝ Ջ. Անդենասերը նշում է, որ հանցագործության համար պատիժը հասարակության ուղղակի անհամաձայնությունն է կատարված արարքին և այդպիսով ձևավորում է գիտակցական և ենթագիտակցական ձեռնպահություն տվյալ արարքից: Համաձայն

վերջինի տեսակետի՝ հանցագործությանը չհամապատասխանող պատիժը վտանգում է պատժի բարոյական ազդեցությունը:

Քաղաքականության հիմնավորվածության համար պատժի համապատասխանությանը ներկայացվում են երեք պահանջներ:

1. Նմանություն, երբ նույն ծանրության և հանրային վտանգավորության հանցագործությունների համար հանցագործություն գործած անձինք ենթակա են համապատասխան պատժի: Մույն սկզբունքը, այնուամենայնիվ, չի նշանակում, որ հանցագործները պետք է ենթարկվեն նույն պատժին, քանի որ յուրաքանչյուր հանցագործություն տարբերվում է իր ծանրության աստիճանով, առաջացրած վնասով և մեղավորությամբ:

2. Հանցագործության օրենսդրական աստիճանակարգում. Ա հանցագործության համար ավելի ծանր պատիժ նախատեսելը, քան Բ հանցագործության համար արտահայտում է Ա հանցագործության նկատմամբ առավել անհանդուրժողականությունը, ինչը թույլատրելի է, եթե այն ավելի ծանր հանցագործություն է: Այսպիսով՝ պատժատեսակները պետք է կարգավորվեն աստիճանակարգված, որպեսզի դրանց հարաբերական ծանրությունը արտացոլվի կոնկրետ գործով նշանակված պատժում:

3. Երրորդ պահանջը վերաբերում է հանցագործության համար նախատեսված պատժի սահմաններին: Մույն կանոնը ենթադրում է, որ հանցագործության համար նախատեսված պատիժները պետք է ունենան իրատեսական ստորին և վերին սահմաններ, որի պայմաններում հնարավոր կլինի նշանակել արդարացի պատիժ¹⁰⁴:

Մույն պայմաններում, համադրելով զինվորական գործերով պատժի միասնական քաղաքականության առկայությունը և պատժի նպատակների իրականացման պահանջը՝ անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր դեպքում հանցագործության համար նշանակված պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին և բնույթին: Ինչպես ամրագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը, «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ: Իսկ արարքի հանրային վտանգավորության աստիճանը որոշելիս դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության վտանգավորության վրա՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տես Գ. Մադաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009թ. փետրվարի 17-ի ԵՇԴ/029/01/08 որոշման 14-րդ կետը):

Այսպիսով՝ նույնիսկ այն պայմաններում, երբ գործում է որևէ խումբ հանցագործությունների նկատմամբ պատժի միասնական քաղաքականություն, յուրաքանչյուր քրեական գործով նշանակված պատիժը պետք է ելնի պատժի անհատականացման սկզբունքից, որի բովանդակության հիմնական մասն է կազմում հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը, որոնք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս անձին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարած անձ, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձ՝ իր անհատական հատկանիշներով:

ՀՀ դատարաններում դատավարության կողմերը սովորաբար մրցակցում են մեղքի ապացուցման խնդրի շրջանակներում, մինչդեռ արդարացի պատժի նշանակման հարցը դուրս է մնում ինչպես պաշտպանության, այնպես էլ՝ մեղադրող կողմի գործողությունների կիզակետից:

¹⁰⁴ Proportionate Sentencing, Exploring the Principles, Andrew von Hirsch, Andrew Ashworth, 2005, p. 139-140.

Ավելին, պատիժը պայմանական չկիրառելը «չարաշահվում է»՝ որպես «մեղքի շուրջ բանակցային գործիք»: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ արդարադատության կայուն ավանդություններ ունեցող համակարգերում մեղքի ապացուցման և պատժի նշանակման գործընթացները տարանջատված են: Թե՛ դատարանը, թե՛ դատավարության կողմերը, թե՛ ներգրավվող փորձագետ մասնագետները հատուկ ուսումնասիրության առարկա են դարձնում պատժի նշանակման հարցերին, որոնք պակաս կարևոր չեն, քան անձի մեղավորության հարցի պարզումը: Պատժի՝ օրենսդրորեն նախատեսված նպատակների ձեռքբերումը կլինի իրատեսական միայն այն դեպքում, երբ համակողմանիորեն բացահայտված կլինեն անձը բնութագրող տվյալները, անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, պահպանված կլինեն պատժի նշանակման սկզբունքները:

Բ. ՀՀ ՔՕ զինվորական հանցագործությունների համար նախատեսված պատիժների հիմնախնդիրը: Զինվորական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության համար կարևորվում է դրանց համար օրենքով նախատեսված պատիժների խնդիրը: Հանցագործության համար նախատեսված պատիժը պետք է համապատասխանի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին: Սակայն ՀՀ ՔՕ-ի 32-րդ գլխում այս սկզբունքը լիովին պահպանված չէ: Մասնավորապես, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված են առավել մեղմ պատիժներ, քան դրանց հանրային վտանգավորությունն է ենթադրում: Մասնավորապես, դրանց որակյալ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն արարքի կատարումը, որը հանգեցրել է տուժողի առողջությանը պատճառված տարբեր աստիճանի վնասի: Օրինակ՝ ՀՀ ՔՕ-ի 359-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու համար նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որի երրորդ մասով որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք է նախատեսված ծանր հետևանքներ առաջացնելը: Տեսական գրականության մեջ ծանր հետևանքները մեկնաբանվում են որպես անձի առողջությանը ծանր վնաս պատճառելը, անձի ինքնասպանությունը¹⁰⁵: Հոդվածի 3-րդ մասը որպես պատիժ նախատեսում է չորսից ութ տարի ժամկետով ազատազրկումը: ՔՕ-ի 112-րդ հոդվածով նախատեսված առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հասարակ տեսակի համար նախատեսված է պատիժ երեքից յոթ տարի ժամկետով, իսկ ծանրացնող հանգամանքներով տեսակի համար՝ հինգից տասը տարի ժամկետով ազատազրկում: Փաստորեն, միայն անձի դեմ ուղղված հանցագործությունների համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան ոչ միայն անձին, այլև զինվորական ծառայության կարգին և պետության անվտանգությանը վնասող հանցագործությունների համար: Նույնը վերաբերում է նաև զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող ՀՀ ՔՕ-ի 32-րդ գլխում տեղ գտած այն հանցագործություններին, որոնք բազմաօբյեկտ են: Նման պայմաններում խնդրո առարկա հանցագործությունների համար ՔՕ-ով նախատեսված պատիժները չեն համապատասխանում հանցագործության իրական հանրային վտանգավորությանը և մեղմ են, քանի որ զինվորական հանցագործություններն ունեն ավելի մեծ հանրային վտանգավորություն, քան նույն օբյեկտիվ կողմով դրսևորվող ընդհանուր բնույթի հանցագործությունը, քանի որ այն ոտնձգում է ոչ միայն անհատի, այլև զինվորական ծառայության կարգի, զինված ուժերի մարտունակության և պետության պաշտպանության դեմ¹⁰⁶:

¹⁰⁵ ՀՀ Քրեական իրավունք, հատուկ մաս, դասագիրք բուհերի համար: Երևան, 2006, էջ 959:

¹⁰⁶ Տե՛ս «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված քրեական պատասխանատվության պրոբլեմները ՀՀ-ում», Ա. Գաբուզյան, «Հայաստանը և ժողովրդավարական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ» ժողովածու, Երևան, 2011, ԵԱՀԿ:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների մի մասով նախատեսված սանկցիաների պայմաններում հնարավոր են իրավիճակներ, որոնց դեպքում հանցագործության համար մեղավոր ճանաչված անձը կարող է խուսափել պատժի կրումից: Որպես օրինակ կարելի է նշել ՀՀ ՔՕ-ի 360-րդ հոդվածը, որը սահմանում է զինծառայողին վիրավորանք հասցնելու հանցակազմը: Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն բնորոշվում է որպես զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը մեկ այլ զինծառայողի կողմից, ինչի համար որպես պատիժ նախատեսված է առավելագույնը երկու ամիս ժամկետով կալանք կամ առավելագույնը վեց ամիս ժամկետով կարգապահական գումարտակում պահելը:

Համաձայն հոդվածի դիսպոզիցիայի՝ հանցակազմը վերաբերելի է բոլոր զինծառայողներին՝ անկախ զինվորական կոչումից և պաշտոնից: Մինչդեռ պրակտիկայում կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժատեսակը կիրառվում է միայն ժամկետային պարտադիր զինծառայողների շարքային կազմի զինծառայողների նկատմամբ: Մյուս կողմից էլ, չի բացառվում, որ զինծառայողն ունենա մինչև 8 տարեկան երեխա, որի պայմաններում վերջինի նկատմամբ ՀՀ ՔՕ-ի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանքը որպես պատիժ նշանակվել չի կարող:

Այսինքն՝ ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում ծառայակցին վիրավորանք հասցնելու համար մինչև ութամյա երեխա ունեցող սպան ՔՕ 360-րդ հոդվածի 1-ին մասով ենթակա չի լինի պատժի:

Օրենսդրական կարգավորման նման բացերի պայմաններում անձը չի ենթարկվում պետական հարկադրանքի միջոցի կիրառման, ինչը քրեական պատասխանատվության կարևորագույն տարրն է և առանց դրա այն լիարժեք համարվել չի կարող:

Գ. Զինվորական հանցագործություններով պատժի քաղաքականության օրինաչափությունները. մոնիթորինգի արդյունքներ: Դիտարկումների արդյունքում բացահայտվել են պատժի քաղաքականության մի շարք օրինաչափություններ.


1. կիրառված խափանման միջոցների ու նշանակված պատիժների փոխկապակցվածությունը,
2. ընթացակարգի և դատարանի կողմից նշանակված պատժատեսակի փոխկապակցվածությունը,
3. խափանման միջոցի ընտրությունը՝ կախված ամբաստանյալին վերագրվող արարքից,
4. պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված օրինաչափությունները:

Կիրառված խափանման միջոցներն ու նշանակված պատիժները


Դիտարկման արդյունքներով ակնհայտ օրինաչափություններ են նկատվել կիրառված խափանման միջոցի և վերջնական դատական ակտով սահմանված պատժատեսակների միջև (տե՛ս պատկերներ 8, 9 և 10):

Այսպես, այն դեպքերում, երբ որպես խափանման միջոցներ ընտրված են եղել *ստորագրությունը չհեռանալու մասին* և *կալանավորումը*, ազատագրված անձանց թիվը հասնում է համապատասխանաբար 70%-ի և 76%-ի, մինչդեռ *հրամանատարության հսկողությանը հանձնելու* պարագայում ազատագրված անձինք ընդամենը 39% են կազմում:


Պատկեր 8. Կալանավորումը՝ որպես խափանման միջոց և պատժատեսակը



Պատկեր 9. Հրամանատարության հսկողությանը հանձնելը՝ որպես խափանման միջոց և պատժատեսակը



Պատկեր 10. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ու պատժատեսակը




Ընթացակարգը և դատարանի կողմից նշանակված պատժատեսակը

Պատկերներ 11-ում և 12-ում ներկայացված տվյալներից հնարավոր է որոշ հետաքրքիր եզրահանգումներ կատարել: Մասնավորապես, դատական քննության երկու հնարավոր ընթացակարգերի դեպքում էլ կարգապահական գումարտակում պահելու և տուգանքի նշանակման դեպքերի տոկոսային արտահայտումները գրեթե նույնական են: Գրեթե նույնական է նաև ազատագրվման և կալանքի կիրառության դեպքերի ընդհանուր տոկոսային ցուցանիշը. երկու դեպքում էլ մոտ 80%:


Սակայն եթե ընդհանուր կարգի պարագայում ազատագրվումը կիրառվում է 73% դեպքերում, ապա արագացված կարգի պարագայում՝ միայն 47%-ում: Դրա փոխարեն արագացված կարգի պարագայում աճում է կալանքի կիրառության համամասնությունը՝ 32%՝ ընդհանուր կարգի 8%-ի դիմաց:

Այսպիսով՝ նշյալ երկու պատժատեսակների միասնական տոկոսային ցուցանիշը մնում է անփոփոխ՝ 80%, սակայն դրա փոխարեն փոփոխվում է ընթացակարգերից յուրաքանչյուրի պարագայում այս կամ այն պատժատեսակի կիրառության համամասնությունը: Արագացված կարգի կիրառության պարագայում էականորեն աճում է *կալանքի* նշանակման հավանականությունն՝ ի հաշիվ *ազատագրվման* նշանակման, որն էապես նվազում է:

Պատկեր 11. Արագացված կարգի կիրառությունն ու դատարանի կողմից նշանակված պատժատեսակը




Պատկեր 12. Դատական քննության ընդհանուր կարգն ու դատարանի կողմից նշանակված պատժատեսակը




Ամբաստանյալին վերագրվող արարքը և ընտրված խափանման միջոցը


Պատկեր 13. 361.1-րդ հոդվածով կիրառված խափանման միջոցները




Պատկեր 14. 359.1-րդ հոդվածով կիրառված խափանման միջոցները



Պատկեր 15. 375.1-րդ հոդվածով կիրառված խափանման միջոցները



Պատկեր 16. 363.1-րդ հոդվածով կիրառված խափանման միջոցները



Վերը բերված բոլոր հոդվածներով ամենատարածված խափանման միջոցն է հանդիսանում հրամանատարության հսկողությանը հանձնելը. 361.1, 363.1 և 359.1-րդ հոդվածներով՝ 82%-ից ավելին: Միայն 375.1-րդ հոդվածով է տվյալ խափանման միջոցի կիրառությունը համեմատաբար նվազ՝ 48%: Այս հոդվածով բավականին տարածված է նաև ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառությունը՝ 44%, մինչդեռ մյուս հոդվածների պարագայում դրա կիրառությունը չի գերազանցում 9%-ը:

Հատկանշական է նաև, որ 375.1-րդ հոդվածով կիրառված խափանման միջոցները համեմատաբար բազմազան են (4 տեսակի խափանման միջոցներ են կիրառվել): Դրան հետևում է 361.1-րդ հոդվածը (3 տեսակ): 359.1 և 363.1-րդ հոդվածներից յուրաքանչյուրի պարագայում կիրառվել են միայն 2 տեսակի խափանման միջոցներ:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը ՀՀ-ում. իրավական վերլուծություն:
ՔՕ 70-րդ հոդվածը նախատեսում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը: Համաձայն սույն հոդվածի՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ *դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու*, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցագործի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Այսպիսով՝ սույն ինստիտուտի կիրառման նպատակով ՔՕ-ը չի նախատեսել ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի սահմանափակումներ: Այս ինստիտուտի կիրառումը ՀՀ-ում խնդրահարույց է, որը պայմանավորված է մի շարք թերություններով:

Հստակ չեն ՀՀ դատարանների կողմից պատժի նշանակման հայեցողական բնույթի լիազորությունների իրականացման սահմանները, ինչպես նաև դատական հայեցողության իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքները:

ՔՕ 70-րդ հոդվածը նախատեսում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը, եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ *դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու*: Այդ դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ: Այսինքն՝ որպես պատժից պայմանական չկիրառման չափանիշ է ընտրված առանց պատիժը կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության *գնահատումը*:

Թեև պատժի նշանակման հարցում դատարանին հայեցողության տալը դիտարկվում է որպես օրինաչափ և լայն տարածում ունեցող պրակտիկա, այդ հայեցողության իրավաչափ իրականացման նպատակով ստեղծվում են երաշխիքներ և հստակեցվում է հայեցողության շրջանակը: ՔՕ-ով ընտրված չափանիշը մի կողմից ձևակերպված է չափազանց անորոշ, մյուս կողմից դրա գնահատումը ու «չափումը»՝ պրակտիկորեն անհնարին: Հետևաբար, պետք է սահմանվեն պատժի չկիրառման ինստիտուտի կամայական կիրառումը բացառող «օբյեկտիվացված» և «չափելի» չափորոշիչներ, ինչպես նաև առանձնացվեն այս ինստիտուտի կիրառման պայմանները:

Թեև ՀՀ վճռաբեկ դատարանը ՔՕ 70-րդ հոդվածի կիրառումն ապահովող որոշակի չափանիշներ է առանձնացրել, սակայն առաջադրված լուծումները համապարփակ և ամբողջական չեն: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը ամբարբել է, որ պատիժը

պայմանականորեն չկիրառելիս դատարանը պարտավոր է ղեկավարվել ՔՕ 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ հաշվի առնելով հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանը հաստատել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցագործի կողմից այդ հանցագործության հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը: Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցագործի անձնավորության մասին և ամեն կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների¹⁰⁷ վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցագործի անձնավորությանը կամ բնութագրում են հանցագործությունն ու հանցագործի անձնավորությունը միաժամանակ: Այդ պատճառով էլ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցագործի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա: Վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ գործում առկա այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են՝ ինքնակամ ներկայանալը, ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, անկեղծ զոջալը, նախկինում դատված չլինելը, դրականորեն բնութագրվելը, տուժողի հետ հաշտվելը, պատճառված նյութական վնասը փոխհատուցելը և նույնիսկ տուժողի խնդրանքը՝ ամբաստանյալին ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելու մասին, չեն վկայում հանցագործի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության բացակայության մասին: Դրանք, ըստ էության, չեն նվազեցնում արարքի հանրային վտանգավորության աստիճանը և դրանց հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք չեն:

Դիտարկումների արդյունքները, սակայն, փաստում են, որ վերոնշյալ հանգամանքներն են հենց հաշվի առնվում դատարանների կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ արձանագրվել են դեպքեր, երբ նույն հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանի կողմից մի դեպքում պատիժը պայմանակորեն չի կիրառվել, մյուս դեպքում՝ պատիժը կիրառվել է:

Օրինակ N 35

Նույն դատավորի կողմից քննված երկու գործերով, որոնցում ամբաստանյալներին վերագրվել է ՔՕ-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը և երկու դեպքում էլ դատական քննությունն անցկացվել է արագացված կարգով, ամբաստանյալները հանդիսացել են ժամկետային պարտադիր զինծառայողներ, խախտել են ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները (այն է՝ «Զինծառայողը պարտավոր է բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, հարգել ընկերոջ պատիվն ու արժանապատվությունը, ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն»), ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում հարվածել են ծառայակցին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Երկու դեպքում էլ դատարանի կողմից հաշվի են առնվել արարքի՝

¹⁰⁷ ՀՀ ՔՕ, հոդվածներ 62 և 63:

հանրության համար վտանգավորությունը, աստիճանը և բնույթը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Երկու դեպքում էլ դատարանը ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել: Իսկ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտվել այն, որ ամբաստանյալները երիտասարդ են, նախկինում արատավորված չեն եղել, բնութագրվում են դրականորեն, զղջացել են կատարվածի համար և ընդունել են մեղքը:

Մի դեպքում՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է պատիժ կարգապահական գումարտակում պահելու ձևով երեք ամիս ժամկետով, մյուս դեպքում՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով մեկ տարի ժամկետով: Չնայած այն հանգամանքին, որ երկու դեպքում էլ պաշտպանները խնդրել էին նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, պատիժը պայմանականորեն չի կիրառվել միայն երկրորդ դեպքում:

Այսպիսով՝ անհասկանելի է մնում, թե ինչպիսի չափանիշներով է առաջնորդվել դատարանը վերոգրյալ գործերում պատիժ նշանակելիս (**գործեր N 161 և 17**):

Նմանատիպ պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժները պայմանականորեն չկիրառելու դեպքերը ՀՀ դատական պրակտիկայում կրում են կամայական բնույթ:

Պատժի կրումից պայմանականորեն ազատված դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնախնդիրները: Չնայած այն հանգամանքին, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում դատապարտված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը օրենսդրական կարգավորում է ստացել, այդուամենայնիվ, այն նույնպես կրում է մի շարք բացեր: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի N 1561 ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին որոշման համաձայն՝ պատժի կրումից պայմանականորեն ազատված անձանց նկատմամբ հսկողությունն իրականացվում է ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատժատեսակների կատարման բաժանմունքը, որը գտնվում է կոնկրետ դատապարտյալի բնակության վայրում: Դատավճիռը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, տվյալ դատապարտյալի մասին կազմվում է անձնական գործ, որտեղ ներկայացվում են տեղեկություններ անձի, բնակության և աշխատանքի վայրի, ինչպես նաև պատժի կատարման համար նշանակություն ունեցող այլ տվյալներ: Այլընտրանքային պատիժների կատարման բաժնում անձին հաշվառման վերցնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հաղորդում են ուղարկում ոստիկանություն: Դատապարտյալի՝ այլընտրանքային պատժատեսակների կատարման բաժանմունք (այսուհետ՝ Բաժանմունք) ներկայանալու դեպքում նրա անունով լրացվում է հաշվառման քարտ, պարզաբանվում նրա իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև հաշվառման ներկայանալու օրվանից առնվազն ամիսը մեկ անգամ Բաժանմունք ներկայանալու պարտականության մասին, ինչի մասին դատապարտյալից վերցվում է ստորագրություն (կետ 50): Յոթօրյա ժամկետում Բաժանմունք չներկայանալու դեպքում դատապարտյալին ուղարկվում է համապատասխան ծանուցագիր՝ Բաժանմունք ներկայանալու մասին:

Այսպես, վերոգրյալ դրույթների վերլուծությունից ակնհայտ է, որ, որպես այդպիսին, պատժի կրումից պայմանականորեն ազատված դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն չի իրականացվում: Ամսական առնվազն մեկ անգամ Բաժանմունք այցելելու

պարտականությունը զուտ որոշակիորեն սահմանափակում է անձի ազատորեն տեղաշարժվելու իրավունքը, սակայն չի կարող անձի ուղղման երաշխիք հանդիսանալ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային փաստաթղթերում ներկայացված պահանջները: Մասնավորապես, պայմանականորեն դատապարտված կամ պատժից պայմանականորեն վաղաժամկետ ազատված դատապարտյալների նկատմամբ հսկողության վերաբերյալ եվրոպական կոնվենցիան (1964թ.) նախատեսում է հետևյալ նվազագույն պահանջները, որոնք կարող են դրվել դատապարտյալի վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում.

ա. համապատասխան պետական մարմիններին հաղորդել բնակության կամ աշխատավայրի ցանկացած փոփոխության մասին,

բ. զերծ մնալ որոշակի վայրեր կամ տարածքներ մուտք գործելուց,

գ. չլքել պետության տարածքը,

դ. հետևել նախատեսված ապրելակերպի, կեցության և կրթության պահանջներին,

ե. սահմանված ժամկետում ներկայանալ համապատասխան պետական մարմիններին,

զ. խուսափել որոշակի անձանց հետ շփումներից,

է. փոխհատուցել հանցագործությամբ պատճառված վնասը,

ը. իրականացնել հանրային աշխատանքներ,

թ. համագործակցել համապատասխան սոցիալական ծառայողի հետ,

ժ. անցնել որոշակի հիվանդություններից բուժման կուրսեր:

Վերոգրյալ պարտականությունների ցանկը սպառիչ չէ և անդամ պետությունների դատարանների կողմից կարող են նախատեսվել դատապարտյալի ուղղմանն ու հանցագործությունների հետագա կանխմանն ուղղված այլ միջոցառումներ: Մեծ ուշադրություն է հատկացվում հատկապես հասարակական աշխատանքներին դատապարտյալի ներգրավվածությանը¹⁰⁸:

Զինծառայողների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս հսկողություն իրականացնում են զորամասերը, ռազմատուսումնական հաստատությունները, զինված ուժերի կամ այլ զորքերի զինվորական կառավարման մարմինների վարչությունները, առանձին բաժինները և ծառայությունները, ՀՀ զինկոմիսարիատը: ՀՀ ՊՆ ՌՌ-ն զինծառայողների նկատմամբ հսկողություն է իրականացնում օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Զինծառայողների նկատմամբ վերահսկողության պարտականությունը դրվում է համապատասխան մարմինների հրամանատարների, պետերի վրա: Նրանք պարտավոր են իրականացնել զինծառայողի անձնական հաշվառում, վերահսկողություն իրականացնել զինծառայողի վարքի, վերջինիս կողմից հասարակական կարգի, զինվորական կանոնադրքերով սահմանված ծառայողական հարաբերությունների կանոնների պահպանման և դատարանի կողմից նրանց վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ, համագործակցել համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ՝ զինծառայողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործընթացն առավել արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար: Զինծառայողների նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք ունեն նույն պարտականությունները, ինչ Բաժանմունքի աշխատակիցները:

Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ դատարանների կողմից զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում առավել հաճախ, երբ դատապարտյալը հանդիսանում է զինծառայող: Սա թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ զինծառայողների, հատկապես ժամկետային զինծառայողների վարքագծի


¹⁰⁸ Recommendation CM/Rec (2010) 1 CM of CoE.

նկատմամբ վերահսկողություն իրականացնելն առավել դյուրին է՝ հաշվի առնելով վերջիններիս ծառայության բնույթը և պետության իշխանության տակ գտնվելու փաստը: Այնուամենայնիվ, պրակտիկան ցույց է տալիս, որ նման հսկողությունը շատ դեպքերում անարդյունավետ է, քանի որ փոքր չէ պատժից պայմանականորեն ազատված անձանց կողմից կրկնահանցագործությունների թիվը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է հանգել հետևության, որ չնայած այն հանգամանքին, որ պատժից պայմանականորեն ազատելը ունի իրավական կարգավորում, այդ կարգավորումը որոշակի և բավարար չէ, իսկ պրակտիկայում բացակայում են դատական որոշումների միասնականությունը՝ հանգեցնելով տվյալ դրույթի կամայական կիրառման: Մյուս կողմից, պատժից պայմանականորեն ազատված անձի վարքագծի նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոցների բացակայության պայմաններում հնարավոր չէ հանցագործություն կատարած անձի ուղղումը և վերջինիս կողմից նոր հանցագործությունների կատարման բացառումը: Այս ինստիտուտի կիրառման ներկայիս պրակտիկան ամբողջովին անտեսում է սոցիալական արդարության վերականգնումը՝ որպես պատժի նպատակ:

Օրինաչափություն է առկա կիրառված խափանման միջոցի և դատավճռով սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերի միջև (տե՛ս պատկեր 17):

Պատկեր 17. Կիրառված խափանման միջոցը և դատավճռով սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելը



Բերված պատկերից ակնհայտ է դառնում, որ առավել հաճախ պատիժը պայմանականորեն չի կիրառվում այն դեպքերում, երբ որպես խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողությանը հանձնելն ու ստորագրությունը չհեռանալու մասին (38% և 39%), մինչդեռ կալանավորման պարագայում պատիժը պայմանականորեն չի կիրառվել միայն ամբաստանյալների 16%-ի նկատմամբ:

Այսպիսով՝ հաշվի առնելով նաև նախորդ պատկերներում արտացոլված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառության պարագայում և՛ վերջնական պատիժն է առավել խիստ (ազատագրվում 76% դեպքերում), և՛ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերն են սակավաթիվ (16%):

Ամբաստանյալին վերագրվող արարքի որակումն ու պատիժը պայմանականորեն չկիրառելը:

Որոշ օրինաչափություններ են նկատվում ամբաստանյալներին վերագրվող արարքի որակումների և դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու միջև:

Այսպես, առավել տարածված արարքներից 361.1 և 359.1-րդ հոդվածներով դատապարտված անձանց շրջանում պատիժը պայմանականորեն չի կիրառվում յուրաքանչյուր 7-րդ ամբաստանյալի նկատմամբ:

Որոշ արարքների պարագայում պատիժը պայմանականորեն չկիրառելու ցուցանիշը հավասար է գրոյի: Դրանցից են, օրինակ, դատարանի կողմից նշանակված պատիժները 363.1-րդ հոդվածով՝ «Իրեն որևէ վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով զինձառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելը: Կարելի է եզրակացնել, որ որոշ հանցատեսակների և արարքների պարագայում գործում է պատժի միասնական քաղաքականություն, այն է՝ անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերում պատիժը կիրառվում է:

Որոշ արարքների պարագայում գործում է հակառակ օրինաչափությունը. 50%-ից ավելի դեպքերում պատիժը պայմանականորեն չի կիրառվում: Այսպես, 359.2.2-րդ հոդվածով (*մի խումբ անձանց կողմից զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով*) կամ, օրինակ, 375.1-րդ հոդվածով (*պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով և եթե դրանք էական վնաս են պատճառել*) սահմանված պատիժների դեպքում 50%-ից ավելի դեպքերում պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Քանի որ վերը նշված արարքներն ամենատարածվածն են և դրանց վերաբերյալ առկա են բավարար քանակությամբ վիճակագրական տվյալներ, ուստի կարելի է պնդել այս արարքների նկատմամբ պատժի քաղաքականության որոշակի օրինաչափությունների առկայության մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ կախված ընթացակարգի տեսակից: Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը մեծամասամբ արձանագրվել են արագացված կարգով դատաքննությամբ քննված գործերով: Նման պայմաններում, երբ դատարանի կողմից դռնբաց դատական նիստի ընթացքում քննության չեն առնվում գործի փաստական հանգամանքները և ապացույցները, ուսումնասիրվում են միայն ամբաստանյալի անձը բնութագրող հատկանիշները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները. կատարված արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը մնում է չպարզված: Հաճախ սա խոսում է մեղադրողի և ամբաստանյալի միջև որոշակի

գործարքի առկայության մասին, ինչը երկուստեք ձեռնտու է հատկապես այն դեպքերում, երբ ամբաստանյալի մեղքը ամբողջովին հիմնավորված չէ ձեռք բերված ապացույցներով, իսկ ամբաստանյալը ձգտում է խուսափել ավելորդ քաջքունկներից և ազատվել պատժի կրումից:


Նման դեպքում դատարանը դատավճիռ է կայացնում առանց հանցագործության մեջ մեղադրվող անձի ներկայացրած կամ սեփական հայեցողությամբ ձեռք բերված լրացուցիչ ապացույցների, փաստարկների, ամբաստանյալի հոգեկան վիճակի և առողջության ուսումնասիրման: Արագացված դատաքննության պայմաններում դատարանը, ընդունելով հանցագործության մեջ անձի մեղավորությունը, չի ուսումնասիրում պատժի նշանակմանը վերաբերող ապացույցները:

Պատժի կրումից ազատվածների նկատմամբ վերահսկողության բացակայության պայմաններում ինստիտուտը չի կարող արդյունավետորեն գործել՝ ապահովվելով հասարակության անվտանգությունը:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ քանակական տվյալներ

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 30% դեպքերում՝ 290 ամբաստանյալներից 87-ի նկատմամբ:

Պատկեր 18. Պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ կախված զինվորական կոչումից



Ամբաստանյալների զինվորական կոչումներից կախված նկատելի օրինաչափություններից մեկն այն էր, որ, օրինակ, ՔՕ 375-րդ (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) հոդվածով մեղադրվող սպաներից առավել բարձր կոչում ունեցողների, տվյալ դեպքում՝ մայորների (5 ամբաստանյալներից 3-ը) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել առավել հաճախ (տոկոսային հարաբերակցությամբ), քան լեյտենանտի և ավագ լեյտենանտի կոչումով սպաների նկատմամբ:

Զինճառայողների նկատմամբ կարգապահական գումարտակում պահելու պատժի հիմնահարցերը

ՔՕ 58-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած ժամկետային ծառայության զինճառայողների նկատմամբ կարգապահական գումարտակում պահելը երեք ամսից երեք տարի ժամկետով կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և դատապարտյալի անձնավորությունը, նպատակահարմար կգտնի առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկման փոխարեն կիրառել կարգապահական գումարտակում պահելը՝ նույն ժամկետով:

Սույն հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ կարգապահական գումարտակում պահելը կարող է նշանակվել.

1. ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կատարման դեպքում,
2. երեք ամսից մինչև երեք տարի ժամկետով,
3. գործի հանգամանքների և դատապարտյալի անձը հաշվի առնելով մինչև երեք տարի ժամկետով ազատազրկման փոխարեն՝ նույն ժամկետով,
4. ժամկետային ծառայության զինճառայողների նկատմամբ:

Օրենքի նման կարգավորումը ենթադրվում է, որ կարգապահական գումարտակում պատիժ կարող են կրել բոլոր ժամկետային զինճառայողներն՝ անկախ զինվորական կոչումից և պաշտոնից¹⁰⁹: Նման ձևակերպումից հետևում է, որ սպայական կազմի զինճառայողները նույնպես ենթակա են կարգապահական գումարտակում պատիժը կրելու: Միաժամանակ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 49-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալը, անկախ զինվորական կոչումից և նախկինում զբաղեցրած պաշտոնից, պատիժը կրելու ընթացքում գտնվում է շարքային կազմի զինճառայողի կարգավիճակում...:

Այդուամենայնիվ, ինչպես ՀՀ ներպետական դատական պրակտիկան, այնպես էլ միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրականում կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը նշանակվում է հենց շարքային կազմի զինճառայողների նկատմամբ: Եվ նման պրակտիկան թվում է ողջամիտ, քանի որ անիրատեսական է սպայական կազմի ժամկետային զինճառայողների՝ պատժի կրման ընթացքում շարքային կազմի կարգավիճակում գտնվելն ապահովելու հնարավորությունը:

Սույն պայմաններում անհրաժեշտ է ՀՀ ՔՕ-ի 58-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ հստակեցնելով կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի ենթակա անձանց սուբյեկտային կազմը:

Օրինակ, ՌԴ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակում պահելը նշանակվում է զինվորական ծառայության զորակոչված զինճառայողների նկատմամբ, ինչպես նաև պայմանագրային զինվորական ծառայություն անցնող շարքային և սերժանտական կազմի զինճառայողների նկատմամբ, եթե դատարանի կողմից դատավճռի կայացման պահին չի լրացել վերջինների զինվորական ծառայության

¹⁰⁹ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ժամկետային զինվորական ծառայությունը ներառում է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունը: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված շարքային ու սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը: Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում կամավոր հիմունքներով զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած) և կանանց զինվորական ծառայությունը:

Ժամկետը: Օրենսդրական նման կարգավորումն առավել հստակ է և տարակարծությունների և թյուր մեկնաբանությունների տեղիք չի տալիս:

Կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժն իրականացնելու կապակցությամբ բարձրացող հաջորդ խնդիրը դրանց ենթակայության հարցն է: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակում պահելու կատարումն ապահովում է պաշտպանության բնագավառի կառավարման լիազորված մարմնի համակարգում ստեղծված կարգապահական գումարտակը: Նման կարգավորման պայմաններում մեկ մարմնի համակարգում են կենտրոնացված ինչպես տեղի ունեցած հանցագործության կապակցությամբ գործը քննող մարմինները, այնպես էլ պատիժը կատարող մարմինները: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտը զինվորական ծառայության իրականացման ընթացքում առաջացող հասարակական հարաբերություններն են, որտեղ պաշտպանության բնագավառի կառավարման լիազորված մարմինը հանդիսանում է կողմ, ստեղծվում է պատժի կատարման ընթացքում կամայանությունների և ապօրինությունների դրսևորման ռիսկեր, որոնց կանխարգելման գործուն մեխանիզմներ առկա չեն:

Փորձագիտական հարցազրույցների արդյունքում վերհանված հիմնախնդիրները

Ինքնագրաքննության հիմնախնդիրը դատարանների, դատախազության և քննչական մարմինների աշխատանքում

Դատարանի անկախության և անկողմնակալության հետ կապված խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դատարանի՝ ինքնագրաքննություն իրականացնելու միտումը: Խնդիրը հնարավոր է դիտարկել իր երկու հիմնական դրսևորումներով: Մի կողմից՝ դատարանն իր գործողություններում և վճիռներում հակված է ինքնագրաքննության՝ կանխելու համար այլ կառույցների, անձանց կողմից հավանական ճնշումն ու ազդեցությունը (հավանական ճնշման վերաբերյալ ենթադրություններն իրենց հերթին հիմնվում են դատարանի անցյալ փորձի վրա), մյուս կողմից՝ ինքնագրաքննությունը տեղ ունի հատկապես դատարանի՝ պատիժ նշանակելու գործընթացում: Մասնավորապես, ինչպես նշել է հարցվող պաշտպաններից մեկը. «Դատավորն ասում է, եթե դատախազը 10 տարի է ուզում, ես էլ 7 տամ, կասեն փող է վերցրել: Ասում է՝ գոնե 8 տարի տամ կամ 9 տամ»:

Պահանջվածից առավել մեղմ պատժի նշանակման դեպքում առկա է մտավախություն՝ մեղադրվելու կոռուպցիոն վարքի ցուցաբերման մեջ: Ինչպես նշեց դատավորներից մեկը. «... Ամեն մեկը, փորձելով իրենից հեռացնել կոռուպցիոն ռիսկի գործոնը, վարվում է ավելի խիստ, քան կվարվեր, եթե եղպիսի մտածելակերպ չլիներ: Ոչ թե կոռուպացված են, դրա համար, այլ՝ տարբեր կասկածներից խուսափելու համար»:

Որպես հետևանք՝ ոտնահարվում են ամբաստանյալների շահերը, իսկ պատժի քաղաքականությունը չհիմնավորված խիստ բնույթ է ստանում:

Ինքնագրաքննության միտումը տեղ ունի նաև դատախազության և քննչական կառույցների աշխատանքում. «Այսօր բոլորի մոտ կաշկանդվածություն կա: Քննիչների, դատախազների, դատավորների մոտ: Յուրաքանչյուրը մտածում է՝ եթե տվյալ մարդու նկատմամբ մեղմ վերաբերվեմ, ինձնից վերադասը կմտածի՝ փող եմ աշխատել, փող եմ վերցրել»:

Դատախազն ասում է՝ եթե ես գործը ես հիմա կարճեմ, իմ վերադասը կասի՝ եղ ոնց եղավ, ուրեմն փող աշխատեց»:

Նույն պատճառով հազվադեպ են դատարանում արարքի վերաորակավորման կամ դատարանին նախապես առաջարկված պատժատեսակից և/կամ պատժաչափից առավել մեղմ պատժ պահանջելու դեպքերը:

Մեղադրյալի իրավունքների պաշտպանվածությունը մինչդատական վարույթի ընթացքում

Մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը հույժ կարևոր է արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրականացման համար: Ավելին, մինչդատական վարույթում տեղ գտած խախտումներն ուղղակիորեն անդրադառնում են դատական քննության ընթացքում պաշտպանության իրավունքի որակի և հնարավորությունների վրա: Այս տեսանկյունից, առավել կարևոր երաշխիք է մինչդատական վարույթի ամենավաղ փուլերում պաշտպան ունենալու իրավունքի հարգումը: Մյուս կողմից, պետք է երաշխավորվի ապացույցների ձեռք բերման օրինականությունը, բացառվեն ճնշումները վկաների նկատմամբ: Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքն անթույլատրելի է համարում հարցաքննության որոշակի տեխնիկայի կիրառումը:

Հարցազրույցների արդյունքում ի հայտ են բերվել մինչդատական փուլում տեղ գտած հետևյալ հիմնական խախտումները (քանի որ հարցազրույցները հիմնախնդիրների վերաբերյալ փորձագիտական կարծիքների վերհանման նպատակ ունեն, խախտումների տարածվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն ստացվել)։

✓ Իշխանագանցության, իշխանության չարաշահման արարքներ պարունակող զինվորական քրեական գործերը կամ չեն հարուցվում կամ հաճախ, որպես կանոն, առավել բարձր զինվորական կոչում և/կամ պաշտոն ունեցող մեղադրյալների պարագայում, կարճվում են մինչդատական վարույթի ընթացքում։

✓ Առկա են նաև հարուցված քրեական գործերը կարճելու խոչընդոտներ։ Արդեն իսկ հարուցված քրեական գործի կարճումը պրակտիկորեն անհնար է և խիստ հազվադեպ է հանդիպում. մեղադրանք առաջադրելուց հետո, ենթադրվում է, որ այդ գործով արդեն դատական ակտ պիտի կայացվի։ Փորձագետ դատախազներից մեկը կարծիք է հայտնել, որ արդարացման դատավճռի դեպքում իրենք պարտավոր են վերադասին բացատրություն ներկայացնել դրա պատճառների մասին։ Իսկ նման իրավիճակում հայտնվելը տհաճ է և կարող է ազդել հետագա կարիերայի վրա։ Ընդ որում, վերհանված հիմնախնդիրը հաստատվում է նաև դատական դեպարտամենտից ստացված վիճակագրական տվյալներով (տե՛ս աղյուսակ 1)։

✓ Ջինձառայողները հաճախ հարցաքննվում են վկայի կարագավիճակով, քանի որ այդ պարագայում պաշտպանի ներգրավվածությունը պարտադիր չէ։ Մա, ըստ պաշտպանների, արվում է միտումնավոր՝ ցանկալի ցուցմունքների ստացման նպատակով։ Այնուհետև զինձառայողի կարգավիճակը փոխվում է՝ նա դառնում է մեղադրյալ, իսկ վկայի կարգավիճակում տրված ցուցմունքները դրվում են մեղադրանքի հիմքում։

✓ Չնայած անձը փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իրավունք ունի և դա նույնպես իրավաբանական օգնության տեսակ է, սակայն դիտարկված գործերից և ոչ մեկում չեն գրանցվել դեպքեր, երբ զինձառայող վկան փաստաբանի ներկայությամբ է հարցաքննվել։ Փաստաբանների հետ անցկացված հարցումների ընթացքում վերջիններս ևս չկարողացան մատնանշել մի դեպք, երբ զինձառայող վկան հարցաքննված լինել փաստաբանի մասնակցությամբ։ Այս խնդրի հիմնական պատճառներից մեկը վկաների անտեղյակությունն է իրենց իրավունքներից։

✓ Երբեմն չի ապահովվում մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը։ Թեև պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, հաճախ վարույթ իրականացնող մարմինները չեն պարզաբանում պաշտպանի պարտադիր մասնակցության իրավունքը, անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, չեն ներգրավում պաշտպանների կամ պաշտպանը ներգրավվում է չափազանց ուշ, երբ մեղադրյալից արդեն իսկ ինքնախոստովանական բնույթի ցուցմունքներ կամ բացատրություններ են կորզվել։

✓ Չեն բացատրում մեղադրյալի տարբեր իրավունքները։

✓ Հանդիպում են մեղադրանքի առաջադրման և անձին ձերբակալված պահելու ժամկետների խախտումներ։ Որոշ դեպքերում կեղծվում են ամսաթվերը՝ իրականացված գործողությունները սահմանված ընթացակարգերին համապատասխանեցնելու համար։

✓ Ջինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով տարածված են նախաքննության փուլում պաշտպանից հրաժարվելու դեպքերը։ ՀՀ քր. դատ. օրենսգրքի 69-րդ հոդվածում նշված է ժամկետային զինձառայողի՝ պարտադիր պաշտպան ունենալու սկզբունքի մասին։ Պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ զինձառայողը հրաժարվել է պաշտպան ունենալուց և ստորագրությամբ հաստատել է իր հրաժարումը, առկա է նաև պաշտպանի ստորագրությունը, որով վերջինս հաստատում է, որ հրաժարումը տեղի է ունեցել իր ներկայությամբ, դրված է նրա արտոնագիրը, մինչդեռ պարզվում է, որ մեղադրյալը երբևէ չի տեսել պաշտպանին։

✓ Խնդրահարույց է նաև պաշտպանից հրաժարումը այն պարագայում, երբ պաշտպանի կողմից մատուցվող ծառայությունների հասանելիությունը էական սահմանափակումների հետ է կապված: Օրինակ՝ եթե հանցագործությունը կատարվել է որևէ հեռավոր գորամասում, ապա պաշտպանի ներկայությունը ապահովելը (թեկուզև նրա համար, որպեսզի մեղադրյալը կարողանա հրաժարվել վերջինիս ծառայություններից) էական հիմնախնդիրների հետ է կապված: Ըստ հարցված դատավորների և պաշտպանների՝ նշված սահմանափակումների պատճառով քննիչները հաճախ կեղծիքների են դիմում: Մասնավորապես, մեղադրյալը, առանց տեսնելու տվյալ պաշտպանին, գրում է, թե իբր պաշտպանի ներկայությամբ հրաժարվում է պաշտպան ունենալու իրավունքից: Այնուհետև քննիչը գործի նյութերին կցում է տվյալ պաշտպանի արտոնագիրը, պաշտպանն էլ ստորագրում է հրաժարման տեքստի ներքո՝ առանց մեղադրյալին տեսնելու:

Մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառները, ըստ հարցվողների, հետևյալներն են.

– Երբեմն գորամասի հրամանատարությունն է համոզում մեղադրյալին հրաժարվելու պաշտպանից՝ մտավախություն ունենալով, որ պաշտպանի մասնակցությունը գորամասի հետ կապված մի շարք այլ խնդիրներ կբացահայտի կամ առկա այլ հիմնախնդիրները կհանրայնացվեն:

– Հրաժարվելու մյուս պատճառը հանրային պաշտպանի նկատմամբ ունեցած անվստահությունն է, անվճար ծառայության որակի հետ կապված մտավախությունները:

– Մի շարք դեպքերում քննիչներն են հորդորում մեղադրյալին հրաժարվել պաշտպանից՝ ասելով, որ այդպես ավելի արագ կավարտեն գործի քննությունը և այն առավել բարենպաստ էլք կունենա մեղադրյալի համար:

Ճնշումներից և ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքի խախտումները

Ըստ փորձագետների՝ հաճախ կալանավորումը ընտրվում է որպես խափանման միջոց ամբաստանյալներին ճնշելու, վերջիններից խոստովանական ցուցմունք ստանալու նպատակով: Լայնորեն տարածում ունի նաև զինծառայողի նկատմամբ մինչդատական փուլում ամենախիստ խափանման միջոցի՝ կալանավորման ընտրությունն ու կիրառությունը: Դատարանները հակված են բավարարել դատախազության կողմից կալանքի կիրառության վերաբերյալ ներկայացված միջնորդությունները՝ զգուշանալով կասկած հարուցել իրենց կողմից կոռուպցիոն վարքագծի դրսևորման հանդեպ: Բացի այդ, դատավորների մեծ մասն ունեն նախատրամադրվածություն և հակված են մեղադրյալին դիտելու որպես հանցագործի: Տարածված պրակտիկա է դարձել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը՝ նպատակ ունենալով ճնշման գործադրմամբ ամբաստանյալներից ինքնախոստովանական ցուցմունքներ ստանալ:

Հատկանշականն այն է, որ հարցված գրեթե բոլոր փորձագետները պնդում են, որ նախաքննության ընթացքում գործերի մեծամասնությունում (մոտ 90 տոկոս դեպքերում) որպես խափանման միջոց է ընտրվում կալանավորումը: Դա կատարվում է հիմնականում առանց պատշաճ հիմնավորումների: Համաձայն փաստաբան փորձագետի կարծիքի՝ կալանավորումն ինքնին մեծ հոգեբանական հարված է: Այն հանգամանքը, որ միևնույն խցում այդքան շատ մարդիկ են պահվում, ինքնին ճնշող երևույթ է: Շատ դեպքերում հենց այդ հանգամանքն է ստիպում ընդունել մեղքը, միջնորդել արագացված կարգ կիրառելու մասին և շուտ ազատվել պատժից:

Քննության վաղ փուլերում, անգամ մինչև քրեական գործի հարուցումը ապագա վկաները, «մեղադրյալները» առանց դատական սանկցիաների պահվում են անազատության մեջ: Նման դեպքերի բացահայտման պարագայում «արդարացումներ» են ներկայացվել, որ վերջիններս ազատությունից չեն զրկվել քրեադատավարական օրենսդրության հիման վրա, այլ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության մեկուսացման ձևով: Այսինքն՝ ստացվում է, որ հետաքրքիր գուգադիպությամբ քրեական գործով ներգրավված կամ ներգրավվող վկաներն ու մեղադրյալները քննության ընթացքում հաճախ են կատարում իրավախախտումներ և տուժի ենթարկվում հենց մեկուսացման ձևով:

Դատավորների, դատախազների և փաստաբանների հետ անցկացված հարցազրույցների ընթացքում դիտորդները փորձել են վեր հանել մինչդատական փուլում կալանքի՝ որպես խափանման միջոցի, առավել հաճախակի կիրառության պատճառները:

Ըստ փորձագետների զգալի մասի՝ դատարանները հակված են բավարարելու դատախազության կողմից կալանքի կիրառության վերաբերյալ ներկայացված միջնորդությունները՝ զգուշանալով կասկած հարուցել իրենց կողմից կոռուպցիոն վարքագծի դրսևորման հանդեպ: Փաստորեն, կալանքի միջնորդությունները քննարկելիս ևս առկա է դատարանի ինքնագրաքննության միտումը (առավել մանրամասն տե՛ս «Ինքնագրաքննության հիմնախնդիրը դատարանների, դատախազության և քննչական մարմինների աշխատանքում» հատվածում):

Վերոնշյալ պատճառներով նաև վարույթն իրականացնող մարմինները հակված են խափանման առավել խիստ միջոցների, որպես կանոն՝ կալանքի ընտրության: Կալանավորման կիրառման տարածվածության նշված պատճառներից մյուսն այն է, որ դատավորներն ունեն նախատրամադրվածություն, այսինքն՝ հակված են մեղադրյալին դիտելու որպես հանցագործի: Այս միտումն ամրապնդվում է նաև դատավորների մեծ մասի նախկին աշխատանքային փորձառությամբ (որպես քննիչ կամ դատախազ):

Անդրադառնալով վկաների նկատմամբ ճնշումների գործադրման հարցին՝ փորձագետներից մեկը նշեց, որ վկայի կարգավիճակում հայտնվելն արդեն իսկ ճնշող է և լուրջ հոգեբանական ցնցում է անձի համար, առավել ևս, երբ ցուցմունք պետք է տրվի հասարակության առջև՝ դատարանում և որոշակի արժեհամակարգ ունեցող համակարգի ներսում կատարված հանցագործությունների վերաբերյալ: Նման պայմաններում նույնիսկ մի խոժոռ հայացք, բղավոց, սպառնալիք արդեն իսկ հոգեբանական ճնշում է հանդիսանում հատկապես ժամկետային զինձառայողների համար, ովքեր շատ դեպքերում գորամասում հաշվետու պետք է լինեն իրենց խոսքերի համար՝ ասված քրեական գործի շրջանակներում:

Զինձառայության մեջ գտնվող վկաների վրա ճնշումները գործադրվում են հիմնականում համաձառայողների կողմից՝ բանակային կյանքի ոչ ֆորմալ նորմերին հղում անելու միջոցով: Այսպես, բացատրություն կամ ցուցմունք տվող այն վկաները, որոնց ցուցմունքներով հիմնավորվում են դեպքի իրական հանգամանքները, հետագայում գորամասում տարատեսակ պիտակավորումների են արժանանում. «թերացել ես... քո տղայական հատկությունները կորցրել ես... մեզ քաշել ես... գործ ես տվել...»:

Միաժամանակ, դատախազ փորձագետներից մեկն էլ հայտնեց, որ շատ հաճախ ստիպված են լինում ազդել վկաների բարոյական զգացմունքների վրա, որպեսզի վերջիններս ցուցմունք տան՝ վկայակոչելով ամբաստանյալի արարքի ամոթալիությունը:

Պաշտպանների կարծիքով առավել հաճախ վարույթն իրականացնող մարմնի կողմից տեղի են ունենում խախտումներ, որոնք պայմանավորված չեն ֆիզիկական բռնության հետ: Վարույթի սկզբնական շրջանում զինձառայողներին հարցաքննում են որպես վկա՝ առանց պաշտպանի մասնակցության, հետագայում որպես վկա տրված ցուցմունքները դրվում են մեղադրանքի հիմքում, և դրանք փոխելը, հերքելը կամ անթույլատրելի ճանաչելը դառնում է դժվար: Առավել

ևս այն դեպքերում, երբ ամբաստանյալը զինծառայության մեջ է գտնվում, իր կարգավիճակից ելնելով ավելի խոցելի է լինում և նույնիսկ բանավոր ճնշումն իսկ բավարար է ցուցմունքներ, նույնիսկ՝ ինքնախոստովանական, ստանալու համար:

Ըստ որոշ փորձագետների՝ եթե նույնիսկ կոչումով շարքային զինծառայողների վրա ուղղակի ճնշումներ չգործադրվեն, վերջիններս, ելնելով իրենց կարգավիճակից և միջավայրային առանձնահատկություններից (զինծառայության), կտան այնպիսի ցուցմունքներ, որպեսզի առավել չբարդացնեն, օրինակ, ամբաստանյալ սպայի վիճակը:

Փորձագետներից մեկի կարծիքով քննիչները, դատախազները և նույնիսկ դատարանը ամբաստանյալի կողմից ցուցմունք չտալը դիտում են որպես քրեական պատասխանատվությունից խուսափելու միտում: Եթե ցուցմունք չես տալիս, ուրեմն խոչընդոտում ես քննությանը: Նման պրակտիկայի վառ ապացույց է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված թիվ ԵԿԴ 0580/06/09 գործով որոշումը, որի շրջանակներում բողոքարկվել էր դատարանի որոշումը ընտրված խափանման միջոց կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: Ի հիմնավորումն իր որոշման՝ առաջին աստիճանի դատարանը նշել էր, որ «Ա. Առաքելյանը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, մեղադրվում է ծանր հանցագործության համար, որի համար նախատեսվում է 5-10 տարի ազատազրկում և նրան մեղսագրվող հանցագործության ծանրությունը կարող է բավարար լինել նրան ազատությունից զրկելու համար»: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել էր մեղադրյալի լռություն պահպանելու իրավունքի խախտումը:

Թեև մեղադրյալը ցուցմունք չտալու իրավունք ունի, սակայն բազմաթիվ քննիչների ու դատախազների կողմից այն գնահատվում է որպես քրեական պատասխանատվությունից խուսափելու, գործի քննությանը խոչընդոտելու ձգտում: Այս ենթադրությանն էլ համապատասխան՝ վերջինիս նկատմամբ որոշակի դիրքորոշում և վերաբերմունք է որդեգրվում: Հարցազրույցներին մասնակցած փորձագետները մատնանշել են ամբաստանյալի կողմից նախաքննական ցուցմունքի փոփոխության տարբեր պատճառներ.

1) Ամբաստանյալների կողմից որպես նախաքննական ցուցմունքի փոփոխության հիմնական պատճառ է նշվում այդ փուլում բռնությունների և տարատեսակ ճնշումների կիրառությունը:

2) Նախաքննական ցուցմունքի փոփոխության մյուս տարածված պատճառը, ըստ պաշտպանների և դատախազների, մեղադրյալի՝ կալանքի տակ գտնվելու պարագայում այլ կալանավորների ազդեցությունն է: Քրեական առավել հարուստ փորձառություն ունեցող անձինք բացատրում են մեղադրյալներին, թե նրանց ինչպիսի պատիժներ/պատժատեսակներ են սպառնում համապատասխան ցուցմունքների դեպքում և խորհուրդ են տալիս հրաժարվել նախաքննական որոշ ցուցմունքներից:

3) Առկա է նաև ամբաստանյալների՝ դատարանի դահլիճում միմյանց վրա ազդելու հնարավորություն: Անգամ կարճատև խորհրդակցության հնարավորությունը բավարար է, ըստ փորձագետների, որպեսզի ամբաստանյալները համաձայնեցնեն իրենց՝ դատարանի դահլիճում տրվելիք ցուցմունքները և ըստ այդմ հրաժարվեն նախաքննական ցուցմունքներից:

Քննչական մարմինների գործունեության հետ կապված հիմնախնդիրներ

Ըստ փորձագետների գերակշիռ մասի կարծիքի՝ քննիչների զգալի մասը աշխատանքային փորձ չունեն: Առավել փորձառու քննիչները, որպես կանոն, դառնում են դատախազներ, իսկ քննիչներ են նշանակվում նորավարտ շրջանավարտները:

Մյուս կարևոր խնդիրը քննիչների անկախության բացակայությունն է: Անգամ նման անհրաժեշտության բացակայության պարագայում, ըստ փորձագետների, նրանք հակված են կատարելու վերադասի հրահանգները և ինքնուրույն գործողություններ չեն ձեռնարկում՝ առանց համաձայնեցման:

Փաստաբան փորձագետներից մեկի կարծիքով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտում է նաև վարույթն իրականացնող մարմնի ինստիտուցիոնալ կախվածությունը: Այսպես, ՊՆ քննչական վարչությունը հանդիսանում է ՊՆ կառույց և միայն տվյալ փաստի ուժով չի կարող անկախ և անաչառ համարվել՝ ՊՆ համակարգում տեղի ունեցող հանցագործությունների քննության կապակցությամբ: Նույնը վերաբերում է նաև զինվորական գործերով հետաքննություն իրականացնող ՌՈ աշխատակիցներին: Այն նույնպես գտնվում է ՊՆ համակարգում, հետևաբար նույն համակարգում տեղի ունեցող հանցագործությունների առթիվ տարվող քննության օբյեկտիվության և արդարության վերաբերյալ ողջամիտ կասկածներ կարող են առաջ քաշվել:

Մյուս կողմից, սակայն, քննչական մարմնի երկակի վերահսկողության հիմնախնդրի հետ կապված հնչել է տեսակետ, որ քննչական մարմնի նկատմամբ երկակի վերահսկողությունը՝ ՊՆ և զինվորական դատախազության կողմից, դրական նշանակություն ունի: Ըստ մեկ այլ փորձագետի՝ այդպես էական հակակշիռներ են ստեղծվում. մի կառույցի վերահսկողությունը հակակշռում է մյուսի հնարավոր ճնշումը քննիչների վրա:

Փորձագետներից մի քանիսի կարծիքով՝ զինվորական հանցագործությունների քննության օբյեկտիվությունն ապահովելու հարցում ամենաեական խնդիրը, խոչընդոտը դեպքի վայրերի աղավաղումն է: Քննիչների համար անհնարին է լինում բացահայտել դեպքի իրական պատկերը, քանի որ նախքան տեղի ունեցած դեպքի մասին իրազեկված իրավապահ մարմինների դեպքի վայր հասնելը այն լիովին փոփոխված է լինում: Սա լուրջ խնդիր է գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու համար:

Զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով հետաքննության իրականացման հիմնախնդիրները. իրավական վերլուծություն: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մեջ տեղ գտած օրենսդրական կարգավորման հակասականությանը: Այսպես, դրա 56-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հետաքննության մարմիններ են հանդիսանում.

...2. գորամասերի, գորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են գորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին:

ա. ռազմական ոստիկանությունը՝ օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով...:

«Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռազմական ոստիկանությունը, օրենքին համապատասխան, ապահովում է ... հետաքննության իրականացումը զինված ուժերում՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են գորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին:

Օրենսդրական նման կարգավորումից բխում է, որ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են գորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային զինծառայողի, հետաքննություն իրականացվում է երկու մարմինների կողմից և հստակ տարանջատում դրանց լիազորությունների և գործառնությունների միջև օրենսդրորեն ամրագրված չէ:

«Ռազմական ուստիկանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական ուստիկանությունը հետաքննություն իրականացնելիս գործում է օրենքով հետաքննության մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակում¹¹⁰:

Միաժամանակ, «ՀՀ Ձինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով սահմանված է, որ հետաքննության իրականացման ժամանակ, երբ հետաքննող մարմինը գործառնա հրամանատարն է, նա ղեկավարվում է ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ¹¹¹:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը սահմանում է, որ երբ կարգապահական զանցանքի քննության ժամանակ պարզվում է, որ զինծառայողի զանցանքը պարունակում է հանցակազմի հատկանիշներ, գործառնա հրամանատարը տեղյակ է պահում կայագործի զինվորական դատախազին, անհրաժեշտության դեպքում քրեական գործ է հարուցում և նշանակում հետաքննություն¹¹², որի իրականացման պարտականությունը հրամանատարի ցուցումով դրվում է հրամանատարի՝ սոցիալ-իրավական հարցերի գծով տեղակալի վրա, ով նաև ղեկավարում է հետաքննիչների աշխատանքը¹¹³:

Այսպիսով՝ օրենսդրական կարգավորումը չի տարանջատում զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով հետաքննություն իրականացնելիս գործառնա հրամանատարի, գործառնա հրամանատարի և զինվորական հիմնարկների պետերի և ՌՌ լիազորությունների և գործառնայինների սահմանները՝ ստեղծելով իրավական կոլիզիաներ, որպիսի հանգամանքը բացասական ազդեցություն է ունենում քրեական գործով նախնական քննության որակի և արդյունավետության վրա:

Փորձագիտական կառույցների գործունեության հիմնախնդիրները

Փորձագիտական մարմինների գործունեությանն առնչվող հիմնական դժգոհությունները կապված են փորձաքննությունների եզրակացությունների ուշացման հետ: Փորձագետներն ու փորձագիտական կառույցները ծանրաբեռնվածության պատճառով ժամանակին չեն հասցնում պատրաստել իրենց եզրակացությունները:

Մասնագիտական միևնույն բնագավառը ներկայացնող փորձագետները հակված են չհակասելու մեկը մյուսի հեղինակած եզրակացություններին: Գործընկերային և անձնական հարաբերություններով պայմանավորված՝ փորձագետները խուսափում են հակասել այլ փորձագետների տված եզրակացություններին:

Հիմնախնդիրներ՝ կապված հետախուզական գործողությունների անարդյունավետության հետ

Հետախուզական գործողությունների անարդյունավետությունն ի ցույց դնող ստորև բերված օրինակն այնքան ակնառու էր, որ նշվել է միաժամանակ երկու փորձագետների կողմից:

Օրինակ N 36

¹¹⁰ Հայաստանի Հանրապետությունում հետաքննություն իրականացնող մարմինների իրավասության և լիազորությունների շրջանակը նախատեսված է ՔԴՕ-ով:

¹¹¹ «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք», հոդված 77:

¹¹² «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրություն», կետ 91:

¹¹³ Նույն տեղում, հոդված 104: Մույն օրենսդրական կարգավորումից հստակ չէ, թե ովքեր են ներգրավվում որպես հետաքննիչներ, իսկ ռազմական ուստիկանության հետաքննիչների աշխատանքի ղեկավարումն իրականացվում է համապատասխան ստորաբաժանման պետը:

Դատավորի և պաշտպանի վկայակոչած դեպքում ժամկետային զինծառայողն ինքնակամ լքել էր զորամասը և մոտ 3 տարի գտնվել էր հետախուզման մեջ: Այդ ընթացքում, մինչ հետախուզում էր հայտարարված, համաներում էր կիրառվել: Մակայն, քանի որ հետախուզման ընթացքում մեղադրյալը չէր հայտնաբերվել, նաև ինքնակամ չէր ներկայացել քննչական մարմիններին, նրա նկատմամբ համաներում չէր կիրառվել:

Պաշտպանը դատարանում վիճարկել էր հայտարարված հետախուզման իրավաչափության հարցը: Ըստ պաշտպանի՝ այն ձևական բնույթ է կրել և ոչ ոք իրականում հետախուզական գործողություններ չի իրականացրել իր պաշտպանյալի հայտնաբերման ուղղությամբ: Այսպես, մեղադրյալը շուրջ 2 տարի իր տանն է ապրել: Նույնիսկ այդ ընթացքում մատն է վիրավորած եղել, ոստիկան է այցելել նրա տուն, բացատրություն է վերցրել, թե ինչից է մատը վիրավորվել և այլն: Մակայն անգամ ոստիկանն ուշադրություն չի դարձրել անձի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքին: Ավելին, դատարանի՝ ոստիկանության տարածքային բաժիններ արված հարցումներին ի պատասխան նշվել է, որ տվյալ անձը դեռ չի հայտնվել, քանի որ, օպերատիվ տվյալների համաձայն, գտնվում է ՌԴ-ում:

Ըստ պաշտպանի՝ հետախուզում իրականացնող մարմինների թերացման պատճառով տուժել է իր պաշտպանյալը. «Եթե հետախուզական գործողությունները նորմալ իրականացնեին, նրան կհայտնաբերեին, քանի որ տանն է եղել»: Իսկ հայտնաբերման արդյունքում վերջինիս նկատմամբ կկիրառվեր համաներում:

2010թ. մեղադրյալն ինքն է ներկայացել դատարան, սակայն, քանի որ համաներումը վերջինիս վրա չի տարածվել, դատապարտվել է ազատազրկման (*փորձագիտական հարցազրույցներից*):

Դատավորի անձը և գործի քննությունը

Նախկին աշխատանքային փորձն էական ազդեցություն ունի դատավորի աշխարհայացքի ձևավորման վրա և իր մեջ ռիսկ է պարունակում հետագայում դատավորի կողմից իր գործունեության ընթացքում մեղադրական դիրքորոշում որդեգրելու առումով այն դեպքերում, երբ դատավորը երկար տարիներ աշխատել է որպես քննիչ կամ դատախազ:

Սովորաբար դատական դպրոցի թեկնածությունների ցուցակների առաջին տեղերը զբաղեցնում են դատախազության կամ քննչական մարմինների աշխատակիցները, ովքեր, դատավորի թափուր տեղի առկայության պարագայում, համապատասխան առավելություն են ստանում այլ թեկնածուների նկատմամբ: Ուստի դատավորների նշանակման՝ ներկայումս գործող սկզբունքը որոշակի ռիսկեր է պարունակում մեղադրական դիրքորոշման հակված դատավորների թվի գերակայության առումով: Հակակշռող մեխանիզմ կարող է լինել քննիչ կամ դատախազ աշխատած անձանց՝ փաստաբանների նկատմամբ ունեցած առավելության վերացումը:

Դատախազների և պաշտպանների կարիքները

Ուսումնասիրության շրջանակներում իրականացված փորձագիտական հարցազրույցներում քննարկվել են նաև դատախազների և պաշտպանների կարիքները: Դրանց

մի մասն, ինչպես կտեսնենք, պայմանավորված են ինստիտուցիոնալ և ռեսուրսային սահմանափակումներով:

Հաճախ զինվորական գործերով դատական նիստերի մասնակցող պաշտպանները տեղյակ չեն լինում զինվորական ծառայության ինչ-ինչ առանձնահատկություններից: Անհրաժեշտ է, որ պաշտպանները բավարար գիտելիքներ ունենան, օրինակ, ենթակայության կարգի, դասացուցակի, կարգացուցակի և զինծառայության այլ բաղկացուցիչների մասին:

Հանրային պաշտպանների կողմից հատկապես կարևորվում էր ՄԻԵԴ դիմելու կարգի վերաբերյալ դասընթացի անհրաժեշտությունը: Վերապատրաստման այս թեմայի առաջնահերթությունը նշվել է միաժամանակ մի քանի հարցվողների կողմից:

Սակայն փորձագետների մի մասը հանրային պաշտպանների համար Եվրոպական դատարան դիմելու կարգի ուսուցումը առաջնահերթություն չի համարում, քանի որ վերջիններիս մատուցած իրավաբանական օգնությունը ներպետական դատարաններում սահմանափակվում է զուտ արագացված դատաքննություն իրականացնելու միջնորդությամբ և ստանդարտ պաշտպանական ճառով հանդես գալով: Ուստի առավել նպատակահարմար և կարևոր է համարվում նրանց պաշտպանական ունակությունների զարգացումը և որակյալ ու արդյունավետ պատշպանություն իրականացնելու ցանկության բարձրացումը:

Հանրային պաշտպանների բազմաթիվ ծախսեր չեն փոխհատուցվում: Հատկապես տրանսպորտային ծախսերի փոխհատուցումն ակտուալ հիմնախնդիր է: Պետության կողմից տրամադրվող միջոցները բավարար են միայն հասարակական տրանսպորտից օգտվելու համար, սակայն այդ պարագայում պաշտպաններից շատերը կանգնում են նիստերից ուշանալու վտանգի առջև: Միջհամայնքային ուղևորությունների դեպքում, երբ օրվա ընթացքում մի քանի, միմյանց հաջորդող նիստեր են նշանակված, հասարակական տրանսպորտից օգտվելը ժամանակի ոչ արդյունավետ օգտագործում է նշանակում, ինչը հանգեցնում է նաև ոչ պատշաճ իրավաբանական օգնության մատուցման: Սեփական տրանսպորտային միջոցների օգտագործման պարագայում ծախսերի փոխհատուցում չի կատարվում: Հանրային պաշտպանները դժգոհություն են արտահայտել, որ ավելի շատ ճանապարհի վրա են ժամանակ ծախսում, քան պաշտպանությանը նախապատրաստվելու կամ դատական քննության:

Փաստաբան փորձագետի կարծիքով պաշտպանության որակի ապահովման խոչընդոտ է նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործի նյութերի ոչ մատչելիությունը: Նման դեպքերը հիմնականում տեղի են ունենում պաշտպանին քրեական գործի նյութերի ընտրողական տրամադրման ձևով, ինչը խոչընդոտում է պաշտպանի կողմից արդյունավետ պաշտպանություն իրականացնելուն:

Ներկայումս անցկացվող վերապատրաստումներն օգտակար են դատախազների համար, սակայն ցանկալի է նաև զինվորական հանցագործությունների հետ ուղղակիորեն չառնչվող թեմաների ներառումը դրանց շարքում: Թեև զինվորական գործերի վրա կենտրոնացմամբ ապահովվում է առավել խորը մասնագիտացում, սակայն, մյուս կողմից, այլ բնագավառների վերաբերյալ զինվորական դատախազների գիտելիքները զարգացում չեն ապրում:

Մարզային դատախազությունների պարագայում ակտուալ է նաև նյութական ապահովվածության խնդիրը: Ինչպես և հանրային պաշտպանների պարագայում, այս դեպքում ևս դատախազները սեփական տրանսպորտային միջոցներն են օգտագործում միջհամայնքային տեղաշարժման համար: Սակայն վառելիքի և ավտոմեքենայի մաշվածքի (ամորտիզացիայի) ծախսերը փոխհատուցվում են մասնակի կամ ընդհանրապես չեն փոխհատուցվում:

Այսպիսով՝ դատախազների և պաշտպանների կարիքները հիմնականում պայմանավորված են ինստիտուցիոնալ և ռեսուրսային սահմանափակումներով: Հատկապես կարևորվել է զինվորական գործերի վերաբերյալ հատուկ գիտելիքներին տիրապետելու և պաշտպանների ու զինվորական դատախազների լրացուցիչ ուսուցման անհրաժեշտությունը: Հիմնախնդիր է նաև

հանրային պաշտպանների և դատախազների կատարած բազմաթիվ ծախսերի փոխհատուցումը:

Պատժի քաղաքականություն

Փորձագետները ևս վկայակոչել են պատժի քաղաքականության որոշ օրինաչափություններ՝ կախված ամբաստանյալի զինվորական կոչումից և պաշտոնից: Վերաքննիչ դատարանի կողմից դատավճռի վերանայման հետ կապված դատավորներից մեկը մի դեպք վկայակոչեց, երբ գործամասի հրամանատարը՝ կոչումով փոխգնդապետ, ՔՕ-ի 375-րդ հոդվածով դատապարտվել էր 2,5 տարի ազատազրկման: Ամբաստանյալի կողմից բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանը պատիժը փոփոխել էր՝ այն պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով: Նշված դեպքից ելնելով՝ դատավորը համոզմունք հայտնեց, որ նույն հոդվածով շարքային զինծառայողի նկատմամբ նշանակված պատիժն ազատազրկման տեսքով չէր փոփոխվի Վերաքննիչ դատարանում: Այսինքն՝ տվյալ դեպքում պատժի վերանայման հարցում մեծ դեր է խաղացել ամբաստանյալի զինվորական կոչումը:

Մյուս կողմից, այլ փորձագետի կողմից կարծիք հայտնվեց այն մասին, որ բարձր զինվորական կոչման և պաշտոնի դեպքում բարձր է նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության հավանականությունը: Դրանց շարքում կարող են լինել, օրինակ, մասնակցությունը Ղարաբաղյան պատերազմին, ստացած պարգևատրումները, խնամքին անձանց առկայությունը և այլն:

Պատժի քաղաքականության կարևոր խնդիրներից է, ըստ փորձագետների, զինված ուժերում անպատժելիության մթնոլորտի վերացումը: Պատժի քաղաքականության շրջանակներում պատժի անխուսափելիության սկզբունքի հետևողական գործադրումն այն կարևոր քայլերից է, որ կնպաստի զինված ուժերում հանցագործությունների կանխմանն ու կանխարգելմանը:

Միաժամանակ, փորձագետների կողմից փաստվել է, որ նման մթնոլորտը ձևավորվել է նաև զինծառայողների խրախուսման և առաջխաղացման թերզարգացած համակարգի առկայությամբ: Դա արտահայտվում է հատկապես բարձրաստիճան պաշտոններում այնպիսի անձանց նշանակմամբ, ովքեր Ղարաբաղյան ազատամարտում մասնակցություն են ունեցել, սակայն չունեն համապատասխան զինվորական կրթություն, զինվորների հետ խաղաղ պայմաններում աշխատելու ունակություն:

Պատժատեսակների և պատժաչափերի խստացման միտումը: Ըստ հարցումների տվյալների՝ վերջին տարիներին պատժատեսակների և պատիժների խստացման ակնհայտ միտում է նկատվում, ինչն առավել ակներև է զինվորական հանցագործություններով: Նկատելի է տարեցտարի ՔՕ-ի 70-րդ հոդվածի կիրառման դեպքերի քանակի նվազումը: Ըստ հարցվողների՝ նշյալ հոդվածի առավել հազվադեպ կիրառությունը կարող է պայմանավորված լինել ոչ պաշտոնապես հռչակված պատժի քաղաքականությամբ:

Հարցման ենթարկված դատավորներից մեկը կարծիք հայտնեց, որ դատարանը պետք է հաշվի առնի կոնկրետ ժամանակաշրջանում կոնկրետ հանցատեսակի նկատմամբ պետության քաղաքականությունը: Ավելին, «... դատարանը պարտավոր է համահունչ լինել պետությունում տվյալ պահին որոշակի հանցատեսակների աճի դեմ ուղղված քաղաքականությանը»: Օրինակ՝ զինված ուժերում սպանության դեպքերի հետ կապված դատական պրակտիկան, ըստ փորձագետի, պետք է առավել խստացման գնա: Սակայն, միաժամանակ, ըստ փորձագետի, իշխանությունների տարանջատման սկզբունքը պետք է պահպանվի:

Ամփոփում

Զինվորական գործերով դատական քննության դիտարկման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս դուրս բերել զինվորական հանցագործությունների քննության որոշակի օրինաչափություններ, դրանց առնչությամբ օրենսդրական և պրակտիկ հիմնախնդիրներ, որոնց պատշաճ գնահատման և համարժեք քայլերի ձեռնարկման պայմաններում կարելի է արդյունավետ պայքար իրականացնել զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեմ, ինչպես նաև լիարժեքորեն ապահովել քրեական գործերի քննության ընթացքում անձի իրավունքների և ազատությունների հարգումն ու պահպանումը:

Ծրագրի շրջանակներում դիտարկված 181 գործերում ներգրավված են եղել 290 ամբաստանյալներ: Դիտարկված և ոչ մի գործով արդարացման դատավճիռ չի կայացվել: Միայն չորս ամբաստանյալների նկատմամբ են դատարանի կողմից կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտեր, և բոլոր դեպքերում էլ մեղադրանքից հրաժարվել է մեղադրողը: Մյուս բոլոր դեպքերում կայացվել են մեղադրական դատավճիռներ:

Դիտարկումների արդյունքներն արձանագրում են, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններից ամենատարածվածներն են գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը (28%), զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային հարաբերությունները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում (25%), իշխանության չարաշահումը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, ինչպես նաև անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը:

Միաժամանակ կարելի է ներկայացնել զինծառայողների կողմից ընդհանուր բնույթի հանցագործությունների կատարման որոշակի օրինաչափություններ ևս: Դրանց համամասնությունում գերակշիռ տեղ են զբաղեցնում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները (60%), որոնց հետևում են հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները (10%) և կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները (9%):

Դիտարկումների ենթարկված գործերի 50%-ում ամբաստանյալները զինվորական կոչումով եղել են շարքայիններ, նրանց հետևել են կրտսեր սերժանտները (10%) և ավագ լեյտենանտները (6%): Նվազագույն թիվ են կազմում կոչումով փոխգնդապետներն ու ավագ ենթասպաները:

Դիտարկումների արդյունքները փաստում են, որ ժամկետային պարտադիր զինծառայողների կողմից կատարված հանցագործությունները հիմնականում տեղի են ունենում ծառայության վերջին ամիսներին:

Դիտարկումների արդյունքները թույլ են տալիս առանձնացնել զինծառայողների անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման հիմնական դրսևորումները, որոնք հանգում են հետևյալին.

- Զինծառայողների նկատմամբ ծառայության ընթացքում լայնորեն կիրառվում է ազատությունից զրկելու հետ կապված կարգապահական տույժը՝ կարգապահական մեկուսարանում մեկուսացնելը և պահելը՝ խախտելով զինծառայողների ինչպես ազատության, այնպես էլ արդար դատաքննության իրավունքը: Իրավախախտումների վերաբերյալ քննության, ինչպես նաև կարգապահական տույժերի բողոքարկման մեխանիզմները օրենքով հստակ կարգավորված չեն, ինչը ևս նպաստում է պրակտիկայում դրանց լայն կիրառմանը:

- Կարգապահական մեկուսարանում մեկուսացնելու և պահելու ձևով տույժն օգտագործվում է զորամասերի և զորամիավորումների հրամանատարների կողմից հանցագործությունների կապակցությամբ հետաքննություն իրականացնելու ընթացքում՝ որպես հանցագործության մեջ կասկածվող/մեղադրվող զինծառայողների, ինչպես նաև քրեական վարույթին ներգրավված այլ զինծառայողների նկատմամբ ճնշման միջոց:

- Զինվորական հանցագործությունների քննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ առավելապես կիրառվում է հրամանատարության հսկողության հանձնելը խափանման միջոցը, սակայն անհրաժեշտ է փաստել, որ մեծ թիվ են նաև կազմում շարքային կազմի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերը: Դիտարկման ենթարկված գործերում միայն մեկ ամբաստանյալի նկատմամբ է կիրառված եղել գրավը՝ որպես խափանման միջոց:

- Այդուամենայնիվ, դիտարկումների արդյունքները փաստում են, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, օգտագործվում է ոչ միայն որպես մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու միջոց, այլև շատ դեպքերում՝ որպես մեղադրյալներին պատժելու, խոստովանական ցուցմունքներ ստանալու գործիք:

- Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ պրակտիկանում բազմաթիվ են նույն արարքի համար զինծառայողի կարգապահական և քրեական պատասխանատվության համատեղման դեպքերը՝ ի խախտումն կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի: Նման պրակտիկան լայնորեն տարածված է հատկապես զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու հանցագործության դեպքում:

Վիճահարույց է նաև զորամասերի, զորամիավորումների հրամանատարների կողմից քրեական գործով որպես հետաքննության մարմինների հանդես գալու հարցի օրենսդրական կարգավորումը: Զինծառայողի կողմից կատարված արարքում հանցագործության հատկանիշների հայտնաբերման դեպքում հարուցված քրեական գործով կատարվող քննության իրականացման պարտականությունը ըստ Զինված ուժերի կարգապահական կանոնադրության կրում է հրամանատարի սոցիալ-իրավական հարցերով տեղակալը, ով նաև ղեկավարում է հետաքննիչների աշխատանքը: Օրենսդրական կարգավորումը չի հստակեցնում, թե ինչ հետաքննիչների մասին է խոսքը գնում, ովքեր և ում կողմից են ներգրավվում կոնկրետ գործով հետաքննության իրականացմանը:

Խնդրահարույց է նաև զորամասի, զորամիավորումների հրամանատարների կողմից հանցագործության քննության ընթացքում ի պաշտոնե ունեցած և որպես հետաքննության մարմին ունեցած լիազորությունների համատեղումը: Սա հատկապես վերաբերում է քրեական գործի քննության շրջանակներում առանց իրավական հիմնավորումների զինծառայողների նկատմամբ կիրառված ազատությունից զրկելու հետ կապված տույժերին:

Զինվորական հանցագործությունների կապակցությամբ տարվող հետաքննության առնչությամբ բարձրացող մեկ այլ վիճահարույց խնդիր է ռազմական ոստիկանության և զորամասերի հրամանատարների իրավասությունների շրջանակների և սահմանների հարցը, քանի որ երկու մարմիններն էլ ՀՀ ՔԴՕ-ով օժտված են նույն լիազորություններով և տեղի է ունենում գործառույթների վերաձագծել:

Դիտարկումները վեր են հանել դատական նիստերի հրապարակայնությունը սահմանափակող մի շարք հիմնախնդիրներ: Արտագնա դատական նիստերի հաճախակի անցկացման պայմաններում չի ապահովվել դատական նիստի հրապարակայնությունը, հանրության իրազեկվածությունը դատական նիստի անցկացման, ինչպես նաև՝ նշանակված

հաջորդ դատական նիստի տեղի և ժամի վերաբերյալ, դատական նիստի ձայնագրառումը և օրենքով սահմանված խորհրդանիշերի առկայությունը:

Դիտարկված գործերից և ոչ մեկում դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշում չի կայացվել, դատարանում դատական քննությանը ներկա գտնվել ցանկացող անձի մուտքը չի սահմանափակվել, սակայն արձանագրվել են դատական նիստերի՝ նշանակված ժամանակից ուշ սկսելու բազմաթիվ դեպքեր:

Զինվորական հանցագործությունների պայմաններում որպես ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքի սահմանափակման հիմնական պատճառներ կարելի է նշել ինչպես ամբաստանյալների, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու հանգամանքը, հատկապես այն դեպքերում, երբ վերջիններս ներգրավված են լինում մարտական հերթապահության, գտնվում են վերակարգերում և այլն: Դատական քննության ժամկետների երկարաձգման հիմք է հանդիսանում նաև գորամասերի՝ դատարաններից հեռու գտնվելու հանգամանքը, երբ, հատկապես ձմեռային ամիսներին, ճանապարհների փակ լինելու պատճառով դատական նիստերի անցկացումը դառնում է անիրատեսական:

Հրապարակայնության իրավունքի և դատական իշխանության հեղինակության տեսանկյունից կարևոր են դատարանների պայմաններն ու դրանց տեղակայումը: Շենքային վատթար պայմաններ են արձանագրվել հիմնականում մարզային դատարաններում: Դրանց մի մասում ամենաակտուալ խնդիրներից է դահլիճների բացակայությունը, ինչի պատճառով դատական նիստերի մի մասը հետաձգվում կամ նշանակվածից էական ուշացումով է սկսվում:

Դիտարկման արդյունքները փաստում են, որ պրակտիկայում չի ապահովվում զինծառայողների արդյունավետ պաշտպանության իրավունքը: Դրան նպաստում է ինչպես ՀՀ գործող օրենքությունը, այնպես էլ քրեական վարույթն իրականացնող մարմինների ու պաշտպանների մոտեցումը: ՀՀ ՔԴՕ-ի 69-րդ հոդվածով որպես պաշտպանի պարտադիր մասնակցության դեպք նախատեսում է մեղադրյալի՝ ժամկետային ծառայության զինծառայող հանդիսանալը: Այսինքն՝ նախքան զինծառայողին որպես մեղադրյալ վարույթին ներգրավելը, վերջինս զրկված է պաշտպանի պարտադիր մասնակցության իրավունքից: Մինչդեռ, ինչպես պրակտիկան է ցույց տալիս, հաջորդող մեղադրանքի հիմքում հիմնականում դրվում են քննության սկզբնական փուլում ձեռք բերված տվյալները, այդ թվում՝ խոստովանական ցուցմունքները, որոնք զինծառայողը տվել է կասկածյալի կարգավիճակում: Իսկ հաշվի առնելով բանակային կյանքի առանձնահատկությունները և անձի ու հատկապես զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի հոգեբանական առանձնահատկությունները հարուցված քրեական գործին ներգրավելու կապակցությամբ, առանց պաշտպանի պարտադիր մասնակցության վերջինների նկատմամբ հոգեբանական, ինչպես նաև ֆիզիկական բռնության, խաբեության միջոցով «ցանկալի» տվյալների ստացման հնարավորությունը մեծանում է:

Դիտարկման ենթարկված գործերով ներգրավված 290 ամբաստանյալներից միայն 83-ն են նախնական քննության փուլում ունեցել պաշտպան՝ պայմանավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից պաշտպան ունենալու իրավունքը չբացատրելով, անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորության ոչ լիարժեք պարզաբանմամբ:

Դատական քննության ընթացքում էլ դեպքերի մեծ մասում չի ապահովվում ամբաստանյալների արդյունավետ պաշտպանության իրավունքը, քանի որ պաշտպանները, քրեական վարույթին ներգրավվելով դատական քննության փուլից, պաշտպանությունն իրականացնում են առանց գործի նյութերին լիարժեք տիրապետելու: Ավելին, հատկապես հանրային պաշտպանների ներգրավվածության պայմաններում նկատվում է զինվորական

կարգի դեմ ուղղված հանցագործություններով ներգրավված մեղադրյալների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի դրսևորում:

Դատական քննության ընթացքում տեղ են գտնում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքի խախտման դեպքեր, որոնք հիմնականում արտահայտվում են առանց հարգելի պատճառների չներկայացած վկաների (մեղադրանքի կողմի) ներկայությունը չապահովելու և նրանց՝ մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքները մեղադրական դատավճռի հիմքում դնելով, ինչպես նաև դատավորների՝ դատավարության մասնակիցների հետ մասնավոր շփումներով:

Դիտարկված գործերի մեծ մասում դատավարության բացակայող մասնակիցների պայմաններում դատական նիստի շարունակման միտում է նկատվում: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ գործով անցնող վկաները դատական քննության ընթացքում չեն հարցաքննվել և հրապարակվել են նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները՝ զրկելով պաշտպանության կողմին ամբաստանյալի դեմ վկայություն տված անձանց հարցաքննելու իրավունքից՝ ի խախտումն ինչպես մրցակցության, այնպես էլ ամբաստանյալի պաշտպանության իրավունքի:

Դիտարկումները փաստում են, որ դատարանները հակված են բավարարելու կողմերի ներկայացրած միջնորդությունները. արձանագրվել է կողմերի ներկայացրած միջնորդությունների մերժման 9% ցուցանիշ: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ միջնորդությունների տեսակարար կշիռը բավականին ցածր է, և կողմերը հիմնականում ներկայացնում են գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրելու, վկաներին բերման ենթարկելու, դատական քննության արագացված կարգ կիրառելու հետ կապված միջնորդություններ:

Ուշադրության արժանի փաստ է, որ դատարանի նկատմամբ ինքնաբացարկի միջնորդությունն դիտարկված 181 գործերից միայն երկուսում է ներկայացվել, որոնք երկուսն էլ մերժվել են:

Դիտարկումներով ձեռք բերված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել ամբաստանյալների անմեղության կանխավարկածի խախտման երկու հիմնական եղանակ. դատավորի կողմից կասկածի տակ են դրվել ամբաստանյալի հայտնած տեղեկությունները և դատավորն արտահայտել է իր բացասական, մեղադրական թեքումով վերաբերմունքը ամբաստանյալի նկատմամբ:

Դիտարկված գործերով ամբաստանյալներն օգտվել են ցուցմունք չտալու իրենց իրավունքից 7% դեպքերում, իսկ դատավարության կողմերի հարցերին չպատասխանելու իրավունքից՝ 21% դեպքերում: Ամբաստանյալների՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքի համատեքստում կարևոր նշանակություն է ձեռք բերում նրա նախաքննական ցուցմունքների օգտագործման խնդիրը: Դիտարկման ենթարկված դատական գործերում 67% դեպքերում դատական քննության ընթացքում հրապարակվել են ամբաստանյալի՝ նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները:

Մեծ կարևորության հարց է, որ դիտարկման ենթարկված գործերից միայն մեկում է պաշտպանության կողմը դատարանի առջև բարձրաձայնել ամբաստանյալի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնության ազդեցությամբ խոստովանական ցուցմունքների ստացման մասին: Սակայն մասնավոր զրույցները փաստում են, որ նման դեպքերը բազում են, սակայն դրանք դատարանում չեն բարձրաձայնվում՝ պայմանավորված կամ արագացված կարգի կիրառման դեպքում գործի փաստական հանգամանքները չուսումնասիրելով, կամ

ամբաստանյալների կողմից նման հայտարարություն անելը աննպատակահարմար համարելով և ավելորդ խնդիրներ չունենալու ցանկությամբ:

Դիտարկման արդյունքները փաստում են, որ զինվորական հանցագործություններով վարույթներին ներգրավված անձանց նկատմամբ դատարանի կողմից չեն կիրառվում պաշտպանության միջոցներ: Նախնական քննության ընթացքում դրանք ընտրվում են եզակի դեպքերում, հատկապես բռնությամբ զուգորդված հանցագործությունների քննության պայմաններում:

Դրան նպաստում է ինչպես ՀՀ գործող օրենսդրությունը, այնպես էլ վարույթն իրականացնող մարմնի կողմից հնարավոր ռիսկերի թյուր գնահատումը: Մասնավորապես, պաշտպանության միջոցներին վերաբերող ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ընդհանուր բնույթի պաշտպանության միջոցներ և հաշվի չի առնում զինծառայողների՝ որպես առանձնահատուկ կատեգորիայի անձանց պաշտպանության միջոցների տրամադրման հնարավորությունը՝ անտեսելով նրանց՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու ուժով պայմանավորված խոցելիությունը: Քրեական գործով վարույթի ընթացքում ամենակիրառական պաշտպանության միջոցը՝ զինծառայողի ծառայության վայրը փոփոխելը, հստակ օրենսդրական կարգավորում չունի:

Դատարանում զինծառայող վկաների պաշտպանվածության տեսանկյունից խնդրահարույց է դատարաններում վկաներին առանձնացնելու համար նախատեսված սենյակների բացակայությունը: Մինչ հարցաքննվելը զինծառայող վկաները սպասում են դատարանի միջանցքներում, որտեղ նրանց հետ շփվում են կողմնակի անձինք:

Դիտարկումների ընթացքում, հատկապես մարզային դատարաններում, արձանագրվել են վկաների հետ քրեական վարույթին չմասնակցող անձանց շփումների, վերջիններին սպառնալու, նույնիսկ քաշքշուկների դեպքեր: Նման դեպքերում դատական կարգադրիչների ծառայությունը չի կարողանում իր առջև դրված խնդիրները պատշաճորեն իրականացնել՝ ի ապահովումն անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության:

Դիտարկումների ենթարկված գործերից 78%-ը տեղի է ունեցել դատական քննության արագացված կարգով: Դիտարկումները ցույց են տալիս, որ արագացված կարգի կիրառումը, որպես կանոն, դատախազների, դատավորների և պաշտպանների միջև ձեռք բերված փոխադարձ համաձայնության այդպիսի է, որի ընթացքում ոչ միշտ են հաշվի առնվում ամբաստանյալների օրինական շահերը:

Արագացված դատական քննության կարգ կիրառելու նախաձեռնությունը մեծամասամբ պատկանում է պաշտպաններին, այլ ոչ թե ամբաստանյալներին, ովքեր առանց գործի նյութերին պատշաճորեն ծանոթանալու ամբաստանյալներին ուղղորդում են արագացված կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնել՝ նշելով, որ նման դեպքերում նշանակված պատիժը մեղմ կլինի կամ այն պայմանականորեն չի կիրառվի:

Դատարանի կողմից արագացված կարգի կիրառման պարտադիր պայմանների առկայության ստուգումը կրում է ձևական բնույթ: Դատավորները հաջորդականությամբ, հապճեպորեն ուղղում են հարցերը, որոնց՝ պաշտպանի հուշումով ամբաստանյալի «այո» պատասխանը ստանալուց հետո որոշվում է դատական քննությունն իրականացնել արագացված կարգով:

Հատկանշականն այն է, որ դատարանների կողմից դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդության մերժման դեպք դիտարկումների արդյունքում չի արձանագրվել, իսկ արագացված կարգի կիրառության դեմ մեղադրողն առարկել է միայն մեկ դեպքում:

Արագացված կարգով դատական քննություն իրականացնելու վերաբերյալ հարուցված միջնորդությունների քննության ընթացքում տուժողների դիրքորոշումը չի ճշտվում, այլ պարզվում է միայն հանցագործությամբ պատճառված վնասի կապակցությամբ վերջինների կողմից քաղաքացիական հայց ներկայացված լինելու հանգամանքը:

Դիտարկումները վեր են հանել պատժի քաղաքականության որոշ օրինաչափություններ: Արձանագրվել է փոխկապվածություն՝ կիրառված խափանման միջոցների և նշանակված պատիժների միջև: Այն դեպքերում, երբ մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը, որպես կանոն, ամբաստանյալի նկատմամբ պատիժ է նշանակվում որոշակի ժամկետով ազատազրկումը:

Այն դեպքերում, երբ որպես խափանման միջոցներ ընտրված են եղել ստորագրությունը չհեռանալու մասին և կալանավորումը, ազատազրկված անձանց թիվը հասնում է համապատասխանաբար 70%-ի և 76%-ի, մինչդեռ հրամանատարության հսկողությանը հանձնելու պարագայում ազատազրկված անձանց թիվն ընդամենը 39% է:

Բացահայտվել են որոշ օրինաչափություններ նաև դատական նիստի անցկացման ընթացակարգի և պատժի միջև: Այսպես, եթե ընդհանուր կարգի պարագայում ազատազրկումը կիրառվում է 73% դեպքերում, ապա արագացված կարգի պարագայում՝ միայն 47%-ում: Դրա փոխարեն արագացված կարգի պարագայում աճում է կալանքի կիրառության համամասնությունը՝ 32%՝ ընդհանուր կարգի 8%-ի դիմաց:

Արագացված կարգի կիրառության պարագայում էականորեն աճում է կալանքի նշանակման հավանականությունն՝ ի հաշիվ ազատազրկման, որն էապես նվազում է:

Որոշ օրինաչափություններ են նկատվում ամբաստանյալներին վերագրվող արարքի որակումների և դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու միջև: Դիտարկման ենթարկված առավել տարածված հանցագործություններից 361.1 և 359.1-րդ հոդվածներով դատապարտված անձանց շրջանում պատիժը պայմանականորեն չի կիրառվում յուրաքանչյուր 7-րդ ամբաստանյալի նկատմամբ:

Որոշ արարքների պարագայում պատիժը պայմանականորեն չկիրառելու ցուցանիշը հավասար է գրոյի: Օրինակ, ՔՕ-ի 363-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում դիտարկված գործերից և ոչ մեկով ամբաստանյալը պայմանականորեն չի ազատվել պատժի կրումից:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի օրենսդրական կարգավորումը բավարար և որոշակի չէ, նախատեսված չեն անձին նշանակված պատժից ազատելու հստակ չափանիշներ և դատարանին տրված է հայեցողության լայն շրջանակ, ինչը հանգեցնում է պրակտիկայում դրա կամայական կիրառման: Կարգավորված չէ նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի հետագա վարքագծի նկատմամբ պատշաճ հսկողության իրականացումը, որպիսի պայմաններում հնարավոր չէ հանցագործություն կատարած անձի ուղղումը և վերջինիս կողմից նոր հանցագործությունների կատարման բացառումը:

ՀՀ ՔՕ-ի տարբեր հոդվածներով նախատեսված սանկցիաների ուսումնասիրությունը փաստում է, որ զինվորական հանցագործությունների համար օրենքով նախատեսված պատիժներն անհամաչափորեն մեղմ են՝ ի համեմատություն դրանց հանրային վտանգավորության աստիճանի:

Խնդրահարույց է նաև կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի օրենսդրական կարգավորումը ինչպես տվյալ պատժատեսակին ենթակա անձանց սուբյեկտային կազմի, այնպես էլ պատժատեսակի կատարման համար պատասխանատու մարմնի տեսանկյունից: Ըստ ներկայիս օրենսդրական կարգավորման՝ տվյալ պատժատեսակը կարող է

կիրառվել ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ և դրանում որևէ բացառություն նախատեսված չէ պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող զինծառայողների համար կամ պայմանավորված զինծառայողների զինվորական կոչումներով, մինչդեռ պրակտիկայում կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժատեսակի ենթարկվում են *ժամկետային պարտադիր զինվորական ծառայության* շարքային կազմի զինծառայողները միայն:

Առաջարկություններ

Ա. Փորձագետների կողմից ներկայացված առաջարկությունները

– ՀՀ ՔՕ «Ձինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունները» գլխում ընդգրկված հոդվածներով նախատեսել նաև ազատազրկման հետ կապ չունեցող պատժատեսակներ, ինչը պատժի ընտրության և անհատականացման առավել ճկունություն կապահովի¹¹⁴:

– ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կալանքի կիրառման սահմանափակում հանդիսացող «մինչև 8 տարեկան երեխա ունենալու հանգամանքը վերաբերելի դարձնել միայն կանանց համար: Այսինքն՝ հոդվածի մասում առկա «անձանց» բառը փոխարինել «կանանց» բառով:

– ՀՀ ՔՕ 361 հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժատեսակներին՝ կալանքին և կարգապահական գումարտակում պահելուն, ավելացնել այլ պատժատեսակներ ևս¹¹⁵:

– Գրավը նախատեսել որպես խափանման առանձին տեսակ, այլ ոչ կալանավորման այլընտրանք¹¹⁶:

– Նախատեսել դատախազի՝ քննչական գործողություններ կատարելու իրավունքը¹¹⁷:

– ՀՀ ՔԴՕ-ում նախատեսել Վերաքննիչ դատարանում կալանավորման մասին որոշման դատական ստուգմանը մեղադրյալի պարտադիր մասնակցությունը¹¹⁸:

¹¹⁴ Մի շարք հոդվածներով որպես պատիժ նախատեսվում է միայն ազատազրկում: Փորձագետի կողմից որպես օրինակ նշվեց ՔՕ-ի 375-րդ հոդվածը, որով որպես պատիժ նախատեսված է նվազագույնը 2 տարի ժամկետով ազատազրկում: Մինչդեռ, շատ են դեպքերը, երբ ամբաստանյալի անձի բնութագրից, մեղմացուցիչ հանգամանքներից և դեպքի հանգամանքներից ելնելով՝ ազատազրկումը նպատակահարմար և հիմնավորված չէ անձի համար: Հետևաբար, անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան անձի նկատմամբ կիրառել ազատազրկման հետ կապ չունեցող այլ պատիժ, ինչպես նաև փոփոխել պատժաչափի նվազագույն շեմը՝ այն առավել իջեցնելով:

¹¹⁵ Նման առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ կալանք պատժատեսակը չի կարող նշանակվել մինչև 8 տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ, իսկ կարգապահական գումարտակում պահելը որպես պատիժ չի կարող կիրառվել զինվորական ծառայությունից արձակված անձանց նկատմամբ, ինչի հետևանքով պրակտիկայում կարող են առաջանալ իրավական կագուսներ: Փորձագետը որպես օրինակ նշեց Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննված մի դեպք, որտեղ ամբաստանյալն իր խնամքին ուներ մինչև 8 տարեկան երեխա և արձակվել էր զինվորական ծառայությունից պահեստագոր: Այսինքն՝ դատարանը չէր կարող նշանակել տվյալ հոդվածով օրենքով նախատեսված պատժատեսակներից և ոչ մեկը՝ ոչ կալանք, ոչ կարգապահական գումարտակում պահել: Իրավական կագուսի պատճառով տվյալ դեպքում դատարանն ամբաստանյալին մեղավոր էր ճանաչել՝ առանց պատիժ նշանակելու:

¹¹⁶ Քանի որ այլընտրանքային խափանման միջոցի պայմաններում դատարանները գրավի կիրառման հարցին անդրադառնում են անձին կալանավորման ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո միայն: Ի հիմնավորումն գրավի կիրառման՝ դատարանները ստիպված են լինում բերել փաստարկներ, որոնցով պետք է հերքեն ի սկզբանե անձին անազատության մեջ պահելու որոշման հիմքում դրված փաստարկները: Առաջանում է դատարանի՝ սեփական որոշումներին տրամաբանորեն հակասելու հավանականություն, ինչն էլ ստիպում է շատ դատավորների խուսափել գրավի կիրառությունից, անգամ եթե գրավի միջնորդությունը ներկայացվել է և՛ պաշտպանական, և՛ մեղադրող կողմից: Մինչդեռ, եթե գրավը լինի ոչ թե այլընտրանք կալանքին, այլ խափանման միջոցի առանձին տեսակ, դրա կիրառության նախադրյալներն էականորեն կընդլայնվեն:

¹¹⁷ Ըստ փորձագետ դատախազի՝ դա անհրաժեշտ է, քանի որ գործի քննության համար «անձնական» պատասխանատվություն կրում է դատախազը: Օրինակ՝ շատ կարևոր է, որպեսզի դատախազը մեղադրյալին անձամբ հարցաքննելու իրավունք ունենա, առնվազն հասկանալու համար, թե նա ինչպիսի անձնավորություն է:

¹¹⁸ Ըստ փորձագետի՝ ՔԴՕ-ի 288-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է Վերաքննիչ դատարանում կալանավորման մասին որոշման դատական ստուգմանը մեղադրողի և պաշտպանի մասնակցությունը: Հոդվածը լռում է մեղադրյալի ներկայության մասին: Օրենքի նման կարգավորումը հակասում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին: Քանի որ խափանման

– Բոլոր տեսակի առանձնացված քննչական մարմինները հարկավոր է միավորել դատախազության ներքո: ՊՆ, հարկային կամ ոստիկանության համակարգերում քննիչներ չպետք է լինեն: Քրեական գործի քննությունը նախարարության կամ հարկային մարմինների գործառույթ չպետք է համարվի:

– Նախաքննական գործողությունների հետ կապված խախտումները բացառելու համար ստեղծել անկախ մարմին, որը պետք է իրավասու լինի ահազանգերի հիման վրա անհապաղ գործողություններ ձեռնարկել: Ընդ որում, միջամտության հնարավորությունը պետք է լինի նախքան քրեական գործի հարուցումը, քանի որ մինչ այդ հնարավոր են անձի իրավունքների այնպիսի խախտումներ, որոնք կանդրադառնան քրեական գործի հետագա վարույթի վրա:

– Զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերը չմակագրել կին դատավորներին: Ավելին, այդ գործերը պետք է քննվեն այն դատավորների կողմից, ովքեր զինվորական ծառայություն են անցել և պատկերացում ունեն դրա առանձնահատկությունների վերաբերյալ:

– Անհրաժեշտ է դատարաններում ունենալ զինվորական գործերի քննությամբ մասնագիտացված դատավորներ: Ներկայումս որոշ դատարաններում առկա է դատավորների համանման մասնագիտացում, որը, սակայն, ոչ ֆորմալ (ոչ պաշտոնական) բնույթ ունի:

Բ. Կազմակերպության առաջարկությունները

Ազգային ժողով

– Օրենսդրորեն¹¹⁹ նախատեսել այնպիսի կարգապահական տույժերի տեսակներ, որոնք կապված չեն լինի զինծառայողների անձնական ազատության իրավունքից զրկելու հետ, իսկ նման կարգապահական տույժի նախատեսման դեպքում՝ նախատեսել համապատասխան ընթացակարգեր՝ ի ապահովումն արդար դատաքննության իրավունքի երաշխիքների:

միջոցի ընտրությունը քաղաքացու իրավունքների սահմանափակման հետ կապված քննարկում է ենթադրում, ապա անձի ներկայությունը, ում իրավունքի սահմանափակումը քննարկվում է, պարտադիր է:

¹¹⁹ Գործող «ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը» հաստատվել է ՀՀ Կառավարության թիվ 247 որոշմամբ 1996թ. օգոստոսի 12-ին: 2012թ. մարտի 21-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2012թ. ապրիլի 28-ին ուժի մեջ է մտել «ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքը: Դրանով մեկուսացում կարգապահական տույժի փոխարեն նախատեսված է «կարգապահական վաշտ ուղարկելը» տաս օրից մինչև մեկ ամիս ժամկետով կարգապահական տույժի տեսակը, որն ի կատար է ածվում կայագորային սկզբունքով ստեղծվելիք կարգապահական վաշտերում: Կարգապահական վաշտերում իրականացվում է օրվա խստացված կարգացուցակով ծառայություն, որը սահմանվում է ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով: «Կարգապահական վաշտ ուղարկելը» կարգավորումը թերի է և հակասում է ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքին, որով նախատեսվում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, կարգը և պայմանները նախատեսվում են **բացառապես օրենքներով**: Հետևաբար, կարգապահական վաշտում խստացված կարգացուցակով ծառայության պայմանները պետք է սահմանվեն օրենքով՝ ապահովելով դրա թափանցիկությունը՝ տալով հնարավոր կամայականությունից երաշխիքներ: Միաժամանակ, օրենքով սահմանված չէ, թե արդյոք կարգապահական վաշտում անցկացված ծառայության ժամկետը ընդգրկվում է պարտադիր զինվորական ծառայության ժամկետում, թե ոչ: Մույն հարցը կարևորվում է նրանով, որ կարգապահական վաշտ ուղարկելուն իր բնույթով նմանվող կարգապահական գումարտակում պահելու ձևով քրեական պատժի ժամկետը չի հաշվարկվում պարտադիր ժամկետային ծառայության ժամկետում, և զինծառայողը պատիժը կրելուց հետո վերադառնում է ծառայության: Միաժամանակ, օրենքով հստակեցված չէ, թե **մեկուսացման** ինչպիսի պայմաններում է անցնելու ծառայությունը կարգապահական վաշտում՝ ի բացառումն դրա «քրեական» պատիժ որակվելու (Engel and others v. Netherland, ECHR, 8 June 1976): Տվյալ խնդրի կարգավորումը նույնպես պետք է հստակեցվի օրենքով, որպեսզի ապահովվի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի իրացումը:

– Օրենսդրորեն բացառել զինծառայողի քրեական պատասխանատվությունը, եթե վերջինս նույն արարքի համար արդեն ենթարկվել է իր բնույթով «քրեական» կարգապահական պատասխանատվության:

– Ընդլայնել ՔԴՕ-ով նախատեսված խափանման միջոցների ցանկը՝ ներառելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ տնային կալանքը, իրավասու պետական մարմին պարբերական այցելություններ կատարելը, ստորագրություն որոշակի անձանց չտեսակցելու և որոշակի վայրեր չայցելելու մասին և այլն:

– Օրենսդրությամբ պաշտպանի պարտադիր մասնակցություն նախատեսել զինծառայող *կասկածյալների* համար:

– Օրենսդրությամբ սահմանել զինծառայող, հատկապես պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող տուժողների և վկաների համար պարտադիր անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

– Օրենսդրությամբ նախատեսել պաշտպանության առանձին միջոցներ քրեական դատավարությանը մասնակցող զինծառայողների համար՝ կոչված ապահովելու զինծառայողի անվտանգությունը ինչպես գործով ողջ քննության ընթացքում, այնպես էլ դրանից հետո:

– Օրենսդրությամբ տարանջատել մեղքի հաստատման և պատժի նշանակման հարցերը, որպիսի պայմաններում արդարացի պատժի նշանակման հարցերը դարձնել դատական քննության ընթացքում ինքնուրույն համապարփակ քննության առարկա:

– Օրենսդրությամբ հստակեցնել պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերն ու նախապայմանները, ինչպես նաև առանց պատիժը կրելու ամբաստանյալի ուղղման հնարավորության գնահատման չափանիշները՝ նախատեսելով դատարանի իրավաչափ հայեցողության իրականացման երաշխիքներ:

– Պատժից պայմանականորեն ազատված անձի վարքագծի նկատմամբ նախատեսել վերահսկողության արդյունավետ միջոցներ՝ վերջինիս կողմից նոր հանցագործությունների կատարումը բացառելու և հասարակական անվտանգությունն ապահովելու համար:

– Օրենսդրությամբ հստակեցնել կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի ենթակա զինծառայողների սուբյեկտային կազմը:

– Նախատեսել առավել գործուն մեխանիզմ և թափանցիկ կարգ կարգապահական գումարտակում պատժի կրման և ծառայության համատեղման առնչությամբ:

– Բացառել պաշտպանության բնագավառի պետական լիազորված մարմնի ուղղակի վերահսկողությունը կարգապահական գումարտակում պահելու պատժատեսակի կատարման նկատմամբ:

– Օրենսդրությամբ հստակեցնել զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև գորամասի տարածքում կատարված կամ ժամկետային ծառայության զինծառայողներին վերագրվող արարքների վերաբերյալ գործերով հետաքննություն իրականացնող ռազմական ոստիկանության և զորամասերի, զորամիավորումների հրամանատարների և զինվորական հիմնարկների պետերի լիազորությունների և իրավասությունների շրջանակը՝ բացառելով երկու մարմինների կողմից նույն իրավասությունների և պարտականությունների կրկնությունը:

– Օրենսդրությամբ կարգավորել արտագնա դատական նիստերի իրականացման կարգը, դրանց իրականացման հնարավոր վայրերի շրջանակը, դատարանի և համապատասխան մարմինների պարտականությունները կողմերի՝ արդար դատաքննության իրավունքի (հրապարակային դատական քննություն, մրցակցության և կողմերի հավասարության պայմանների ապահովմամբ դատական քննություն, ողջամիտ ժամկետում դատական քննություն և այլն) ապահովման ուղղությամբ:

Պաշտպանության նախարարություն

– Ջորամասերում և ռազմական ստորաբաժանումներում անձնակազմի հետ տարվող աշխատանքների համար պատասխանատու անձանց ուշադրությունը հրավիրել զինվորական ծառայության վրա ազդող արտաքին գործոններին, զինծառայողի անձի հոգեբանական առանձնահատկություններին և սոցիալական բնութագրիչներին (տարիք, կրթություն, ամուսնական կարգավիճակ, սոցիալական խավ), ինչպես նաև՝ զինվորական կոլեկտիվների արդյունավետ կառավարման խնդիրներին: Ի իրականացումն վերջին խնդրի՝ երաշխավորել տեղեկատվության ազատ և անխափան փոխանցումը զինվորական աստիճանակարգի տարբեր օղակների միջև:

– Զինված ուժերում ներդնել «սոցիալական աշխատող» մասնագետի ինստիտուտը¹²⁰:

– Հաշվի առնելով զինված ուժերի ստրեսոգեն միջավայրային առանձնահատկությունները՝ կազմավորել հատուկ հանձնախումբ՝ համալրված հոգեբան մասնագետներով՝ լիազորելով վերջինին որոշակի հաճախականությամբ այցեր իրականացնելու զինվորական ծառայության վայրեր՝ ստուգելու բանակում տիրող ընդհանուր հոգեբանական վիճակը, զինծառայողների մոտ հայտնաբերելու հնարավոր հոգեբանական խեղումներ և/կամ ձեռնարկելու կանխարգելման միջոցներ դրանց առաջացումը կանխելու համար: Ոչ ադեկվատ վարքագիծ դրսևորող, ծանր հոգեբանական վիճակում գտնվող անձանց տրամադրել խորհրդատվություն և անհրաժեշտության դեպքում՝ բուժում, մեկուսացնել և կազմակերպել հոգեկան հիվանդության կամ դրա տարբեր ունեցող զինծառայողների բուժումը, այդ թվում՝ ստացիոնար եղանակով:

– Զինծառայողների իրավաբանական գիտելիքների բարձրացման և հնարավոր իրավախախտումների հետևանքները բացատրելու նպատակով կազմակերպել ուսուցողական դասընթացներ՝ դրանց շրջանակներում փոխանցելով գիտելիքներ մարդու իրավունքների և դրանց ապահովման մեխանիզմների, զինծառայողի կարգավիճակից բխող իրավական երաշխիքների վերաբերյալ, ինչպես նաև՝ քրեական օրենսդրության, մասնավորապես՝ զինվորական հանցագործությունների, դրանց համար նախատեսված պատիժների, վկայի, տուժողի և մեղադրյալի իրավունքների վերաբերյալ:

– Երաշխավորել առանց իրավական հիմքերի և պայմանների պահպանման քրեական դատավարությանը մասնակցող զինվորական ծառայության ծառայողների ազատության իրավունքի սահմանափակման դեպքերի բացառումը:

– Ապահովել զորամասում կամ ռազմական ստորաբաժանման մեջ տեղի ունեցած հանցագործության կապակցությամբ քրեական դատավարությանը ներգրավված անձանց (ամբաստանյալներ, տուժողներ, վկաներ) անվտանգությունը, զերծ պահել վերջիններին հնարավոր ճնշումներից, բռնություններից ինչպես ծառայակիցների, այնպես էլ վերադաս

¹²⁰ Այս կերպ կապահովվի զինծառայողների իրավունքների խախտման վերաբերյալ տեղեկատվության անընդհատությունն ու միջամտության շարունակականությունը: Շարունակական մասնագիտական միջամտությամբ կապահովվի իրավունքների պաշտպանության առավել լայն շրջանակ, քան այդ թույլ են տալիս մեկանգամյա այցելությունները զորամաս կամ կարճատև ու իրավիճակային միջամտությունները: Կապահովվի իրավունքների վերականգնման մասնագիտական և արհեստավարժ մոտեցում, այդ թվում՝ գիտական հիմնավորմամբ մեթոդների կիրառություն (սոցիոմետրիկական մեթոդ, կոնֆլիկտների հաղթահարման միջոցառումներ և միջնորդության տեխնոլոգիաներ, խմբային թերապիայի տեխնոլոգիաներ, հաղորդակցման և փոխհարաբերությունների կարգավորման ուսուցողական գործընթացներ և այլն): Տևական և արհեստավարժ մասնագիտական ներգործության շնորհիվ զինվորական կոլեկտիվներում կբարելավվի սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, ծառայակիցների և սպայական կազմի միջև կձևավորվեն վստահելի փոխհարաբերություններ, կնվազի կոնֆլիկտների և իրավախախտումների քանակը:

հրամանատարության կողմից՝ անկախ վերջինների նկատմամբ պաշտպանության միջոց կիրառված լինելու հանգամանքից:

Դատական իշխանություն

– Կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս բացառապես գնահատել դրա իրավական և փաստական հիմքերը:

– Մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարվելու ցանկացած դեպքում պարզել հրաժարման պատճառներն ու շարժառիթները: Բացառել անձի կողմից պաշտպանից հարկադրական հրաժարման դեպքերը, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնի հորդորի կամ դրամական միջոցների սղության պատճառով:

– Ձեռնարկել դատական քննությանը վկաների պարտադիր ներկայության ապահովման ուղղված քայլեր:

– Ձեռնարկել միջոցներ դատական քննության ընթացքում վկաների, հատկապես պետության հսկողության տակ գտնվող զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների՝ անմիջական հարցաքննության ապահովման համար:

– Բացառել դատարանում չհարցաքննված վկաների նախաքննական ցուցմունքների հիման վրա դատավճռի կայացումը¹²¹:

– Բացառել զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի կողմից առանց պաշտպանի տրված ցուցմունքների օգտագործումը, եթե պաշտպանության իրավունքի սահմանափակումը պայմանավորված չի եղել բացառիկ հանգամանքներով, նույնիսկ եթե դրանք ձեռք են բերվել առանց ճնշումների գործադրման¹²²:

– Անթույլատրելի համարել ապօրինի պահվող անձի կողմից տրվող բացատրությունների/ցուցմունքների օգտագործումը:

– Բոլոր դատարաններում առանձնացնել սենյակներ՝ ի ապահովումն հասարակության ներկայացուցիչներից գործի վարույթին ներգրավված վկաների մեկուսացման:

– Կարգապահական տույժի ենթարկել այն կարգադրիչներին, ովքեր չեն արգելել այլ անձանց մուտքը վկաների համար նախատեսված սենյակներ:

– Պատասխանատվության արդյունավետ միջոցներ ձեռնարկել վարքագծի և էթիկայի կանոնները խախտող դատավորների նկատմամբ:

– Ապահովել ներկայացրած միջնորդությունների մերժումների պատշաճ պատճառաբանվածությունը:

– Ձեռնպահ մնալ դատավարության կողմերի հետ *ex parte* շփումներ ունենալու ձևավորված պրակտիկայից:

– Դատական քննության արագացված կարգի կիրառման միջնորդության քննության ժամանակ ըստ էության պարզել արագացված կարգի կիրառման բոլոր պայմանների առկայությունը՝ արագացված կարգով դատական քննության անհարկի իրականացման դեպքերը: Բացառել դատաքննության արագացված կարգի կիրառման դեպքում սովերային համագործակցությունը՝ այդ գործընթացը համապատասխանեցնելով օրենքի բուն էությանն ու տրամաբանությանը:

– Դատական քննության արագացված կարգի կիրառման հարցի քննության ընթացքում հաշվի առնել տուժողի կարծիքը՝ պրակտիկայում իրացնելով Վճռաբեկ դատարանի կողմից

¹²¹ Melnikov v. Russia, App. 23610/03, 14 January, 2010.

¹²² Pishchalnikov v. Russia, App. 7025/04, 24 September, 2009.

արտահայտված իրավական դիրքորոշումը՝ ի ապահովումն տուժողի արդար դատաքննության իրավունքի պրակտիկ իրացման:

– Դատական քննության արագացված կարգի կիրառման վերաբերյալ որոշում ընդունելուց հետո ամբաստանյալի կողմից հանցագործության փաստական հանգամանքների, հանցագործության կատարման մեջ իր մեղավորությունը չընդունելու կամ մասնակի ընդունելու դեպքում ապահովել ընդհանուր կարգով դատական քննության իրականացումը:

– Ապահովել պատիժների կիրառման պրակտիկայի միասնականությունը՝ թե՛ պատժի նշանակման, թե՛ պատիժը պայմանականորեն չկիրառելու առումով:

– Օրենսդրությամբ սահմանել զորամասերում արտագնա դատական նիստերի անցկացման բացառիկ դեպքերը, պայմանները և կանոնակարգել ընթացակարգը:

– Ապահովել արտագնա դատական նիստերում կողմերի արդար դատաքննության իրավունքի բոլոր պահանջների պահպանումը: Արտագնա դատական նիստ անցկացնել այն դեպքերում, երբ ապահովված է բոլոր ցանկացողների մուտքի հնարավորությունը, ողջամիտ ժամկետներում հանրության իրազեկվածությունը դատական նիստի անցկացման վայրի և ժամի վերաբերյալ, դատական նիստի ձայնագրառումը և սահմանված խորհրդանիշերի առկայությունը:

– Բացառել առանց պատշաճ իրավական ընթացակարգերի պահպանման ՀՀ պետական սահմաններից դուրս դատական նիստերի անցկացումը:

– Մարզային դատարաններում ապահովել ձայնագրառող համակարգերի տեղադրումը:

– Բարելավել մարզային դատարանների շենքային պայմանները, այդ թվում՝ ապահովել դատարանի շենքի տարանջատվածությունը պետական մարմինների այլ կառույցների շենքերից, հատկապես դատախազությունից և ոստիկանությունից:

– Ջորամասերում տեղի ունեցող արտագնա դատական նիստերի վերաբերյալ ապահովել հասարակության լայն իրազեկվածությունը այնպիսի ողջամիտ ժամկետում, որ ապահովվի բոլոր ցանկացողների ներկայությունը: Ապահովել հասարակության ներկայացուցիչների անարգել մուտքը արտագնա կարգով ընթացող քրեական գործի դատական քննությանը:

Նախնական քննություն իրականացնող և դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններ

– Ապահովել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի իրացումը՝ բացառելով նույն արարքի համար իր բնույթով «քրեական» կարգապահական պատասխանատվության ենթարկված զինծառայողների քրեական հետապնդումը:

– Ապահովել մինչդատական վարույթի ընթացքում զինծառայող մեղադրյալների պաշտպանի պարտադիր մասնակցության իրավունքը:

– Պրակտիկայում կիրառել պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կասկածյալ/մեղադրյալ սպայի նկատմամբ՝ որպես դատավարական հարկադրանքի միջոց, եթե բավարար հիմքեր լինեն ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխտչընդոտի գործի քննությանը:

– Ձեռնարկել միջոցներ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական գործի մասնակիցների նկատմամբ ճնշումները բացառելու համար՝ պրակտիկայում ապահովելով նրանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառումը:

– Բացառել ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների կիրառումը որպես պատժիչ միջոց մեղսագրվող հանցագործության մեջ իր մեղքը չընդունող կամ լռելու իր իրավունքն իրացնող մեղադրյալի նկատմամբ:

- Ապահովել կասկածյալի և մեղադրյալի լռելու իրավունքի իրացումը, պաշտպանի ներգրավումը գործով վարույթի ամենավաղ փուլերից:
- Կազմակերպել վարույթն իրականացնող մարմինների աշխատակիցների (դատախազներ, քննիչներ, հետաքննության մարմինների աշխատակիցներ) մասնագիտական պատրաստվածության բարձրացման դասընթացներ:

Փաստաբանների պալատ, հանրային պաշտպանի գրասենյակ

- Կազմակերպել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների առնչությամբ փաստաբանների, հատկապես հանրային պաշտպանների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ: Փաստաբանների շրջանում իրականացնել նաև դասընթացներ մարդու իրավունքների միջազգային չափանիշների վերաբերյալ:
- Ձեռնարկել միջոցառումներ հանրային պաշտպանների նկատմամբ հասարակական վստահության բարձրացման ուղղությամբ:
- Նախատեսել վերահսկողության և պատասխանատվության գործուն մեխանիզմներ պետության կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնություն մատուցող փաստաբանների՝ հանրային պաշտպանների կողմից իրավաբանական ծառայությունների մատուցման և պաշտպանության իրականացման ընթացքում տեղ գտած թերացումների նկատմամբ:
- Գործնականում ապահովել հանրային պաշտպանների ծախսերի (հիմնականում՝ տրանսպորտային միջոցներից օգտվելու համար կատարվող) լիարժեք փոխհատուցումը: Կատարած ծախսերի փոխհատուցման առավել ճկուն մեխանիզմներ նախատեսել:

Հավելված

Ձեկույցը ներքին փորձագիտական քննարկման է ուղարկվել իրավունքի ոլորտի հեղինակավոր մասնագետներին: Ստացված կարծիքների համար կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում Նարինե Գասպարյանին, Հրայր Ղուկասյանին, Ռուբեն Մելիքյանին, Դավիթ Խաչատուրյանին, Արթուր Սաքունցին:

Արտաքին փորձագիտական կարծիքների ստացման նպատակով զեկույցը տրամադրվել է ՀՀ Զինվորական դատախազությանը, ՀՀ Վճռաբեկ դատարանին, ՀՀ Պաշտպանության նախարարությանը: Նշված կառույցներից գրավոր արձագանք է ստացվել **ՀՀ Զինվորական դատախազությունից և ՀՀ Պաշտպանության նախարարությունից, որոնք էլ ներկայացնում ենք ստորև:**